

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՋԱՐ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԻ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ  
**Ն Յ Ո Ւ Թ Ե Ր**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1986



800 (479, 25)

99

ՀԱՅԱՍՏԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՋՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼԵՋՎԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

ՀԻՆԿԵՐՈՐԴ ԳԻՏԱԴՐՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

27-30 մայիսի, 1986 թ.

Ծաղկաճոր

A II  
73760



ՀԱՅԱ.ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1986

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի  
գիտությունների որոշմամբ

Печатается по решению ученого совета Института языка  
АН Арм. ССР

Институт языка им. Р.Ачаряна АН Арм. ССР

МАТЕРИАЛЫ ПЯТОЙ РЕСПУБЛИКАНСКОЙ НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ  
МОЛОДЫХ ЛИНГВИСТОВ

27-30 мая 1986г.

Цахкадзор

© Издательство АН Арм. ССР  
Ереван 1986



ՀԻՄՆԱՆՅՈՒԹԻ ԶԵԱԿԱՆՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ  
ՍԿՋԲՈՒՆԸ

Լեզվում բովանդակությունն ու արտահայտությունը սերտորեն կապված են իրար հետ, որոշվում են իրարով: Բովանդակության և արտահայտության կապակցումը՝ բովանդակության արտահայտումը և արտահայտության բովանդակավորումը, կառարկում է նրանց հիմնանյութերի ձևավորման ընթացքում:

Հիմնանյութի և ձևի փոխհարաբերության մեջ գործունե եզրը ձևն է, որը որոշում ու կազմակերպում է ոչ միայն իր և հիմնանյութի, այլև բովանդակության և արտահայտության փոխհարաբերությունը: Բովանդակության և արտահայտության՝ միմյանցից թարբեր հիմնանյութերն իրար են միանում ձևերի գուգահեռության շնորհիվ:

Ջուգաբանական նշանային համակարգերում, որոնցում բովանդակության և արտահայտության հիմնանյութերը ստանում են նույն ձևը, ժողի է ունենում նրանց միախառնում: Ջուգաբանական նշանը, ուրեմն, կարելի է վերլուծել երեք թարրի՝ բովանդակության հիմնանյութ, արտահայտության հիմնանյութ և երկուսի համար ընդհանուր ձև:

Լեզվում գուգակցվում են գուգաբանականությունն ու անգուգաբանականությունը: Բովանդակության և արտահայտության միջև հանդես է գալիս մի անցումային օղակ, որում իրենց ձևերն աղոեն ունեցող բովանդակությունն ու արտահայտությունը գուգաբանական ձև են ստանում: Կառարկում է նոր մակարդակի միավորների կառուցում, որանդ էականը բովանդակությանն ու արտահայտությանը թրվող նոր, կառուցվածքային ձևն է՝ կառուցածանը կամ կառուցակերպը:

Ի թարբերություն եռանգր գուգաբանական նշանի, լեզվական նշանն ունի հնգանգր կազմություն՝ բովանդակության ձև-բովանդակության հիմնանյութ-կառուցակերպ-արտահայտության հիմնանյութ-արտահայտության ձև:

Լեզվական նշանի հինգ թարբերով կազմվում են իրար հետ որոշակի հարաբերություններով կապված հինգ ռաիմաներ, որոնցով էլ բնութագրվում է բովանդակությունից արտահայտությանն անցումը /բովանդակության արտահայտման ընթացքը/՝ վերաբերական բովանդակություն, կառուցվածքային բովանդակություն, կառուցակերպ, կառուցվածքային արտահայ-

առևթյուն, գծային /հեշտկան/ արտահայտություն:

Գ. ՀԱՄԱՐԱՐԱՐՑԱՆ /Լենինական/

ՀԱՅԵՐԵՆՈՒԹ ՎՐԿՆԱԿՈՐՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԱԸ

Մենք է կրկնություն բառակազմական արժեքը, բազմազան են կրկնու-  
թյամբ արտահայտված իմաստները և կազմություն ձևերը:

Գեղեցի է նշել, որ լեզվաբանություն մեջ չկա կրկնավոր բարդություն-  
ների լիարժեք և հասակ դասակարգում: Հր. Ամառյանը, , Լեզվաբանության  
հայոց լեզվի, , աշխարհության մեջ նշում է կրկնավորների կազ-  
մակում վեց ձևեր: Ա. Ա. Մուրավյովը, , Հայոց լեզվի բառային կազմը, , ու-  
սումնասիրության մեջ այդ բոլոր ձևերը ընդգրկում է չորս խմբի մեջ,  
իրենց տարաբանակներով: Մ. Արեղյանը, , Հայոց լեզվի տեսություն, , մեջ  
ուսումնասիրում է հնչյունական փոփոխությամբ կազմված կրկնավորները,  
որոնց բաժանում է հինգ տեսակների:

Մեր հիմնական նպատակն է ցույց տալ կրկնավորների կազմության  
ձևերը և դասակարգել դրանք ըստ խմբերի և ենթախմբերի: Բազմազան են  
հայերենում կրկնավոր բառերի կազմության ձևերը. նույն բառի, արմա-  
տի, վանկի կրկնությամբ, որոնք կրկնվում են առանց փոփոխության, հընչ-  
յունափոխությամբ և բաղաձայնների տարբերակմամբ:

Կրկնավոր բարդություններում կրկնվող բառը կարող է մնալ անփո-  
փոխ և կարող է ենթարկվել զանազան հնչյունական փոփոխությունների՝  
ձայնավորի, բաղաձայնի հնչյունափոխություն, հնչյունների հավելում և  
անկում: Այսպիսով, կրկնավոր բարդությունները ըստ կազմության ձևերի  
կարելի է բաժանել երկու հիմնական խմբի.

1. /առանց հնչյունափոխության կազմված կրկնավորներ,

2. /հնչյունափոխությամբ կազմված կրկնավորներ:

Մեր խնդիրն է ուսումնասիրել կրկնավորների կազմության հնչյուն-  
ափոխ ձևերը: Այս խմբի կրկնավորները հսկայական քանակություն են կազ-  
մում ժամանակակից հայերենում, և դրանք կարելի է բաժանել հետևյալ տե-  
սակների.

1. Միևնույն բառի պարզ կրկնությամբ կազմված կրկնավորներ:  
Այդպիսիք են՝ արագ-արագ, բարդ-բարդ, մեկ-մեկ և այլն:

2. Կրկնավորներ, որոնց հիմքը կազմված է արմատի կրկնությամբ:  
Կրկնության այս ձևը զաւիս է զրաբարից: Հայագիտության մեջ այդ ձևը  
առաջինը առանձնացրել և քննության է ենթարկել Հր. Ամառյանը: Այս ձե-  
վով կազմված կրկնավորներն են՝ ալլալ, թոթալ, լիլիպալ և այլն: Այս

Նմբում մեծ տարածում ունեն տրամախ կրկնությամբ կազմված բայերը: Այս տեսակի կրկնավորների բավականին խորը ուսումնասիրությունը տալիս է Ա.Աբրահամյանը, ,Բայը ժամանակակից հայերենում,, աշխատությունում, որտեղ բնածայն բայական կրկնավորները բաժանում է երկու շերտի՝ հին և նոր:

3. Կրկնավորներ, որոնց տրամաբ կազմված է որևէ հնչյունախմբի /վանկի/ կրկնությամբ: Այդպիսիք են՝ մամա, տառա, քաքա, ցիցի և այլն:

Ըստ բաղադրիչների կապակցության եղանակի կրկնավորները լինում են՝ հարակցական, շաղկապական, նախադրական:

ա. Հարակցական են այն կրկնավորները, որոնց բաղադրիչները կապակցվում են ուղղակի հարակցությամբ՝ միացման գծիկով, ինչպես՝ քաքա-ծըը-քաքա, գուլնո-գուլնո և այլն:

բ. Շաղկապական են այն կրկնավորները, որոնց բաղադրիչները կապակցվում են ու, և շաղկապներով, ինչպես՝ նոր ու նոր, կամ ու կամ, իսկ և իսկ և այլն:

գ. Նախադրական են այն կրկնավորները, որոնք կարող են միանալ առ, ընդ, ի գրաբարյան նախդիրներով, ս հոդակապով, հա բառով: Այդպիսիք են՝ ժամանակ առ ժամանակ, մեղք ընդ մեղք, թե ի թե, կուլե-կուլե, կերպակերպ, մրդ հա մրդ և այլն:

Ս. Հ. ԱՄԻՐՔԱՆՅԱՆ /Երևան/

ՔԵՐՈՎՔԵ ՊԱՏԱՆՅԱՆԸ ԵՎ ՀՆԴԵՎՐՈՊԱՅԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ԵԱՐՔՈՒՄ  
ՀԱՅԵՐԵՆԻ ԴԻՐՔԻ ՀԱՐՑԸ

Ք. Պատկանյանը հայ լեզվաբաններից առաջինն է անդադարձել հընդ-եմըրպական լեզուների շարքում հայերենի դիրքի հարցին՝ յուրովի մեկնաբանելով այն:

Պատկանյանին սովորաբար համարում են հայերենի՝ իրանյան լեզվի տեսակետին հարող լեզվաբան:

1864թ. հրատարակվում է նրա ,Հետազոտություն հայոց լեզվի կազմության մասին,, ուսերեն աշխատությունը, որտեղ շարադրել է իր սկզբունքները հայերենի դիրքի մասին:

Ի տարբերություն Մյուլլերի, որը հայերենի հնչյունական համակարգը համեմատում է իրանյան լեզուների համապատասխան համակարգի հետ, Պատկանյանը համեմատությունների շրջանակի մեջ է ընդգրկում նաև հնդվերդպական մյուս լեզուները՝ սանսկրիտը, լատիներենը, հունարենը: Նա հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի քերականական ձևերի



ծագումը բացատրելիս, ի տարբերություն Ֆ.Բոպպի և Մյուլլերի, դրանք չի բխեցնում սանսկրիտից և զենդերենից, այլ որոշ երևույթների առաջացումը կապում է հնդեվրոպական նախալեզվի հետ, ինչպես առնել բայի անցյալ կառարյալի առքը ձևը, որը, ըստ նրա, հնդեվրոպական կրկնավոր կատարյալի մնացորդ է հայերենում: Իսկ որոշ քերականական ձևեր փորձում է բացատրել, հայերենի ոգով,, հայերենի ներքին զարգացման օրինաչափություններով: Միաժամանակ հայերենի հնչյունական և քերականական ձևերը համեմատելիս ավելի շատ ընդհանրություններ է տեսնում հունարենի, լատիներենի, քան իրանյան լեզուների հետ: Ուստի Պատկանյանը հակադրվում է հայերենի իրանյան լեզու լինելու տեսակետին, ընդգծելով, որ հայերենը քերականական ձևերով և բառային կազմով արիական /հնդեվրոպական/ լեզու է, որ նա հնչյունական տեսակետից մոտ է իրանյան լեզուներին, քայքայ իրանյան նախնակուն լեզվի ըրբառը չէ:

Նրա ժամանակի համեմատաբանները սահմանափակվում էին հայերենի և իրանյան լեզուների սերտ կապը տեսնելով: Այս տեսակետից ուշագրավ է, որ Պատկանյանը հայերենը համարում է հնդեվրոպական լեզուների տարբեր խմբերը միացնող լեզու: Միաժամանակ իրավացիորեն շեշտում է, որ հայերենի տեղը դեռևս պարզ որոշված չէ գիտության մեջ:

Հ.Հյուբշմանի տեսությամբ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի անկախ լեզու համարվեց: Պատկանյանը արժանազան այդ տեսությունը, Հայոց լեզվի զբաղեցրած տեղը հնդեվրոպական լեզուների շրջանում,, ուսուսերեն հոգվածով /1879/: Այստեղ նա իրավացիորեն գտնում է, որ հայերենի դիրքի մասին Հյուբշմանի տեսությունը վերջնական չէ: Իրոք, այդ տեսությամբ դրվեց հայերենի տարածքային ուսումնասիրության հիմքը, սակայն այն լրացվեց և զարգացվեց հետագա համեմատաբանների կողմից: Այդ առումով իր ներդրումն ունի Նաև Զ.Պատկանյանը, որը առաջադրեց հայերենի դիրքի հարցը լուծելու հետևյալ կարևոր պայմանները.

1. Եթե Հյուբշմանը քնիկ հայերեն քառերն առանձնացնում է իրանյան փոխառություններից, ապա Պատկանյանը անհրաժեշտ է համարում առանձնացնել նաև հունական, ասորական, սեմական փոխառությունները:

2. Պատկանյանը կարևոր է համարում ոչ միայն զրական պարսկերենի, այլև բարբառների իմացությունը, որոնցից բավականին քառեր են անցել հայերենին:

3. Հիմնվելով հայերենում առկա բարբառային հնաբանությունների վրա՝ կարևոր է համարում հայերենի բարբառների ընդգրկումը համեմատությունների մեջ:

4. Առաջարկում է քառերի և քերականական ձևերի ավելի բազմակողմանի քննություն, որն անհասկել էր Հյուբշմանի՝ միայն հնչյունական

համապատասխանութիւններ իման վրա ստեղծված տեսութիւն մեջ:

Հետագա ուսումնասիրողները հայերենի տարածքային ուսումնասիրութիւն ժամանակ ընդգրկեցին նաև հայերենի բառային և քերականական գուգա-բանութիւնները: Դրանց կիրառութիւնը ավելի հաճախեցին տարբեր տարածք-ներ լեզուների բառային և քերականական ընդհանրութիւնները, ինչպես և տարբերութիւնները հայերենի և մյուս հնդեվրոպական լեզուների մի-ջև:



Կ.Ս.ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ /Կիրովական/

#### ՀԱՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Բանաստեղծութեան թարգմանութեան կարևորագույն հարցերի թվին կա-րելի է դասել բնագրի ծանկան չափանիշների՝ կշռութի, հանգի, առգա-նութեան, հնչողականութեան և այլ միջոցների վերաբերումն այլ լեզ-վով: Թարգմանութեան տեսաբանների տեսադաշտից, սակայն, դուրս է մնա-ցել այն խնդիրը, թե որքանով է պարտադիր և նպատակահարմար հարանուն-ների թարգմանութիւնը մեկ այլ լեզվով: Այս հարցը խիստ կարևոր է հաճախ 20-րդ դարի ուսանական բանաստեղծութեան թարգմանութեան ա-ռումով:

Հարանունների մեկ այլ լեզվով վերաբերումն համարժեք միջոցնե-րը ուսումնասիրել ենք Մաքիմ Զվեռնայի բանաստեղծութիւնների հա-յերեն թարգմանութիւնների օրինակով: Ինչպես հայտնի է, Զվեռնայի բանաստեղծական լեզվի ամենաբնորոշ գծերից է հնչյունական հարանունե-րից մեկի՝ հարանունների համախափ կիրառութիւնը. մի հանգամանք, ո-րը չափազանց դժվարացնում է նրա բանաստեղծութիւնների թարգմանու-թիւնը:

Նկնելով այն դիտարկումից, որ ուսանողներ և հայերեն լեզուները հնչյունական և բառային կազմի տեսանկյունից դրսևորում են մի շարք ընդհանրութիւններ, գտնում ենք, որ հայերեն թարգմանութիւնների ժա-մանակ համարժեք հարանունների օգտագործումը ոչ միայն հնարավոր է, այլև՝ պարտադիր: Սակայն Զվեռնայի բանաստեղծութիւնների հայերեն թարգմանութիւնների համադրութիւնը բնագրի հետ ցույց է տալիս, որ բանաստեղծուհու կողմից օգտագործված հարանունների գերակշռող մեծա-մասնութիւնը հայերեն չի թարգմանվել, որի հետևանքով որոշ բանաստեղ-ծութիւններ գրկվել են ոչ միայն քարեհնչական, այլև լեզվափոփոխ մի շարք արժանիքներից:

Որոշ դեպքերում էլ, գիտակցելով հարանունների հնչական ազդեցու-

թյան կարևորությունը, թարգմանիչները փորձել են դրա կորուստը փոխհատուցել բաղաձայնությամբ:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս՝ եզրակացնելու, որ Ցվետսևայի բանաստեղծական ոճը պահանջելու նպատակով անհրաժեշտ է հայերեն թարգմանելիս օգտագործել այն բոլոր հնարավորությունները, որոնք ունի հայերենը ի դեմս հարանունների:

Բ.Ա.ԱՍԱՏՐԾԱՆ /Երևան/

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԼԵՋԱԿԻ ԱՋԻՏՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՀԱՏԻ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄԱՌՈՇՄԱՆ ՎՐԱ

Մեր հասարակության հեռագա առաջընթացի կարևորագույն նախապայմանն է յուրաքանչյուր անհատի ունակությունների զարգացումը և դրանց ըստ ամենայնի օգտագործումը: Իսկ այդ ունակությունների զարգացումը ուղղակիորեն պայմանավորված է մայրենի լեզվի տիրապետմամբ: Մայրենի լեզուն այն հիմքն է, որի վրա կառուցվում է ամբողջ կյանքի ընթացքում ստացված գիտելիքների համակարգը: Նրա առաջամ կարևորագույն իմացությունը հնարավոր է դարձնում նաև այլ լեզուների տիրապետելը, որն այսօր արդեն անհատի զարգացման կարևոր բնութագրերից մեկն է:

Մայրենի լեզվով ուսուցումը զգալիորեն ազդում է նաև անհատի մասնագիտության ընտրության, միշտ և գիտակցված կողմնորոշման վրա: Իսկ վերջինիս կարևորությունը հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման և մեր հասարակության հեռագա զարգացման առումով կասկած չի հարուցում:

Ինչպես ցույց են տալիս հարցաթերթիկային հարցման\* արդյունքները, մայրենի լեզվով կրթություն ստացած անձանց թվում մինչև դպրոցն ավարտելը մասնագիտություն ընտրածների բաժինը կազմում է շուրջ 92օ/օ, իսկ հանրապետության բոլոր դպրոցների շրջանավարտների թվում՝ միայն 85օ/օ: Ոչ մայրենի լեզուներով կրթություն ստացածների թվում ամենաբարձրն է մասնագիտության ընտրության հարցում կասկածողների բաժինը: Մինչդեռ այդ անձինք պետք է շուտով համալրեն հասարակական արտադրության մեջ զբաղվածների շարքերը և, բնականաբար, իրենց արտադրական ցուցանիշներով զգալիորեն կգիշեն այն անձանց, որոնք գիտակցաբար են

\*Հարցումը կազմակերպվել է ՀՍՄՀ ԳԱ Խնամսագիտության ինստիտուտի ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների բաժնի կողմից 1982-1983 ուսումնական տարում:



կատարել ընտրութիւնը:

Ջգալի տարբերութիւններ են դիտուում նաև մասնագիտութեան ընտրման որոշակիութեան մեջ: Այսպես, եթե մայրենի լեզվով ուսում ստացած անձանց թվում շուրջ 30/0-ն է անորոշ նշել, որ ցանկանում է ընդունվել ՔՈՒՀ, ապա ոչ մայրենի լեզվով ուսում անցած անձանց թվում այդպես է նշել մոտ 80/0-ը: Ընդհանուր առմամբ մայրենի լեզվով ուսում ստացածները մոտ մեկ տարով ավելի շուտ են ընտրում մասնագիտութիւնը, որը նրանց ավելի մեծ հնարավորութիւն է տալիս ձեռք բերել որոշակի մասնագիտական /թեև մասնակի/ գիտելիքներ մինչև դպրոցն ավարտելը: Մայրենի լեզվով կրթութիւն ստացածները ավելի իրական և որոշակի մոտեցում ունեն մասնագիտութեան ընտրութեան հարցին: Դա նրանց սոցիալական հասունութեան ավելի բարձր աստիճանի արտայայտութիւնն է:

Սակայն ուսուցման լեզվի ընտրութիւնը միշտ չէ, որ կատարվում է անհատի լեզվական հնարավորութիւններին համապատասխան և գիտակցաբար: Օրինակ, ինչպես ցույց են տալիս մասնավոր հարցումների արդյունքները, ոչ մայրենի լեզվով ուսում ստացող առաջին դասարանցիների մոտ մեկ երրորդ մասը չունեն ուսման համար անհրաժեշտ լեզվական պաշար և բավականին ժամանակ են կորցնում ուսուցման հիմնական լեզվին ընտելանալու համար, իրենց գիտելիքների պաշարով զգալիորեն ետ մնալով մյուս համադասարանցիներից: Պարզ է, որ ուսուցման լեզվի նման ընտրութիւնը զգալի խոչընդոտներ է ստեղծում անհատի ձևավորման և հետագա զարգացման առջև, մի հանգամանք, որ քնալ էլ չի համապատասխանում թե՛ անհատի և թե՛ հասարակութեան շահերին:

Այդ իսկ պատճառով հույժ կարևոր են դառնում ուսուցման լեզվի միշտ ընտրութեան, այդ գործում հասարակութեան դերի ուժեղացման, ինչպես նաև մայրենի լեզվի ուսուցման մակարդակի բարձրացման խնդիրները: Սրանց լուծումն այսօր անհատի ձևավորման ու նրա հետագա զարգացման կարևորագույն նախապայմանն է:

Վ.Ս.ԼԱՇԵՏԻՍՅԱՆ /Երևան/

ՏՄՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ  
ԱՍՏՂԱՏՈՒՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Գիտութեան տվյալ բնագավառի տերմինաբանութեան ուսումնասիրութեան հիմնական խնդիրն է տերմինաբանակարգում միօրինակութեան և միասնականութեան ստեղծումն ու ամրակայումը:

Այս խնդիրը հնարավոր է իրագործել առաջին հերթին ուշադրութեան



առնելով տերմինահամակարգում տեղ գտած բոլոր այն տերմինները, իրոք՝ չենթարկվելով տերմինակազմության համար հիմք ընդունված , մեկ հասկացությանը մեկ բառ, , սկզբունքին, կիրառվում են տարբերակներով և ստեղծում գիտութայն լեզվի համար ոչ հանձնարարելի տերմինային գույքակազմություն: Պահանջվում է մեծ զգուշությամբ ընտրել այն տարբերակը, որն առավել չափով կբավարարի տերմինին առաջադրվող հիմնական պահանջները /հասկացության ժշգրիտ և հստակ բնութագրում, իմաստի տարբերակածություն, սահմանազատվածություն և այլն/:

Տարբերակայնությունն իբրև համաժամանակյա լեզվական կարգ, պարտադրում է տերմինաբանության զարգացման յուրաքանչյուր փուլի առանձին բնություն:

Մի շարք լեզվաբաններ իրավացիորեն այն կարծիքն են հայտնում, որ տարբերակայնությունն ավելի բնորոշ է գիտության եվյալ բնագավառի տերմինահամակարգի ձևավորման, կազմավորման շրջանին, քանի որ վաղ շրջանում գերիշխում է պատահականությունն ու տարբերայնությունը, իսկ տերմինների նկատմամբ արհեստական կամ գիտակցական ներգործությունը սովորաբար զալիս է հեռագայում, որի դրական արդյունքն է կոնկրետ հասկացության համար ամենաբնորոշ լեզվական նշանի ամրակայումն ու կիրառությունը:

Հայկազյան բառարանում տեղ գտած աստղադրական տերմինները տարբերակայնության ուսումնասիրման հարուստ նյութ են տալիս:

Տարբերակայնությունը երկու հիմնական խմբի ստորաբաժանելուց հետո /I. տարբերակայնություն բովանդակության դիտվածքում - բազմիմաստներ, II. տարբերակայնություն արտահայտության դիտվածքում - համանիշներ/ ընտրում ենք այն տարբերակները, որոնցում ձևական փոփոխության է ենթարկված արտաքին կողմը՝ իմաստի պահպանմամբ:

Տարբերակայնությունն արտահայտության դիտվածքում բաժանվում է մի քանի ենթախմբի՝

#### Ա. ՏԵՐՄԻՆ - ՏԱՐԲԵՐԱՆՆԵՐ

1. Հոդակապով և անհոդակապ տերմիններ /կիրակամուտ-կիրակմուտ/:
2. Հնչյունափոխված և անհնչյունափոխ տերմիններ /աբշալոյս-արշալուս/:
3. Ձևաբանական տերմին-տարբերակներ, որոնց տարածասակներն են՝

ա/ մեկ ձևական նշանակություն ունեցող ածանցի հավելումով /բառամիջում և բառավերջում/ տարբերվող ձևեր /կենդակ-կենդանակ, պատեքստ-պատեքստայն/,

բ/ մեկ ընդհանուր արմատով և տարբեր վերջածանցներով բաղադրված ձևեր /հոլովութիւն-հոլովումն/,

զ/ մեկ ընդհանուր արմատով և տարբեր նախածանցներով բաղադրված  
ձևեր /պարառութիւն-շրջառութիւն/:

Բ. ՏԵՐՄԻՆ - ՆՈՒՑՆԱՆԻՇՆԵՐ

1. Ծագումնաբանորեն ընդհանրութիւն չունեցող տարբերակներ /հոլով-  
շրջան-պտոյտ, բեւեռ-կէտ, օրագիշեր-գիշերատիւ-շափառուկ/:

2. Ծագումնաբանորեն ընդհանրութիւն ունեցող տարբերակներ, որոնք բա-  
ժանվում են ենթախմբերի.

ա/ տարահիմք տերմիններ /Լուսաբեր-Այգաբեր, հասարակօր-կէսօր/,

բ/ համահիմք տերմիններ /տօնացոյց-տօնացուցակ, ականքթիթ-ական-  
թթափել/:

գ. ՏԵՐՄԻՆ - ՀԱՄԱՆԻՇՆԵՐ. սրանք հակադրվում են տարածական, հա-  
սարակական, ժամանակագրական և կառուցվածքային հատկանիշներով:

դ. ՏԵՐՄԻՆ - ՀԱՄԱՐԺԵՑՆԵՐ. սրանք այն տարբերակներն են, որոն-  
ցից մեկը օտար փոխառութիւն է, մյուսը՝ ազգային բառ, ինչպես՝ մո-  
լորեկների անվանումների ազգային և օտար ձևերը /Փայլածու-Մերկուրի/:

Օ.Ե.ԲԱՐԱՅԱՆ /Ստեփանակերտ/

#### ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃՈՒՄ

Լեզվի գործառական ոմբը փոխաբերութեան գործածութեան հարցում  
հանդես են բերում տարբեր յուրահատկութիւններ: Գեղարվեստական խոս-  
քում, ի տարբերութիւն զիտական, պաշտօնական, հրապարակախոսական ոմբ-  
րի, տարբեր արժեքներով լայն կիրառվում են փոխաբերութիւնները և ծո-  
ռայում որոշակի գեղարվեստական ու գաղափարական խնդիրների:

Ըստ տարածվածութեան և իմաստային զարգացման տարբերում ենք ժո-  
ղովրդական և աստիճան-հեղինակային փոխաբերութիւնները: Փոխաբերու-  
թիւնների այս դասակարգումը որոշակի հարաբերութեան մեջ է նրանց ծո-  
գումնային դասակարգման հետ, ըստ որի փոխաբերութիւնները լինում են  
ժողովրդական ու զրական: Փոխաբերութեան այս տարբեր տեսակները, իրենց  
գործառական ընդհանրութեամբ հանդերձ, ունեն նաև ոմեկան յուրահատուկ  
դեր ու արժեք: Լեզվական փոխաբերութիւնները գործածվում են զրական  
տարբեր սեռերի, ժանրերի երկերում: Անհատական-հեղինակային փոխաբերու-  
թիւնը նախագես ունենում է սահմանափակ կիրառութիւն, որը կարող է  
աստիճանաբար տարածվել՝ պայմանավորված նրա հաղորդակցային-ոմեկան ար-  
ժեքով:

Մեծ է փոխաբերութիւնների հուզական ու գնահատողական նշանակու-  
թիւնը:

Հառկալեա զեղարկեառական ոմում փոխաբերութիւնները որոշակի հա-  
րաբերակցութեան մեջ են մտնում ոմական այլ միջոցների հետ, և համախ  
այդ հարաբերակցութիւնը դառնում է փոխաբերութեան ձևավորման միջոց:  
Ուշագրով է հառկալեա շնչավորման, անձնավորման, առարկայացման հարա-  
բերակցութիւնը փոխաբերութեանը:

Փոխաբերութեան զործածութեան հարցում որոշակի դեր ունի զրոգի  
խառնվածքը, ինչպես և ստեղծագործութեան նյութը:

Ռ. Հ. ԲԱԴԱՍՅԱՆ /Երևան/

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵԲԱՏԵՐԻ ԽՏԱՅՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՉ ԼԵՋԱԿԱՆ  
ՔՆԶՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՀԱՄԱՌՈՏ ՇԱՐԱԴՐՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կապված տիպային ծրագրերի պահանջների հետ, որոնք նախատեսում  
են ուսուցման ընթացքում օգտագործել զիտառելիական, նեղ մասնագի-  
տական, հասարակական-քաղաքական, ինչպես նաև մշակութա-դաստիարակչա-  
կան ընդլայնող տեսքեր, նպատակահարմար է ուսուցման ընթացքում ներդնել  
այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են՝ համառոտ շարադրումը և սեղմանը-  
շումը, ելույթների ու ակնարկների կազմումը և այլն:

Քանի որ ռեֆերատի խնդիրը շարադրանքում պարունակվող արդիական  
տեղեկութիւնը կարճ հաղորդելն է, ապա նպատակահարմար է համառոտ շա-  
րադրել սովորեցնելու սկզբնական շրջանում ուսանողների մոտ զարգացնել  
մասնագիտական շարադրանքի խտացման, այսինքն՝ նյութի կրճատման հմու-  
թիւններ: Շարադրանքի խտացումն իրականացվում է երկրորդական, ոչ նոր  
սպառված տեղեկութիւնների դուրս մղման և ենթադրվող գլխավոր մտքերի  
վերահաման հաշվին:

Իմաստի խտացման անխաժանելի մասն են կազմում շրջասույթը և ընդ-  
հանրացումը: Շրջասույթի տարածված տեսակ է համարվում հոմանիշային  
փոխարինումը՝ ինչպես բառապշարային, այնպես էլ ըբրականական առում-  
ներով:

Նշանակալից չափով կիրառվում է նաև արտահայտութեան վերափոխումը,  
այսինքն՝ բառակապակցութեան փոխարինումը բառով, շարահյուսորեն միմյանց  
հետ չկապակցված երկու կամ ավելի բառերի փոխարինումը իմաստային մեծ  
կշիռ ունեցող մեկ բառով, ընդարձակ բառակապակցութեան փոխարինումը ա-  
վելի սեղմ կառուցվածք ունեցող բառակապակցութեամբ:

Այստեղ կարող են գիտանի լինել նաև երկրորդական նախադասութիւն-  
ները համապատասխան դարձվածների կամ բառակապակցութիւնների վերափոխ-



մանը, կապակցող քառերի օգտագործմանը, շարադրանքի պարբերությունների գլխավոր մաքի ձևակերպմանն ուղղված վարժությունները:

Ռեժերառիւն սովորաբար բնորոշ է անդամ, անորոշ-դիմավոր և զարգ ընդարձակ նախադասությունների օգտագործումը, ինչը և վկայում է ռեժերառի, որի նպատակն է ամենից առաջ նյութի փաստացի վերարտադրումը, շարժյունակա՛ն որոշակի միօրինակութեան մասին:

Ձ.Ա.ԲԱՌՆԱՍՅԱՆ /Երևան/

ԳՈՒՆԱՆՈՒՆՆԵՐԸ ՄԵՈ ՏԱՐԱՃԻ ԽՈՍԿԱՆՔՆԵՐՈՒՄ

Հարուստ է Մշո բարբառի գունային ներկառնակը: Այսպեղ առկա են ոչ միայն ժամանակակից հայոց լեզվում եղած բոլոր հիմնական գունանունները, այլև շատ նրբերանգներ արտահայտող բառեր: Սևը, 'կանաչը, դեղինը, կարմիրը, կապույտը նույն իմաստով կան նաև այս խոսվածքներում, բայց բարբառին բնորոշ են այս հիմնական գույների՝ որոշ բառերով կամ մասնիկներով արտահայտվող նրբերանգները:

Կապույտ գույնի համար բարբառում եղած համապատասխան կարուղ, կապուղ, կաբուլթ տարբերակներից բացի կան նաև մօռ և ժանգառի կաբուղ ձևերը: Վերջինս կապույտի մի նրբերանգն է՝ փիրուզագույն կապույտը կամ երկնագույնը /պղնձի կապակառնաշավուռ ժանգի գույնը/:

Կարմիր գույնի համապատասխանում են կարմիր և փոխառյալ ալ ծեվերը, բայց ահա ,,շիկացած կարմիր,, իմաստն արտահայտելու համար բարբառն ունի կաս կարմիր ձևը, իսկ դեմքի շտապույնի համար՝ կարմրեծեծ ձևը:

Քանձր սևությունն արտահայտելու համար ստեղծվել է մընցըրից սև ձևը: Իսկ, ասենք, դեղին բառի արմատից ածանցումով ստացվել է դեղնօշ նրբերանգը, որ նշանակում է գունաթափ դեղին,,:

Շատ հետաքրքիր նրբերանգներ կան շեկ գույնի համար՝ բաց դեղնավունից մինչև շիկակարմիր /շեգ, կըծ, կըծօ, պըռըծիգ, պըռեծիգ, մըպ-դիկ, չուռ և այլն/:

Այս և նման բազմաթիվ ձևեր վկայում են մշեցիների հարուստ գունազգացողությունը:

Ա.Կ.ԲԱՌՆՈՒՂԱՐՅԱՆ /Երևան/

„ԱՄԱԿԲ ՍՈՂՈՄՈՆԻ,, ԳՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՔԱՐԳՄԱՆՈՒ-  
ՔՅՈՒՆԸ ՀՈՒՆԱՐԵՆ ԲՆԱԳՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ



Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությունից հայտնի է,



որ հին կառավարանի զրքերից առաջինը թարգմանվել է , ,Առակը Սողոմոն-  
նին, , : Աստվածաշնչի վերջնական թարգմանությունը կառավարվել է հունա-  
րենից, որի լեզվական ազդեցությունը շատ մեծ է եղել հայ թարգմանա-  
կան և ուրույն երկերի վրա :

Մեր նպատակն է ցույց տալ , ,Առակը Սողոմոնի, , զրքի թարգմանու-  
թյան հունարենից կրած ազդեցությունը և հայերեն թարգմանության ինք-  
նուրույնությունը, հետևապես պարզել, թե՝

ա/շարադասական ինչ տարբերություններ և նույնություններ ունեն  
հայերեն և հունարեն տեքստերը .

իմոյ իմաստութեան անսա - ἐμὴ ρῆσει πρὸς εχέ ,

գորէնս իմ մի թողուք - τὸν ἐμὸν νόμον μὴ ἐγκαταλείπητε ,

բ/ որտեղ է հայ թարգմանությունը հետևել հունարենի դարձվածաբա-  
նական կառույցներին և որտեղ է ինքնուրույն .

եւ մի ախորժեսցես, եթէ կոչեսցեն զքեզ եւ ասիցեն - μήδε βουληθῆσ  
ἐὰν παρακαλεσῶσι σε λεγόντες ,

գ/արդյոք հայցականով ենթակա անորոշ դերբայի հետ և տրականով  
ենթակա անորոշ դերբայի հետ դարձվածները հունարենից կրած ազդեցու-  
թյուններ են, թե հայոց լեզվին հատուկ կառույցներ .

Քանզի կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրեւ զիս - θέλω γὰρ πάν-  
τας ἀνθρώπους εἶναι ὡς καὶ ἐμαυτόν ,

աչ կամիմ թագաւորել դմա ի վերայ մեր - Οὐ. θελόμεν τούτον βασι-  
λεῦσαι ἐφ' ἡμᾶς ,

դ/բառակազմական և դարձվածաբանական արտահայտությունների ինչ  
պատճենումներ կան հայերեն թարգմանության մեջ .

անօրէնութիւն - ἀνομοσ ,

մատո գունկն քո - παρόβαλε σὸν ὄψο :

Ն.Յ. ԲԺՇԿՅԱՆ /Երևան/

ՆԵՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ-ԻՄԱՍՏԱՔԱՆԱԿԱՆ

ԿԱՂԱՊԱՐՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԱՏՈՒՄՔՈՒՆՆԵՐԸ

/ՈՐՔՈՒՄ-ՄԱՆԻԿՈՒԼ յատորների մասին անգլերեն տեքստերի նյութի  
հիման վրա/

Տերմինաշինության և տերմինների ցուցակագրման գործում կանոնարկ-  
ման միառումներին զուգընթաց գոյություն ունեն տերմինների ստեղծման և  
օգտագործման ետերային, վառ կառավարվող գործընթացներ : Այդ գործըն-  
թացների վիճակագրական, ինչպես նաև մյուս օրինաչափությունները ի հայտ  
բերելը շատ կարևոր է ինչպես բուն տերմին գիտության համար, այնպես էլ

ներա հարակից բնագավառների՝ բառագիտության և բառարանագրության, ին-  
ֆորմառիկայի, լեզուների դասավանդման մեթոդիկայի, ինժեներային լեզ-  
վաբանության համար:

Աշխատանքի հիմնական նպատակն է ուսումնասիրել նեղ մասնագիտա-  
կան տերմինի գործածության /բաշխման/ վիժակագրական կառուցվածքի հա-  
մապատասխանությունը նրա ձևին ու նշանակությանը:

Ներկա աշխատանքի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ իբրև  
հաշվարկման միավոր հանդես են գալիս տերմինաբանական միավորները: Դը-  
րանք արտահայտում են այնպիսի միասնական հասկացություններ, որոնք կա-  
րող են արտահայտվել ինչպես մեկբառանի տերմիններով, այնպես էլ տեր-  
մինակապակցություններով: Որպես աշխատանքի նյութ ծառայում է տերմին-  
ների միասնական համախանական ցուցակը /ի տարբերություն մեկբառանի տեր-  
մինների և տերմինակապակցությունների հանրամասն առանձին ցուցակնե-  
րի/:

Հաշվարկման միավորի այդպիսի ընտրության առավելությունն այն է,  
որ տերմինները հաշվելիս մեկ հասկացություն նշանակող միավորների մաս-  
նատում տեղի չի ունենում, և միևնույն միավորը երկու անգամ չի նշվում  
նախ՝ մեկբառանի տերմինների, ապա՝ տերմինակապակցությունների ցուցա-  
կում:

Նաեղավոր աշխատանքի մյուս կարևոր հատկանիշն այն է, որ դրա հա-  
մար նյութ է ծառայում այդ կարգի միավորի համար ծավալով եզակի ընտրո-  
վի ամբողջությունը, որը հավասար է մեկ միլիոն բառագործածություն: Դա  
պայմանավորված է նրանով, որ տեքստում նեղ մասնագիտական տերմինների  
մեծամասնության վիժակագրական գործառնություն հավաստի պատկերը որոշե-  
լու համար անհրաժեշտ է այնպիսի ընտրանք կատարել, որն իր ծավալով ըզ-  
գալիորեն գերազանցի ներկայումս լեզվավիժակագրության տրամադրության  
տակ եղածներին: Ինչպես հայտնի է, որքան մեծ է ընտրանքի կազմը, այն-  
քան հավաստի են դիտարկումների արդյունքները: Բացի այդ, միևնույն հա-  
վաստի համախանականությունների համար ընտրանքի անհրաժեշտ ծավալը մեծա-  
նում է դիտարկման տևողությունը համամասնորեն:

Լեզվավիժակագրական վերլուծության են ենթարկվել ուրբոտ-մանիպուլ-  
յատորներին նվիրված անգլերեն տեքստերը: Այդ լեզվի ընտրությունը պայ-  
մանավորված է նրանով, որ նախ՝ ուրբոտառնիկայի բուռն զարգացումը իր  
հետ բերում է համապատասխան տերմինաբանության հեղեղ, ինչպես ,,չե-  
զոք,, բառամթերքի վերամասնավորման և հարակից բնագավառներից տերմին-  
ների փոխառման հաշվին, այնպես էլ սեփական ուրբոտառնիկական տերմին-  
ների ստեղծման միջոցով, իսկ այդ գործընթացում դասակարգման, այսինքն՝

տարրական , ,կարգուկանոնի հաստատման, , ամեն մի փորձ արդեն անհետա-  
ձգելի զբաղմունք է դարձել: Երկրորդ՝ այդ և հարակից բնագավառների մաս-  
նագետները կարիք ունեն տերմինաբանական ցուցակների և, մասնավորապես,  
այսպիսի ցուցակների, որոնք կարողանային որպես ծնունդով ծառայել այ-  
լալեզու /ավյալ ղեպքում անգլերեն/ տեքստերը ռուսերեն թարգմանելիս:

Լ.Գ.ԲՐՈՒՅՑԱՆ /Երևան/

ԲՆԱԿԱՆ ԼԵՃՈՒՆԵՐՈՒՄ , ,ԻՄՂԻԿԱՑԻԱ, , ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ  
ԵԱՂԱՍԳԻ ԱՐՏԱՀԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ /զայմանական  
նախադասությունների նյութի հիման վրա/

Բնական լեզուներում տրամաբանական կարգերի և, մասնավորապես, տրամաբանական շաղկապների արտահայտման հետազոտությունը ունի ոչ մի-  
այն մեծ նշանակության արժեք, այլև կապված է լեզվաբանություն այսպիսի  
արդիական խնդրի հետ, ինչպիսին է տեքստի քերականությունը:

Մեր կողմից հետազոտվում են իմպլիկատիվ տրամաբանական շաղկապի  
լեզվական համապատասխանակները ռուսերեն, հայերեն և անգլերեն լեզու-  
ներում համադրական առումով: Տարբեր լեզուների կրողների համար անփո-  
փոխ , ,իմպլիկացիա, , տրամաբանական շաղկապը տարբեր ծնով է արտահայտ-  
վում բնական լեզուներում: Բացի այդ, եթե տրամաբանական շաղկապի նշա-  
նակությունը տարբերակված չէ, ապա դրա լեզվական համապատասխանակները  
նույն նշանակություն են արտահայտում ավելի մասնավոր, տարբերակված  
ծնով: Համադրական վերլուծություն տեսանկյունից դիտվում է հետազոտ-  
վող տրամաբանական շաղկապի լեզվական արտահայտությունների միջոցների  
նույնականություն, հոմանիշություն, իսկ երբեմն նաև տարբերություն:

Իմպլիկացիայի լեզվական միջոցների արտահայտման մակարդակների ա-  
ռումով դրանք բաժանվում են արտակա /որոնք արված են անմիջականորեն  
նախադասության մեջ/ և ներակա /տարբեր փոխակերպումների միջոցով վեր-  
հանվող/ միջոցների: Տարբերակվում է նաև միջանկյալ օղակ՝ մասնակի-  
ներակա /մասնակի-արտակա/ լեզվական ծեծեր: Այս կապակցությամբ բացա-  
հայտվում են , ,իսկական իմպլիկացիայի, , և , ,հնարավոր իմպլիկացիայի, ,  
երևույթները:

Վերը նշվածի հիման վրա առանձնացվում և դասակարգվում են իմպլի-  
կացիայի արտահայտման հետևյալ միջոցները.

1/ա. շաղկապներ, բ. կապեր,

2/ա. ըստերի կապակցություններ, բ. նախադասության միջանկյալ ան-  
դամներ և միջանկյալ նախադասություններ, գ. դերբայական դարձվածներ,



3/ Թ. Վարդ նախադասութեան բառական կազմ, բ. ստորադասական եղանակի բայով և տեղի վարազայով Վարդ նախադասութեաններ, գ. անհեղի փաստեր արտահայտող Վարդ նախադասութեաններ, երկնադասական հանրութեան, այսինքն՝, Յուրաքանչիւր լեզվում առկա է կամ Ա, կամ Բ հատկանիշը, ձև ունեցող ասույթներ, ինչպէս նաև բացարժակ հանրութեան, Ա-ն և Բ-ն միշտ ներկայացված են միասին, ձև ունեցող ասույթներ, ե. ստորադասական եղանակի բայով բարդ ստորադասական անշարկապ նախադասութեաններ, գ. երկու և ավելի նախադասութեանների կապակցութեան՝ առանց պայմանական նշանակութեան ձևական ցուցիչի, որը բացահայտվում է խոսքաշարային վերլուծութեամբ,


4/ կեանքական նշաններ բարդ անշարկապ նախադասութեաններում:

Ա.Ս.ԳԱԼՍՏՅԱՆ /Երևան/

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ներկայումս գրական հայերենի ուսուցման ընթացքում ծագող մի շարք խնդիրներ պայմանավորված են խոսակցական և գրական լեզուների միջև եղած տարբերութեամբ: Երկլեզվութեան և բարբառների ազդեցութեան պայմաններում խիստ կարևոր նշանակութեան ունի այն, որ լեզվակիրը գրական և ոչ գրական գուգածներ ունեցող միավորների գրական տարբերակները յուրացնի լեզուն սովորելու առաջին իսկ օրերից: Եթե երեխան հենց սկզբից ավել առարկան անվանելու համար սովորի հայերեն գրական բառը, այն ավելի բնական և հեշտ կարմատանա նրա ակտիվ բառապաշարում: Առայժմ վիճակը այլ է. կենցաղի որոշ իրերի և առարկաների, մրգերի, բանջարեղենի, ծաղիկների հայերեն անվանումների փոխարեն խոսակցական լեզվում իշխում են օտարաբանութեանները: Լեզուն նոր սովորողը լսում և յուրացնում է օտարաբանութեաններով համեմված, գեղազիտորեն ցածրորժեք խոսքը: Մեծ տարիքում շատ և շատ դժվար է լինում խոսքը մաքրել աղբիւրի օտարաբանութեաններից, քանի որ հոգեբանորեն բավական դժվար է հաթարհարել լեզվական սովորութի ուժը և իներցիան: Դա, բացի մաքուր և կիրթ խոսելու ձգտումից, լեզվակիրից պահանջում է նաև ուշադրութեան և հոգատարութեան սեփական խոսքի նկատմամբ, կամքի լարում, հետևողականութեան, որ ոչ բոլոր դեպքերում է իրականանում:

Նոր բառի, բառակապակցութեան, արտահայտութեան համեմատաբար դյուրին յուրացմանը, դրանց՝ լեզվակրի ակտիվ բառապաշարի միավորի վերածվելուն, մայրենի լեզվի գրական նորմայի ուսուցմանը մեծապէս կարող է նըպաստել նախադրողական հասակի և տարրական դասարանների երեխաների խոս-



քի զարգացմանը նպաստակուղղված լեզվական խաղերի, ալբոմների, պատկերազարդ տետրերի, ժայռապատկերների, պատկերածապակեների, ընդամենըների ստեղծումը, ինչպիսիք շատ են օգտագործվում երկրորդ և երրորդ լեզուների ուսուցման ընթացքում:

Հ.Փ.ԳԱԼՍՏՅԱՆ /Երևան/

ԱԶԳԱՅԻՆ-ԼԵՋԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱԴԻԲԵՋԱՆԻ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

/Ըստ ՄՍՀՄ 1926-1979թթ. մարդահամարների նյութերի/

Սովետական Հայաստանում և նրա սահմաններից դուրս բնակվող հայերի մեջ ընթացող ազգային-լեզվական և ընդհանրապես ազգային գործընթացների ուսումնասիրման համար մեծ հեռաքրքրություն են ներկայացնում ՄՍՀՄ մարդահամարների նյութերը:

Սովետական Ադրբեջանում է կենտրոնացված հայություն ամենախոշոր տարածքակազմի զանգվածը, և նրանում տեղի ունեցող գործընթացները որոշակիորեն բնորոշ են նաև ուրիշ վայրերում բնակվող տարածքակազմի հայերի. խմբերին: Որոշակի հեռաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ հայ բնակչության մեջ ընթացող ազգային-լեզվական գործընթացները ևս միասեռ չեն և սերտ կապի մեջ են տարբեր տեսակի ոչ լեզվական հանգամանքների հետ: Այսպես, մայրենի լեզվի պահպանումը մեծ չափով պայմանավորված է բնակչության ձևից /քաղաք կամ գյուղ, հոծ կամ ցրված/ և հայ բնակչության քանակից: Նույնը վերաբերում է և ուսուսաց լեզվի տարածմանը. այն ավելի աշխույժ է ընթանում քաղաքային հայ բնակչության մեջ, և ըստ տարիքային կտրվածքի դիտելիս պարզվում է, որ հայ-ուսուսերեն երկ-լեզվության զարգացման արագությունը ժամանակի հետ ավելի է մեծանալու:

Ըստ 1926թ. ՄՍՀՄ մարդահամարի նյութերի, հանրապետության հայ բնակչությանը բնակվում էր երեք խոշոր խմբերով. ա/Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ, բ/Բաքու քաղաք, գ/Գանձակի գավառ: Մայրենի լեզվի կրուսան աննշան էր, հիմնականում ուսուսերենի օգտին և հիմնականում Բաքվում: Հետագա մարդահամարների նյութերը վկայում են հանրապետության հայ բնակչության մեջ ընթացող լեզվական ուժացման գործընթացների աշխուժացման մասին, որոնք 70-ական թվականներին արդեն ընդգրկում են նաև գյուղական շրջանները: Հանրապետության հայ բնակչության լեզվական ուժացումն ուղեկցվում է ուսուսաց լեզվի լայն տարածմամբ թե՛ քաղաքում և թե՛ գյուղում, ընդ որում քաղաքային բնակչության մի զգալի մասի մեջ ուսուսերենը իր վրա է վերցնում մայրենի լեզվի գործառույթները:

ՏԱՐԱԶԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՄԱՆ ԴՐՍԵԿՈՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ստորոգումը հանդես է գալիս բացահայտ և առկայական ձևերով: Բացահայտ /տրապա/ ստորոգումը դրսևորվում է նախադասության մակարդակում, ոչ բացահայտ /հերակա/ ստորոգումը պարունակվում է լեզվական աարքեր միավորներում, առկայական ստորոգումը՝ նախադասության որևէ անդամի հատուկ ընդգծումը, կարելի է դիտել որպես նախորդ երկուսի համադրություն, քանի որ որևէ իմաստի ընդգծում միաժամանակ ենթադրում է մեկ այլ իմաստի, առավելապես հակադիր իմաստի ծխում:

Տարածականության կարգը ստորոգաբար դրսևորվում է որպես տարածական հարաբերություն  $R_{loc}/xy/$  նկարը պատին է/, առանձին դեպքերում նաև որպես տարածական հատկանիշ  $S \text{ est } P_{loc}$  շաշտը մեծ է/: Տարբերակելի են տարածական ստորոգման ստատիկ և դինամիկ, ընդհանուր և մասնավոր, օբյեկտիվ և սուբյեկտիվ ենթատեսակներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ բացահայտ, ոչ բացահայտ և առկայական ձևերով:

Տարածական բացահայտ և ոչ բացահայտ ստորոգումների տարբերությունը կարելի է վեր հանել նախադասության մեջ տեղացույց արտահայտության դերի ուսումնասիրությամբ: Տարածական բացահայտ ստորոգումը դրսևորվում է այնպիսի նախադասություններում, որոնցում բայն առանց տեղացույց արտահայտության կամ չունի ինքնուրույն գործածություն /Աննան ցանկում է.../, կամ էլ չի կարող գործածվել տարածական իմաստով /հմտ: Աննան աչքում է~ Աննան աչքում է Երևանում/: Տարածական ոչ բացահայտ ստորոգումը պարունակվում է այնպիսի նախադասություններում, որոնցում տեղացույց արտահայտության առկայությունը շարահյուսական առումով պարտադիր չէ /Երեխաները խաղում են բակում/:

Տարածական ոչ բացահայտ ստորոգական կառույցները բնույթով բազմազան են՝ երկրորդական նախադասություն, դերբայական դարձված, բառակազմություն, բարդ և անանցավոր բառեր: Նման դրսևորումների շնորհիվ տարածականության կարգն օժտված է տեքստակազմական և ոմտաարբերակիչ հնարավորություններով:

Տարածական առկայական ստորոգումն իրականանում է մեկ այլ, ոչ բացահայտ տարածական ստորոգման խորքի վրա: Այն, թեև համախ հակադրվում է բացահայտ ստորոգական իմաստին, սովորաբար որոշվում է խոսքաշարով:



ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Որևէ իրականությունը քաջահայտելու համար անհրաժեշտ է ծնողներն որպէս նրա գոյությունը պայմանավորող բաղադրիչները: Բառը նույնպէս տարբերակներ է՝ ամբողջական, ավարտուն և ինքնուրույն միավոր լինելով հանդերձ: Այն վերլուծելի է և եզրակացնողական տարրեր բաժիններում, նախած թե ինչ միավորներ են մեզ հետաքրքրում:

Բառերի առաջացման ընթացքի, նրանց կառուցվածքի, բաղադրիչների տեսակների, սրանց ներքին և արտաքին կապերի, բառաստեղծման հետ կապված այլ հարցերի ուսումնասիրմամբ զբաղվում է բառակազմությունը:

Բառի, ,կազմադրականություն, , ուսումնասիրելու նպատակով օգտվում ենք երկատման սկզբունքից: Բառը հառույթավորելիս ստանում ենք երկու բաղադրիչ, որոնցից երկրորդը սովորաբար արտահայտում է գլխավոր նշանակությունը /բարդ բառի մեջ/, իսկ առաջինը լրացնում է նրան: Իսկ եթե բառավարտող միավորը ժանցն է, ապա այն կարող է լինել թե առաջին /նախածանց/, թե երկրորդ /վերջածանց/ բաղադրիչը: Երկու բաղադրիչներից մեկը բառը սերողն է, մյուսը՝ ավարտողը: Երկուսի գոյությունն էլ պարտադիր է: Ի տարբերություն ձևակազմության, բառակազմության մեջ երկուսն էլ հավասարազոր են, մեկը չենք կարող դիտել հիմնական, մյուսը՝ երկրորդական: Ըստ այդմ, ունենք սերող և ավարտող հիմույթներ, որոնք կարող են լինել ընթաց և ամփոփ:

Արմատները՝ որպէս բառակազմական հիմույթներ, որոշ բառերում հանդես են գալիս հնչյունափոխված՝ պատմական կամ տիպաբանական տարբերակներով, որոնք գործունեությունը կարող են լինել կենսական և անկենսական:

Հայերենի խոսքի մասերից յուրաքանչյուրը բնորոշվում է բառակազմական ինքնատիպ կաղապարներով:

Ինչպիսի բառափախ էլ ներկայացնի կամ ինչ կաղապար էլ ունենա տրվյալ բառը, կարելի է բանաձևել այն և աստիճանական երկատման միջոցով հասնել վերջնական բաղադրիչներին, որոշել նրանց միացման հաջորդականությունը և ուղղվածությունը: Զեկուցման մեջ, որպէս օրինակ, մի քանի բառերի համար արվում են նաև այդպիսի կաղապար-բանաձևերի նմուշներ:

ԵՄՐՈՒՄԱԿԱԿԱՆ ՆԵՐՎԱՆ ՀԱՅՆՐԵՆԻ ԲԱՐՔԱՌՆԵՐՈՒՄ

Հայ բարբառագիտութեան մեջ ընդունւած է արեւմտյան տարածքի մի շարք բարբառներում /մասամբ նաև արևելյան մի քանի բարբառներում/ ժամանակի կարգում տարբերակել ընդհանրական և շարունակական ներկաները որպես ինքնուրույն քերականական կարգեր: Ընդհանրական ներկան ցույց է տալիս խոսքի պահի հետ կապով գործողութիւն, իսկ շարունակականը՝ մի այլպիսի գործողութիւն, որը սկսվել է ներկայում և դեռ չի վերջացել:

Ընդունված է շարունակական ներկայի բայածներն ըստ կազմութեան խմբավորել մասնիկավոր և դերբայավոր ժևերի:

Մասնիկավոր կազմութիւնը հառուկ է արեւմտյան խմբակցութեան մի շարք բարբառների, որոնք նշված իմաստը դրսևորելու նշատակով ներկայ բայածներին կցում են զանազան մասնիկներ՝ կողք, ուկի/ցուկի, էք, հայէ, հայկակ...: Սրանք, ի տարբերութիւն ընդհանրական ներկայի ցուցիչների, միտրծեք են, հանդիպում են միայն սահմանական ներկայի ու անկատարի ուղործում՝ ձևավորելով դրանց շարունակական ենթիմաստը:

Արևելյան խմբակցութեան մի շարք վայրերում՝ Ղարաբաղ, Հաղրուք, Հավաքիկ, շարունակականի դերբայավոր ժևեր են համարվում անորոշ դերբայի գործիական հոլովածակով և օժտնդակ բայով հարադրված կազմութիւնները: Սակայն դրանք նշված վայրերում ունեն սահմանափակ կիրառութիւն և քովանդակութեան դիտանջում արտահայտում են ստորոգայլի գործողութեան անմիջապես նախորդող գործողութիւն, այսինքն՝ չունեն շարունակական ներկային քնորոշ՝ խոսելու պահին սկսված անակուն գործողութեան իմաստ:

Շարունակական ներկայ տերմինը հայերենի բարբառների հիշյալ լեզվական իրակութեան էութիւնը և իմաստը ամբողջովին չի արտահայտում, քանի որ նրանում առաջին հերթին շեշտվում է ոչ թե գործողութեան անվանութիւնը, այլ՝ խոսքի պահին կատարվելը, ուստի նշատակահարմար է այն անվանել այլ տերմինով:

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ  
ԵՐԿԼԵԶՎԱԿՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇ ԳԵՐԸ

Երևանի Վ.Բրյուսովի անվ. ոռոսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի ուսանողուժյան խոսքից քաղված նյութի հիման վրա քըննելով երկլեզվուժյան հեռախոսներից մեկը՝ լեզվական ներթափանցումները, դրանք դիտարկում ենք երկու հայեցակետով. ա/հայերենից ներթափանցումներ ոռուս-հայերեն երկլեզվուժյան կրողների ոռուսերեն խոսքում, բ/ոռուսերենից ներթափանցումներ հայ-ոռուսերեն երկլեզվուժյան կրողների հայերեն խոսքում: Ներթափանցման երևույթները քննում ենք հսշյունական, քերականական և քառային մակարդակներում, անդրադառնալով հիմնական և ամենաառաքանակ ղեղքերին:

1. Հսշյունական մակարդակ.

ա/ոռուս-հայերեն երկլեզվակիրների հայերեն խոսքում ոռուսերենի ներթափանցումները հիմնականում արտահայտվում են քմայնացմամբ /Տիգրան, դիրեկտոր, ինստիտուտ/, ա-ասուժյամբ /Վալոդյա, կանֆետ, կասսյուկ/ և այլն,

բ/հայ-ոռուսերեն երկլեզվակիրների ոռուսերեն խոսքում հայերենի ներթափանցումները հիմնականում արտահայտվում են ապաքմայնացմամբ /ДЭВЭНОО-ТО, ЛОШАД, СУДБА /, գերքմայնացմամբ /ДОЛЬГ, ВОЛЬНА, ФУНЬК-ЦИЯ / և այլն:

2. Քերականական մակարդակ.

ա/ոռուս-հայերեն երկլեզվակիրների հայերեն խոսքում ներթափանցումը դրսևորվում է ոռուսերենի խնդրոական կառույցների պաքմենմամբ /դեկանը իր մոք է, նա նոմիաա փողոցի վրա է ալրում, ես ծանոթացա քաղքի հեռ/ և այլն,

բ/հայ-ոռուսերեն երկլեզվակիրների ոռուսերեն խոսքում ներթափանցումը դրսևորվում է ըստ սեռի համաքայնուժյան խախտումների ձևով /маленький девочка, большой прогулка /, քացառական հոլովի իմաստ արտահայտող С, ОТ, ИЗ նախդիրների ոչ սովորական գործածուժյամբ /разводить-ся от мужа, выходить с дома, убежать с милиции/, ոռուսերենի սեռական, արական և հայցական հոլովների խոռն գործածուժյամբ /вам нет, вас пишу, вам пишу / և այլն:

3. Բառային մակարդակ.

ա/ոռուս-հայերեն երկլեզվակիրների հայերեն խոսքում նկատելի է անհարկի փոխառուժյունների առաք օգտագործումը /Էդիա, ֆորմացիա, պերիոդ,



պոլիտիկա, պրեզիդիում, ռեսպուբլիկա/ և այլն,

ք/հայ-ռուսերեն երկլեզվակիրների ռուսերեն խոսքում նկատվում են հայերեն բառերի ներմուծումներ /В этом предложении нужно поставить ստորակետ, я вчера была у լեքիմ-а, пойдём кушать, башкилин-а на базаре нет / և այլն:

Մ.Խ.ԳՅՈՒՆՆԱԶԱՐՅԱՆ /Երևան/

ԺՈՂՈՐԴԱԵԱՆ ՎԵՆՑԱՂԻ ԲԱԽԱՊԱՇԱՐԻ  
ԺՈՒԹԱՅԱԼ ՄԻ ՇԵՐՏԻ ՄԱՍԻՆ

Ազգագրական բառապաշարում մեծ տեղ ունեն փոխառությունները: Արոնական /պաշտամունքային և կիրառական/, հնագիտական ազգագրության շատ իրերի անվանումներ հունալատինական փոխառություններ են: Ժողովրդական կենցաղի, բառապաշարում քիչ չեն նաև թուրք-թաթարական փոխառյալ բառերը:

Այդ փոխառյալ բառերը կիրառվում են ոչ միայն հայերենում, այլև հարևան ժողովուրդների լեզուներում, ձեռք բերելով նաև տերմինաբանական արժեք:

Տարածական նման լայն ընդգրկումը պայմանավորված է նրանով, որ միջնադարից սկսած այդ լեզուները կրող ժողովուրդները դարձել շարունակ եղել են միևնույն պատմաազգագրական ոլորտում: Ժողովրդական կենցաղի բառապաշարում, բնականաբար, արժացույցվել են հենց այդ պատմաազգագրական ընդհանրությունները:

Այդ բառապաշարում քիչ չեն նաև փոխառյալ գուգածանքներ, որոնք բառարանագրական աշխատանքում առանձին զգուշավորություն են պահանջում: Մեր ժողովրդական վերաբերմունքը մեկի կամ մյուսի նկատմամբ միշտ չէ, քանի որ այդ ձևերը հայերենին են անցել տարբեր ժամանակներում և արդյունք են տարբեր պատմամշակութային առնչությունների:

Այդ բառապաշարը ունի աղբյուրագիտական արժեք ոչ միայն լեզվի պատմության, այլև պատմամշակութային բնույթի ուսումնասիրություններին համար:

Այդ պայմաններում առավել անհրաժեշտ է դառնում հայերենի պատմական բառարանում ժողովրդական կենցաղի բառապաշարի փոխառյալ շերտի առավել մանրամասն ընդգրկումը, օգտագործելով ինչպես մյուս ժողովրդական բառարանների, այնպես էլ համաբարբառների նյութը:

# ԺԱՄԱՆԱԿԱՆԻՑ ԳՐԱՆԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԸ ՇԵՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԵՇՏ ԴԻՐԵՐՈՒՄ

Հնչույթները բանավոր խոսքում իրականանում են հնչյունների ձևով: Դրանց միջև գոյուլթյուն ունի որոշակի հակասություն. եթե հնչույթները դիտվում են որպես վերացական միավորներ, որոնք զուրկ են ժամանակային և քանակական հատկանիշներից, ապա հնչյունները, հանդես գալով իրական ժամանակի ընթացքում, բնութագրվում են քանակական որոշակի հարաբերություններով, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով:

Մյուս կողմից՝ հնչյունների և հնչույթների միջև գոյուլթյուն ունեցող տարբերությունները պայմանավորված են այն փաստով, որ հնչյունները նման չեն աղյուսների, որոնց շարակցմամբ ստացվում են խոսքի ավելի մեծ միավորներ՝ հնչաբառեր, հնչաշարույթներ, հնչադասություններ: Վանկի սահմանում, որը արտասանվածքի նվազագույն միավորն է, հնչյունները գտնվում են սերտ փոխադոցության մեջ, որը հնչույթների տարբերակների առաջացման հիմք է ծառայում:

Խոսքը բնութագրվում է ժամանակային որոշակի կազմակերպվածությամբ, որը մի կողմից ունի համեմատական օրինաչափություն, մյուս կողմից՝ պայմանավորված է յուրաքանչյուր տվյալ լեզվի առանձնահատկություններով: Ահա այս վերջին խնդրի բացահայտմանն է նվիրված մեր ուսումնասիրությունը:

Հայերենի, ինչպես նաև շատ այլ լեզուների համար շեշտակիր դիրքը առավել նպաստավոր է ժայնավորների էական հատկանիշների ի հայտ բերման համար: Բառասկիզբը, որպես երկրորդական շեշտ կրող դիրք, նույնպես ուժեղ է և, հետևաբար, այստեղ ևս հանդես են գալիս նրանց քուր հատկանիշները:

Ձայնավորների փոփոխությունները տեղի են ունենում հիմնականում անշեշտ դիրքերում: Համեմատած Ֆրանսերենի, անգլերենի և հատկապես ռուսերենի հետ՝ հայերենի անշեշտ ժայնավորները ավելի քիչ են ենթարկվում փոփոխությունների:

Փոփոխության աստիճանը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

1. Բառի ձևողությունը կախված է նրա վանկային կառուցվածքից. որքան բազմավանկ է բառը, այնքան կրժատվում է այն կազմող հնչյունների

աւտոմատները: Հնչյունների քանակական փոփոխութիւնները ազդում են նրանց որակի վրա: Հմտ.՝ ապ, հապ, հապապ, հապապապ:  
2. Չայնականների աւտոմատները կախած է նաև նույն վանկում՝ կից բաղաձայնների որակից՝ /pat/, /bad/, /p'at'/ /խուլ, ժայնդ, շնչեղ խուլ/, կազմավորման եղանակից՝ /pat/, /sat/, /vat/ /հպական, շփական/:

3. Կարևոր հանգամանք է շեշտի նկատմամբ վանկի զրապած դիրքը. նախաշեշտ վանկը, որպես կանոն, թույլ է, իսկ թույլ վանկում ժայնավորը ենթարկվում է փոփոխութեան:

4. Հնչյունները, հատկապես ժայնավորները, աւշեշտ դիրքերում փոփոխվում են ըստ ուժգնութեան. շեշտված վանկերում դրանք ավելի ուժեղ են, քան աւշեշտ վանկերում:

Ս. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ /Երևան/

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ԼԵՋԱԿԻՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԵՐԸ

Գրիգոր Տաթևացին միջնադարյան նշանավոր մատոողներից է: Հաջորդելով Հովհաննես Որոտնեցուն, 1390-1402թ.թ. նա դեկավարել է Տաթևի համալսարանը, ծավալել իզգաճկողմանի գործունեութիւն: Գրել է 2 տասնյակից ավելի աշխատութիւններ և մեկնութիւններ, որոնց մեջ անդրադարձել է ամենաաւելի հարցերի /փիլիսոփայական, աստվածաբանական, հասարակագիտական, բժշկագիտական, աստղագիտական, լեզվագիտական և այլն/: Քերականական առանձին աշխատութիւն չի ստեղծել, թեպետ իբրև Երզնկայի կարող են համարվել Գևորգ Այկառացու և Արիստակեսի երկերի մեկնութիւնները, որովհետև դրանց մեջ տեղ է գտել նաև հեղինակի հայացքների շարադրանքը: Քերականական այդ մեկնութիւնները գրելով՝ Տաթևացին հետապնդել է գործնական նպատակներ /քանի որ նա միաժամանակ դեկավարել է ,գրչութեան արվեստի, հետ կապված աշխատանքները Տաթևի դպրոցում/: Այկառացու և Արիստակեսի երկերը Տաթևացու օրոք որոշ փոփոխութիւնների, հավելումների և բացառութեան կարիք են զգացել, ուստի նա խմբագրել է դրանք՝ ներկայացնելով իր կարծիքով մշմարիտ ու ընդունելի. եթե անսկսածը ամբողջական չէ, հավելումներ է կառարել, իսկ եթե սխալ է, մի կողմ է թողել և առաջադրել նորը: Այդ մեկնութիւններում, նաև մյուս աշխատութիւններում, Տաթևացին մանրամասն վերլուծութեան է ենթարկել հնչյունաբանութեանը, ձևաբանութեանը, շարահյուսութեանը վերաբերող բազմաթիվ խնդիրներ: Միաժամանակ Տաթևացին բազմաթիվ բառեր է բացատրել և ստուգաբանել: Նա դա անհրաժեշտ է համարել, որովհետև նրա կար-



ծիքով բառերն ունեն ներքին իմաստներ, որոնք շատ համախ խաթարվում են ազեա ընթերցողների, գրիչների կողմից: Նկատելով նաև, որ հայերենում բառերի զգալի մասը բազմիմաստ է, նա թվարկել է մեկնվող բառերի զրեթե քոլոր իմաստները, այսպիսով, ստեղծելով հոմանիշ բառերի մի մեծ ցանկ: Մյուս կողմից՝ մեկնվող բառերի մի մասն արդեն անհասկանալի դարձող, գործածութլուսից դուրս եկող կամ բառիմաստի փոփոխութլուն կրած բառերն են, ուստի դրանց ցանկով էլ կարելի է որոշ եզրակացութլուններ անել հայերենի բառաշարում այդ դարերում կառարված փոփոխութլան ընթացքի վերաբերյալ: Բացի այդ, այդ մեկնութլունները պատմական արժեք են ներկայացնում ինքնին, որովհետև դրանք բառերի քացատրութլան վաղ փորձերից են և դրանց զգալի մասը գիտական է և այսօր էլ ընդունելի:

Քննելով Տաթևացու վերոհիշյալ մեկնութլուններն ու մյուս երկերն ընդհանրապես և ի մի բերելով քերականական հարցադրումները, կարելի է խոսել նրա լեզվագիտական հայացքների մասին:

Քննութլունը ցույց է տալիս, որ Գրիգոր Տաթևացին ծանոթ է ոչ միայն հիշատակված քերականների աշխատանքներին, այլև նախորդ լեզվագիտական մաքին ընդհանրապես /բազմիցս վկայակոչում է այս կամ այն հեղինակին, կատարում բառացի մեջբերումներ/, որը և հնարավորութլուն է տալիս նրա կատարելու տեսական ընդհանրացումներ ու եզրակացութլուններ, ընդ որում դրանք երբեմն կապվում են նրա փիլիսոփայական, որոշ դեպքերում էլ՝ քաղաքական հայացքների հետ:

ա. Մեծ դեր տալով մարդու ուղղահայաց կեցվածքին, Տաթևացին դրա հետ է կապել մարդու՝ իբրև բանական էակի գործելու, ինչպես և խոսելու ունակութլունը, մի տեսակետ, որը գիտականորեն հաստատվեց մի քանի դար հետո միայն:

բ. Լեզուն Տաթևացու կարծիքով մաքի գործիք է. միտքը վերջնական ձևավորվում է լեզվի միջոցով, ստանալով զրավոր կամ քանավոր արտահայտութլուն /,,Արգանդ մառցն ծնանի զբանս և լեզուն կերակրէ<sup>1</sup>,,/:

գ. Ժողովուրդները միմյանցից բաժանվում են ոչ միայն սահմաններով, այլև իրենց լեզվով /,,Եւ սահման կոչէ զլեզուս, որ բաժանէ ի միմեանց զազս և զազինս,, ,,,Եվ դարձեալ որպէս սահման զտեսակս ազգացն նշանակէ, նոյնպէս և լեզուն զիւրաքանչիւր ազս ցուցանէ<sup>2</sup>,,/:

1 Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 276:

2 Նույնի՝ Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729, էջ 298:

դ. Հայանի է, որ 17-րդ դարում եվրոպայում ընդունելություն գտած Գեորգիանում մերժված երթախան վարկածը, ըստ որի աշխարհի լեզուններն առաջացած էին համարվում երթախանից: Հայ միջնադարյան լեզվաբանները, այդ թվում և Տաթևացի, այս վարկածի առաջադրման հարցում կանխել են եվրոպացի մոսածողներին:

Ե. Խոսքի մասերը դասակարգելիս Տաթևացին հետևել է Ա' Դիոնիսիոս Թրակացուն, և Արիստոտելին, այսինքն ընդունել է խոսքի մասերի դասակարգման և քերականական, և փիլիսոփայական-առամաբանական սկզբունքը, առաջին դեպքում խոսքի մասերը բաժանելով ութ, երկրորդ դեպքում՝ երկու խմբի:

Գ. Անգիջում պայքար ծավալելով նրանց դեմ, ովքեր օտար ազդեցություններ անհրաժեշտ փոփոխություններ էին մտնում ազգային մշակույթի, ծեսերի, այլև լեզվի մեջ, Տաթևացին հանդես է եկել ի պաշտպանություն գրաբարի անադարտության, նշել նրա՝ իբրև գրոց լեզու պահելու, նրա ավանդներին հետևելու անհրաժեշտությունը:

Է. Նույն խստությունը նա դառապարտել է գրավոր խոսքում, աշխարհիկ և արքայական, բառերի գործածությունը, լեզվի ավանդական դասական ձևի պահպանությունը դիտելով իբրև ազգային ինքնության պահպանման միակ գրավական:

Ա. Գ. ԴԱՐԲԻՆՅԱՆ /Երևան/

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՑԱՏՐԱՆԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ  
ԲԱՌԱՀՈԴԱԾՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ ԵՎ ԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ  
ՄԵԿՈՒԹՅԱՆ ՍԵՋՐՈՒՆՔՆԵՐԸ

Բառահոգվածը բառարանի կառուցվածքային և հաղորդակցական հիմնական միավորն է:

Բառահոգվածում գլխաբառը բառարանագրական ասույթի սուբյեկտն է, իսկ գլխաբառի բացատրությունը՝ պրեդիկատը: Նրանք իրար հետ կապվում են իմաստային հավասարություն արտահայտող հանգույցով:

Բացատրական բառարանի բառահոգվածում պետք է համադրվեն բացառովող բառային միավորի հարացույցային ու շարակարգային հակությունները և քերականական ու բառային իմաստների հակադրամիասնությունները:

ԱՐ-ի և ԼԻՐ-ի բառահոգվածները բաղկացած են երեք մասից: Առաջին մասում, որը կոչվում է լեմմա, ներկայացվում է բառային միավորը: Երկրորդ մասում բառային միավորը մեկնվում է: Երրորդ մասում բացատրվում են այն դարձվածները, որոնց գլխավոր բաղադրիչը բացատրվող բառային

միավորն է :

Լեմմայի մեջ են մտնում գլխաբառը, վերջինիս քերականական ընդ-  
թագիրը /խոսքիմասային կարգը և ձևաբանական փոփոխելիությունը/ և ոմե-  
կան ընդթագիրը :

Բառահոդվածի երկրորդ մասում մեկնվում է գլխաբառը իր ընդոր հա-  
յեցակերպերով : Տարբերում ենք մեկնություն հասկալ միջոցները .

ա. բառարանային բացատրություն,

բ. բառագիտական ենթահամակարգի մյուս տարրերի նշում,

գ. օրինակներ,

դ. նկարներ,

ե. թարգմանություն :

Լիթ-ում փոխառյալ բառերի բառահոդվածի վերջում տրվում են ստու-  
գաբանական որոշ տեղեկություններ : Բառերի մեկնության հիմնական միջոց-  
ներն են բառարանային բացատրությունը և օրինակները : Որոշ տերմիններ  
ստանում են թարգմանական մեկնություն /հմտ. բուսաբանական տերմիննե-  
րի լատիներեն անվանումը/ : ԱՔ-ում ևս բառերի մեկնության հիմնական մի-  
ջոցները բառարանային բացատրությունը և օրինակներն են :

Բառարանային բացատրությունը մի նախադասություն է, որը պարու-  
նակում է մի X տարր /բացատրվող բառը/, որի փոփոխման դեպքում բացա-  
տրությունը դառնում է սխալ : Բացատրության մեջ բառը ընդորոշող հատ-  
կանիշները պետք է լինեն անհրաժեշտ և բավարար : Բացատրության մեջ չը-  
պետք է լինի կրկնաբանություն : Բացատրության մեջ շրջան է առաջանում  
այն դեպքում, երբ նախադասությունը իր մեջ մտնող մեկից ավելի տարրե-  
րի բացատրությունն է :

Խղեալական բացատրական բառարանի աջ մասում չպետք է լինեն բա-  
ռեր, որոնք չկան ձախ մասում : Բացատրող բառերը պետք է ավելի մեծ հա-  
մախականություն ունենան, քան բացատրվող բառը :

ԱՔ-ում և Լիթ-ում բառարանային բացատրության հիմնական մեթոդնե-  
րն են՝ համանշային, վերլուծական, համադրական, հիմանաշանակային, օս-  
տենսիվ, տեքստային, կանոնային :

ԱՔ-ում և Լիթ-ում բացատրության հիմնական տեսակներն են՝ նկարա-  
գրական, համանշային, հոլումային, գործառական :

Երկու բառարաններում էլ բառերի մնշող մասը ստանում է ընդարձակ  
նկարագրական բանասիրական բացատրություն : Գործառական սահմանափակում-

Քննվում են Ե.Բ.Աղայանի, ,Արդի հայերենի բացատրական բառարանը, ,  
Երևան, 1976 /կրմատ՝ ԱՔ/ և ,Ժամանակակից հայոց լեզվի բացատրական  
բառարանը, , Երևան, 1969-1980 /կրմատ՝ Լիթ/ :



ներ ունեցող բառերը ստանում են համանշալին բացատրութիւն: Հղումա-  
յին բացատրութեամբ մեկնելով են բառերի բառքերականական ձևերը, ինչ-  
պես նաև ուղղագրական և ոճական ժողովրդականները: Գործառական բացատրու-  
թեամբ մեկնելով են բառային մասնավոր իմաստից զուրկ խոսքի մասերը:

Է.Ս.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ /Երևան/

ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԱՊԸ ԺԱՄԱՆԱԿԱՆԻՑ ՀԱՅՅԵՐԵՆԻ ԱՆԱԿԱՆԱԿԱՆ  
ԲԱՌԱԿԱՊԱՆՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ժամանակակից հայերենի բառերը ուսումնասիրելիս ելնում ենք զոր-  
ծառական-շարահյուսական սկզբունքից, այսինքն՝ հաշվի ենք առնում բա-  
ռակապակցութեան գլխավոր անդամի խոսքիմասային պատկանելութիւնը:

Ածականի խնդրառական և աղղրական լրացումների քննութիւնը կա-  
տարվում է ըստ համապատասխան կաղապարների:

Ինչպես և քոլոր ածականի բառակապակցութիւնները, ածական բառակա-  
պակցութիւնները իմաստային սերտ միացութիւն են կազմում, որի բնո-  
րոշ գծերից են իմաստային ամբողջականութիւնը և կառարյալութիւնը:  
Բառակապակցութեան իմաստային ամբողջականութիւնը արտահայտվում է նրա  
կազմի մեջ մտնող բառերի՝ իրար նկատմամբ ունեցած իմաստային ձգտմամբ:  
Այդ պատճառով, բառերը ուսումնասիրելիս պետք է հատկապես ուշադիր լի-  
նել դեպի շրջապատի բառերը և աշխատել չկտրատել իմաստային կապի հան-  
գույցները, որ առկա են նրանց միջև:

Ածականական բառակապակցութիւնները ուսումնասիրելիս մենք հաշ-  
վի ենք առնում ոչ միայն նրանց շարահյուսական կապերը, այլև լեզվա-  
կան այն միավորների/գոյականների/իմաստը, որոնց հետ նրանք գուգորդ-  
վում են: Այսինքն՝ այստեղ ելակետային է հանդիսանում ածականների ընտ-  
րողութեան հատկութիւնը:

Մենք ածականները խմբավորում ենք ըստ այն հատկանիշի, թե գոյա-  
կանի իմաստային ինչպիսի խմբերի հետ կարող են նրանք գուգորդվել: Ո-  
րոշվում են գոյականի իմաստային այն կարգերը, որոնց ածականի նկատ-  
մամբ զրավում են շրջապատի դիրք: Ածականների շարահյուսական գուգոր-  
դելիութիւնը ուսումնասիրվում է ձևակցութեան մեջ, որը բաղկացած է  
ածականից՝ իբրև միջուկից, և նրա շրջապատից՝ գոյական անունից: Ձևակ-  
ցութիւնը ստեղծվում է ստույգ կառուցվածքային հիմքի վրա, այսինքն՝  
ածականի և գոյականի էական կապի հիման վրա:

Ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ ժամանակակից հայե-  
րենի համար մենք կուսենանք ածականի գուգորդելիութեան 15 ածականի ձե-

վակցութիւնն:

Տվյալ ձևակցութիւնների ուսումնասիրութիւնը և դասակարգումը հնարավորութիւն է տալիս կազմելու ժամանակակից հայերենի ածականների իմաստային զուգորդելիութեան բառարան:

Գ.Ա.ԵՆԳՈՅԱՆ /Երևան/

ՀԱՍԳԻՏԱԿԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆԿԱՆՈՒԽՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Հայ հնագիտութիւնը կարելի է դասել գիտութեան այն մշակութիւնների, որոնք հիմնականում զարգացել են սովետական իշխանութեան տարիներին: Այս շրջանում հայերեն լեզվով ստեղծված հնագիտական քննութիւն անդրանիկ երկերում հանդիպում ենք մեզ հետաքրքրող հնագիտական իրերի խմբի՝ խեցեղենի, առաջին դասակարգմանն ու կավամանների առանձին մասերի անվանումներին:

Հետագա տարիներին ստեղծվել ու ստեղծվում է հնագիտական ստվարածավալ զրականութիւն հայերեն լեզվով, հարստանում է հնագիտական տերմինաբանութիւնը: Տերմինաշինութիւնն ընթանում է խիստ բարձրացման և փոխառյալ ձևերի մերժման, զրական հայերենին ավելի հարազատ տերմինների հաստատման մասնաւորով /քափցիքի փոխարեն քամիչ, խոնչալի փոխարեն՝ սկուտեղ, կեղամիկայի փոխարեն՝ խեցեղեն և այլն/:

Սակայն տերմինաշինութեան հարցում դրսևորվում է որոշ տարերայնութիւն, անմիօրինակութիւն: Համախ տերմինային համակարգի մեջ են մտնում տերմինացվող բառերն իրենց հոմանիշային շարքերով /իրան-մարմին, գալ-կուժ-կուլա-սափոր, խուփ-կափարիչ, խնոցի-ձծում և այլն/, չեն մըշ-զըըտվում տերմինների իմաստային սահմանները /ջրաման, ծորակավոր անոթ/:

Խեցեղենին ու կավամանների առանձին մասերին վերաբերող հնագիտական տերմինները ըստ ծագման կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

ա/ զրական հայերենում ստեղծված և զրաբարից, բարբառներից ու ժողովրդախոսակցական լեզվից ժառանգած բառեր, որոնք երբեմն գործածվում են բառիմաստի լայնացումով կամ մասնավորեցմամբ /սափոր, կարաս, պուլիկ, ուս և այլն/:

բ/ Տարբեր լեզուներից կատարված փոխառութիւններ /փիւլա, հիդրիա, ամփորա/:

Տերմինների հոմանիշութիւնից խուսափելու, նրանց մշտնջաման համար պետք է հիմք ընդունել ոչ միայն կավամանների գործառական նշանակութիւնը, այլև նրանց տիպաբանական դասակարգումը, որը պետք է կատար-

վի՛ ելնելով կալամանների ձևաբանական հատկանիշներից: Սա պահանջում է  
լեզվաբանների ու հնագետ-ազգագրագետների համատեղ աշխատանք:

Ս.Ա.ԵՐԳԻՆՅԱՆ /Երևան/

Մ.ՇՈՒՈՒՄՎԻ , , ՀԵՐԿԱՅԻ ԽՈԳԱՆԻ , , ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ԼԵԶՎԱՈՐԱԿԱՆ ՄԻ ԶԱՆԻ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դժվարին խնդիր է ծառացել Մ.Արմենի առջև՝ ձեռնամուխ լինելով  
, , Հերկած խոպանի , , թարգմանությունը, երբ նկատի ենք ունենում հեղի-  
նակի լեզվի և ոմի բազմազանությունը:

Շուրջովն ունի խոսքի բարձր մշակույթ, որին բնորոշ են մշար-  
տացիությունը, կանոնականությունն ու պարզությունը: Նա ունի նուրբ  
լեզվազգացողություն, անհատական լեզվի ոճական նրբություն-  
ներին: Նրան հատուկ են քառերի միշտ ընտրությունը, տեղին գործածու-  
թյունը, դրանց հուզական բնույթի կիրառումը, ամբողջական խոսքաշարի  
ստեղծման հաջողվածությունը, տրամաբանական շեշտերի դիպուկությունն  
ու մշտնջենությունը, անգամ հատուկ անունների նպատակային ընտրությու-  
նը և այլն: Այս առումով թարգմանչին հիմնականում հաջողվել է սահուն  
անցում կատարել մի լեզվամտածողությունից մյուսին, պահել հեղինակա-  
յին խոսքն ու մտածելակերպը, ստեղծել բնագրին հարազատ վերարտադրու-  
թյուն:

, , Հերկած խոպանը , , աչքի է ընկնում ժողովրդական մտածողությամբ.  
նրան բնորոշ են դարձածների, առածների ու ասացվածքների, աֆորիզմնե-  
րի, թևավոր խոսքերի, բառախաղերի և շրջապատյան տարաբանակ կիրառու-  
թյունները, որոնց համարժեքները մեծ մասամբ դիպուկ և միշտ են գտնե-  
ված:

Առանձին վարպետություն են պահանջել խոսքի պատկերավորման և լեզ-  
վական արտահայտչական միջոցների /մակդիր, փոխաբերություն, համեմատու-  
թյուն, մարտասանական հարցում, աստիճանավորում, կրկնություն, հեզ-  
նանք և այլն/ միշտ ընկալումն ու թարգմանությունը. մի հանգամանք, ո-  
րը շատ բանով է նպաստել թարգմանության պատշաճ մակարդակի պահպանա-  
նը:

Թարգմանական տեսակետից դժվար է նաև գործող անձանց տիպականաց-  
նող խոսքը հայերեն ներկայացնելը: Խոսք, որը հարուստ է ոճական հո-  
մանիշներով, նրբաբանություններով, հարանունությամբ, գույնավորությու-  
նով, հականիշներով, նորաբանություններով, հնաբանություններով, օ-  
տարաբանություններով, բարբառային բառերով և այլն:



Այս բոլոր հարցերը միշտ ընկալելով և խնդրո առարկան պատվով լուծելով հանդերձ, Մ.Արմենի թարգմանությունը գերծ չէ թերություններին, որոնք առանձին դեպքերում կամ խաթարում են հեղինակի լեզվի և ոմի մըմարտացի պատկերը, կամ հանգեցնում են հայերենի քերականական օրինաչափությունների խախտմանը:

Ե.Լ.ԵՐԱՆԿՅԱՆ /Երևան/

ՅՈՒՑԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՑԻՆ ԱՄԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՑՈՂՈՒԻՐ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Բառիմաստի բառարանային մշակումը լեզվաբանության դժվարագույն խնդիրներին մեկն է: Տարբեր բնույթի բառային միավորներ, տարբեր տիպի իրազեկում են պարունակում և համապատասխանորեն պահանջում են տարբեր տիպի բառարանային բացահայտում և առանձնահատուկ միջոցների ընդգրկում:

Ցուցական բառերը, լինելով բառապաշարի յուրահատուկ մի դաս, սահմանվում են որպես անվանողական միավորներ և ցույց են տալիս հաշվարկման որևէ ելակետ, որի նկատմամբ բնութագրվում են իրականության տարբեր երևույթները: Ցուցականությունը լեզվական երևույթ է, այն բնորոշ է բառիմաստին և ընդգրկվում է բառի իմաստային կառուցվածքում: Այն հատկանշական է լեզվի հնարավոր միավորներին և պետք է համապատասխան արտահայտում գտնի բառարաններում:

Հայերեն, ուսեներեն և անգլերեն բացատրական բառարաններում ցուցականության բացահայտման տարբեր միջոցների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ նրանց բառարանային բացատրությունը ոչ միշտ է համարժեք և միանշանակ, մի բան, որ անկասկած դժվարացնում է ցուցական բառիմաստի միշտ ընկալումը և, հետևաբար, միշտ կիրառումը:

Քննարկվող բառերի իմաստային առանձնահատկությունն անհրաժեշտ է դարձնում, որպեսզի դրանք բառարանում հատուկ մշակում ստանան: Ցուցական, ինչպես նաև կիսացուցական բառերի բառարանային բացատրությունը պետք է անալիտիկորեն նշի հաշվարկման ելակետը՝ ցուցական կողմնորոշման կենտրոնը, որը կարող է լինել խոսքային իրողությունը և նրա հիմնական /պարտադիր/ կողմնորոշիչները՝ խոսողը, լսողը, տեղը և ժամանակը, ինչպես նաև հաշվարկման որևէ այլ ելակետ:

Ցուցականության բառարանային արտահայտման բոլոր հիմնական միջոցների միավորումը, ինչպես նաև ցուցական միավորների իմաստների ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս պարզել, թե ինչ չափով են բառարանները ի վիճակի տեղեկություն տալ ցուցականության աս-

աիմանի մասին: Յուլյանների բառարանային մշակման կարևորության խընդիրը ակնհայտ է ինչպես առավել համարժեք հաղորդակցման, այնպես էլ դասավանդման մեթոդիկայի տեսակետից:

Է.Մ.ՋԱԴՈՅԱՆ /Լենինական/

ԲԱՌԱՎԵՐՋԻ ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ԽՈՒԼ/ՉԱՅՆԵՂ  
ՀԱՅԱՐԴՈՒԹՅԱՆ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Բառավերջի բաղաձայնների խուլ/ձայնոլ հակադրության չեզոքացման խնդրի ուսումնասիրությունը ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան լեզվաբանության մեջ ունի իր վաղեմի ավանդույթները: Տարբեր սերունդների և ուղղությունների շատ լեզվաբաններ ընդունում են ելակետային նշանակություն ունեցող այն հանրահայտ դրույթը, որ բոլոր լեզուներում բառավերջը արտասանական թույլ դիրքում է: Բառավերջն արտաբերվում է ձայնալարերի նվազագույն լարմամբ, քանի որ հնչարտաբերական ապարաժը նախքան բառավերջն արտաբերելը դադարի է պատրաստվում: Այդ պատճառով է, որ բառի վերջում հնչյունը ոչ հստակ արտաբերվում է և ոչ էլ հստակ ըմբռնվում:

Մեզ միանգամայն ուշագրավ է թվում Բ.Ա.Սերբերեննիկովի այն դատողությունը, թե բառավերջում բաղաձայնի խլացման բուն պատճառը հավանաբար այն է, որ բառի վերջն առհասարակ առանձնապես չի կարևորվում, ուստի և անհրաժեշտություն չի էլ զգացվում այն առավել ընդգծվածությամբ Լսելի դարձնել խոսակցի համար:

Մեզ համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում քննարկվող խնդրի վերաբերյալ հայ լեզվաբանների տեսակետները: Դեռևս Հ.Աժառյանը հատկապես մատնանշել է այն իրողությունը, որ բառավերջի դիրքում բաղաձայնները աշխարհի մի շարք լեզուներում խլացման միտում են ցուցաբերում:

Միաժամանակ պետք է նշել նաև, որ քննարկվող խնդիրը լեզվաբանական գրականության մեջ միշտ չէ, որ միշտ է լուսաբանվել: Խնդրի ուսումնասիրությունը մեզ այն համոզման է բերել, որ սխալ մեկնաբանության հիմնական պատճառը հատկապես ուղղագրության և ուղղախոսության ոչ հստակ սահմանազատումն է, մի հանգամանք, որ նկատելի է նաև հայ լեզվաբանության մեջ: Որոշ հայ հետազոտողների կողմից քննարկման նյութ հանդիսացող փաստերի ուսումնասիրությունն ևս անառարկելի է դարձնում

Б.А.Серебрянников. Вероятные обоснования в компаративистике.  
М., 1974, с.79.

այն ճշմարտութիւնը, որ քառավերջի ծայնեղների խլացումը բնորոշ իրողութիւն է ոչ միայն ուսներենի և ուրիշ լեզուների, այլև հայերենի համար:

Բ.Ծ.ԶԱԶԱՐՅԱՆ /Երևան/

#### ՀԱՅԿԱՆԱՆ ԱԶԳԱՅԱՆԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ազգակցական տերմինաբանութիւնի տեսութիւնութիւնի ուսումնասիրութիւնը հավասարապես համարվում է պատմական լեզվաբանութիւնի և պատմական ազգագրութիւնի խնդիրը: Վերջինիս հաջող լուծման համար անհրաժեշտ է հաղթահարել ուսումնասիրութիւնի ազգագրական և լեզվաբանական մեթոդների միջև եղած անշրջաւոր, որը հանգեցրել է ազգակցական տերմինաբանութիւնի կառուցվածքային սկզբունքների կտրվածութիւնը գոյութիւն ունեցող իրականութիւնից:

Հայ լեզվաբանութիւնի մեջ երբեմն կարելի է հանդիպել այն կարծիքին, որ հնդեվրոպական նախալեզվում արական խնամիական տերմինների /սկեսուր, սկեսրայր, տազր, տալ/ հնդեվրոպական ծագումը վկայում է հնդեվրոպական ընդհանրութիւնի և նախահայերի մեջ հայրիշխանութիւնի և մեծնամուսնական ընտանիքի հաստատման մասին:

Սակայն ազգակցական տերմինաբանութիւնի ուսումնասիրութիւնի ազգագրական ու լեզվաբանական մեթոդների զուգակցումը թույլ է տալիս հանգում այն եզրակացութիւնի, որ այն հասարակութիւնը, որում առաջացել է հնդեվրոպական ազգակցական տերմինաբանութիւնը, եղել է խմբային միջգարմիկային ամուսնութիւնով և մայրազնային ազգակցութիւնով բնորոշվող արտամուսնական տոհմը: Միջգարմիկային ամուսնութիւնով կիսն ամուսնանում է մորեղբոր կամ հորաքրոջ տղայի, տղամարդը՝ մորեղբոր կամ հորաքրոջ աղջնակ հետ: Ատաղովում է այնպես, որ համընկնում են մորեղբոր և ամուսնու հոր, կնոջ հոր և հորաքրոջ ամուսնու, ինչպես նաև հորաքրոջ և ամուսնու մոր, կնոջ մոր և մորեղբոր կնոջ ազգակցութիւնները:

Հնդեվրոպական նախալեզվում մորեղբայր, ամուսնու հայր, կնոջ հայր և հորաքրոջ ամուսին ազգակցութիւնները նշանակվել են իսկ հորաքույր, ամուսնու մայր, կնոջ մայր, մորեղբոր կիսն ազգակցութիւնները՝ \*suekrua տերմիններով:

Նույն ձևով էլ \*daiey -ը հնդեվրոպական նախալեզվում, որպես միջգարմիկային ամուսնութիւնի արտահայտութիւն, իր մեջ է ընդգրկել մորեղբոր տղա, հորաքրոջ տղա, ամուսնու եղբայր, կնոջ եղբայր, ինչպես նաև քրոջ ամուսին ազգակցութիւնները: Իսկ \*g'(e)lou -ն հնդեվրոպական նախալեզվում ընդգրկել է մորեղբոր աղջիկ, հորաքրոջ աղջիկ, ամուսնու քույր, կնոջ քույր և եղբոր կիսն ազգակցութիւնները:



Հետագայում, կապված հասարակական հարաբերությունների զարգացման, մասամբ խմբամուսնական հարաբերություններից մենամուսնականին անցման հետ, վերոհիշյալ ազգակցությունները նշանակող նախկին տերմիններն իմաստափոխվել են:

Հայերենում երկու տերմինների՝ \*səḫekuros -ի և \*səḫekrus -ի միացումով առաջացել է նոր քառածև և դարձել ամուսնու մայր նշանակող տերմին՝ սկեսուհի, որի արականի համար հետագայում կազմվել է սկեսրեայ-ը, ապա՝ սկեսրայ-ը:

\*daiuer -ն անցել է ամուսնու եղբորը, իսկ \*g'(e)lou -ն՝ ամուսնու քրոջը:

Այսպիսով, նախկին հնդեվրոպական տերմինները վերլուծելով ամուսնական հարաբերությունների խորքում, տեսնում ենք, որ խնամիական ազգակցությունն իր արական ու իգական մյուսը երով հանդերձ հանդես է եկել արյունակցական ազգակցության հետ կապված: Միայն հետագայում, կապված հասարակական հարաբերությունների զարգացման հետ, տեղի է ունեցել արյունակցական և խնամիական /ընդ որում արական և իգական/ մյուսների առանձնացում: իգական մյուսի ազգակցությունների նշանակման համար առաջացել են նոր տերմիններ՝ հնդեվրոպական լեզուներում առանձին-առանձին:

Այնպես որ, միշտ չէ խոսել հնդեվրոպացիների մեջ արական խնամիական տերմինների առկայության և իգական խնամիական տերմինների բացակայության մասին և դրանով դատել արականի կարևորության և իգականի անկարևորության, հետևաբար և՛ հնդեվրոպական ընդհանրության և նախահայերի մեջ հայրական ընտանիքի զոյության մասին:

Հ.Լ.ՋԱՔԱՐՅԱՆ /Երևան/

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՑԱԼԻ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ-  
ՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայերենում ենթական և ստորոգյալը քերականորեն համաձայնում են ոչ միայն դեմքով, այլև թվով: Քերականական համաձայնությունը սովորաբար պայմանավորված է իմաստայինով: Սակայն կան դեպքեր, երբ համաձայնության քերականական և իմաստային կողմերն իրար չեն համընկնում:

Համաձայնության քերականական և իմաստային կողմերի հակասության դեպքերի մի մասը կանոնական է /քակտություն/, իսկ մյուս մասը կանոնական չէ և համարվում է նորմայի խախտում:

Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության բոլոր դեպքերի

ուսումնասիրութիւնն ինչ պարզվում է, որ ժամանակակից հայերենում կան թվային համաձայնութեան ուժեղ և թույլ դիրքեր:

Ուժեղ դիրքերում ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնութեան կանոնների խախտում տեղի չի ունենում: Հետևապես ուժեղ դիրքեր են առաջին և երկրորդ դեմքերով ստորոգյալի և ենթակայի համաձայնութեան դեպքերը:

Թույլ դիրքերում համախ հանդես են գալիս համաձայնութեան գուգահեռ ձևեր: Ձևականորեն դա նույնն է, թե ունենք ստորոգյալի եզակի և հոգնակի ձևերի համանշտութիւն /հակադրութեան չեզոքացում/:

Թույլ դիրքերի հետազոտութիւնը ցույց է տալիս՝ անհամաձայնութիւնը երբեմն այնքան տարածված է քանավոր խոսքում, որ համախ անունում է նաև գրավոր խոսքին: Այս տարածվածութիւնը թույլ է տալիս նաև ենթադրելու, որ ենթակայի և ստորոգյալի համաձայնութիւնը որոշակի դիրքերում միտում ունի վերանալու /ինչպես մի շարք լեզուներում/, իբրև հավելուրդային իրողութիւն:

## Հ.Լ.ՋԱՔԱՐՅԱՆ /Երևան/

ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ, ԳՈՐԾԱՌԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՈՒՈՐՏՆԵՐԸ

/պատմական ակնարկ/

1. Յուրաքանչիւր տվյալ տարածքում ու ժամանակահատկան կտրվածքում տիրող լեզվավիժակի կարևոր բնութագրերից են գործառող լեզուների ու դրանց գոյածանների տարածքային, գործառական ու հանրային ըաշխումն ու գործառույթների շրջանակը:

2. Ինչպես լեզուն ինքը, այնպես էլ լեզվավիժակը պատմականորեն փոփոխվող կարգ է: Լեզվավիժակի ձևավորումը կախված է այդ լեզուն կրող հանրութեան պատմ-քաղաքական, հասարակական-մշակութային կյանքի առանձնահատկութիւններից, թեև զգալիորեն պայմանավորված է նաև լեզվի բնույթով, նրա ներքին հարավորութիւններով:

3. Հայոց լեզվի պատմական զարգացման յուրահատկութիւնները հնարավորութիւն են տալիս դիտարկելու լեզվավիժակը և նրա փոփոխութիւնները ավելի քան երկու հազարամյակի ընթացքում՝ հայերենի նախադրային պատմութեան վերջին շրջանում և գրավոր ամբողջ ժամանակաշրջանում՝ ըստ լեզվի զարգացման համապատասխան փուլերի: Հայախոս զանգվածներով բնակեցված մայր տարածքի սահմաններն ի սկզբանե բավական ընդարձակ են եղել, ընդգրկելով Հայկական լեռնաշխարհը և նրան հարող շրջանները, մինչև Անատոլիա, Միջերկրական ծովի կիլիկյան ափեր, Հյուսիսա-

յին Միջազգեք, Կասպից ծով, Կովկասյան լեռներ և Սև ծով, թեև դրանք երբեք չեն ընդգրկվել հայկական մեկ միասնական պետականության մեջ: Այդ տարածքի կենտրոնական մասը՝ Հայկական լեռնաշխարհը, սովորաբար բնութագրվել է միալեզվությամբ՝ հայերենի բացարձակ տիրապետությամբ: Ծգրային շրջանները համախ բնութագրվել են հայերենին զուգահեռ այլ լեզուների առկայությամբ:

ա/ Նախագրային շրջանի լեզվավիժակը բնորոշվում է հայախոս ցեղերի ու տարածքների աստիճանական միավորումով, նախկին ցեղային լեզուների և բարբառների մերձեցմամբ ու կոյնեի առաջացմամբ, թույլ արժահայտված հասարակական տարբերակումով, լեզվի գործառույթների բավական լայն շրջանակով /բացառյալ զրավոր հաղորդակցման ոլորտը/, ընդհանուր խոսակցական լեզվի կողքին գործառական ոճերի առկայությամբ /գեղարվեստական ստեղծագործության՝ բանահյուսության, պաշտամունքային-արարողական, արքունական-պաշտոնական ոճեր և այլն/:

բ/ Գրի ստեղծումից հետո հայերենը ձեռք է բերում զրավոր-զրական լեզվի բոլոր գործառույթները, դառնալով դպրոցական կրթության, զիտության, եկեղեցու, պաշտոնական և անձնական զրագրության և ամենալայն իմաստով զրականության լեզու: Դասական շրջանի հայերենը բնորոշվում է բարբառային ու հասարակական նվագագույն տարբերակմամբ, զրական և խոսակցական տարբերակների զգալի մերձավորությամբ, զրական լեզվի բազմագործառականությամբ, լեզվական միասնական համակարգի առկայության պայմաններում ոճական շերտավորվածությամբ, զրական մշակման տարբեր դպրոցների և ուղղությունների գոյությամբ: Հին հայերենի հետագա զարգացումն ընթանում է զրական և խոսակցական լեզուների միջև աստիճանական խզման, բարբառային տարբերակների աշխուժացման, բանավոր հաղորդակցման ոլորտից զրաբարի արտամղման ուղղությամբ:

գ/ Հին հայերենի զարգացման նախամիջին ենթաշրջանում և միջին հայերենի շրջանում հայախոս զանգվածների արտագաղթների միջոցով հայոց լեզուն ձեռք է բերում տարածքային նոր ոլորտներ՝ պատմական Հայաստանի տարածքից դուրս հիմնվում են հայկական գաղթօջախներ: Հայկական պետականության վերականգնումով հայերենը ստանում է պետական լեզվի կարգավիժակ: Գրավոր խոսքում առաջանում է զուգալեզվություն՝ զրաբարի և միջին զրական հայերենի զուգահեռ գործածության ու գործառական բաշխման ձևով, առաջանում են զիտական ու գեղարվեստական նոր ոճեր: Միջին հայերենի զարգացման երկրորդ ենթաշրջանում ուժեղանում է բարբառային տարբերակվածությունը, սկսվում է հասարակական տարբերակման խորացման գործընթացը:



դ/ Աշխարհաբարի զարգացման սկզբնական շրջանը բնորոշվում է հայախոս զանգվածների տարածական և վարչա-քաղաքական մասնատվածությամբ, տարբեր երկրներում հայկական նոր զաղթավայրերի առաջացումով, քարքառային խիստ տարբերակմամբ, հասարակական արդեն բավական զգալի շերտավորմամբ /նոր խուսակցական հիմքի վրա զարգացող կոյնեն՝ քաղաքի լեզուն հակադրվում է բարբառներին՝ որպես գյուղացիական զանգվածների լեզվի/: Նոր ծնավորված գրական աշխարհաբարը սկզբնապես զարգանում է միասնաբար, այնուհետև ճյուղավորվում արևելահայ և արևմտահայ տարբերակների: Որպես գրական լեզու շարունակվում է գործառել նաև զրաբարը՝ աստիճանաբար իր տեղը զիջելով աշխարհաբարին, որի գործառական ոլորտները հետզհետե ընդլայնվում են և ընդգրկում կրթության, գիտության, մամուլի ու հրապարակախոսության, գեղարվեստական գրականության, թատրոնի բնագավառները: Գրապայքարի միջոցով հաստատվում է աշխարհաբարի՝ որպես գրական լեզվի կարգավիճակը, նշվում են նրա զարգացման ու մշակման ուղիները: Երկմյուղ աշխարհաբարի զարգացման վերջին շրջանում կապիտալիստական հաղթանակի շրջանների զարգացման, ինտենսիվ շփումների, հասարակական-մշակութային կյանքի կենտրոնացման շնորհիվ կասեցվում է նոր բարբառային միավորների առաջացումը: 1-ին համաշխարհային պատերազմի ժամանակ արևմտահայության ցեղասպանության և զանգվածային տեղահանության հետևանքով արևմտահայ բարբառները զրկվում են իրենց տարածքային հիմքից:

ե/ Նոր հայերենի արդի փուլը բնութագրվում է արևմտահայ և արևելահայ գրական տարբերակների գոյակցությամբ, բարբառային բարդ իրադրությամբ /տարածքային հիմքի և լեզվական անընդհատականության կորուստ, միջբարբառային փոխներթափանցումներ, բարբառների աստիճանական վերացում գրական տարբերակների ազդեցությամբ/, հայախոս վայրերի, բնաշխարհ-սփյուռք, հակադրությամբ և սրանց լեզուների տարբեր կարգավիճակով ու գործառական ոլորտներով /արևելահայերենը ՀՍՍՀ պետական լեզուն է՝ գործառական համապարփակությամբ, արևմտահայերենը գործում է ազգային-մշակութային կյանքի ոլորտում գործառական սահմանափակման ենթարկվելով զաղթավայրերի տիրող լեզուների կողմից/, հանրային որոշակի շերտավորմամբ /մասնագիտական, տարիքային, կրթական և այլ տարբերություններ/:

,ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՌ,, ՏԵՐՄԻՆԻ ՆՊԱՏԱԿԱՆ-  
ՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՒՐՋԸ

Գիրառական լեզվաբանություն և լեզվաբանական հրապարակախոսու-  
թյան մեջ հաճախ գործածվում են միջազգային բառ, միջազգային տերմին,  
միջազգային բառամթերք, միջազգայնաբանություն, բառապաշարի միջազ-  
գայնացում և նման այլ արտահայտություններ, որոնց երբեմն էլ փորձ  
է արվում թալ գիտական տերմինի արժեք և գտնել դրանց համար իրական,  
առարկայական բովանդակություն:

Բառապաշարի որոշակի շերտերի վերաբերյալ գործածվող միջազգային  
որակումն ունի եվրոպական ծագում և կապվում է լատիներենի՝ միջնադա-  
րում իբրև գիտական ու պաշտամունքային միջազգային /համաեվրոպական,  
համաքրիստոնեական/ լեզվի տարածման հետ. այն , ,Թափառող, , բառերն ու  
արտահայտությունները, որոնք եվրոպական տարբեր լեզուներ վերցնում  
էին , ,միջազգային լեզու, , համարվող լատիներենից, հետագայում սկը-  
սեցին կոչվել միջազգային: Դրան նպաստում է նաև այն, որ լատիներենի  
դուստր ոճմանական լեզուներում այդ բառերի մեծ մասը կային ժառանգոր-  
դաբար, բառապաշարի կենսունակ տարրեր էին և իրենց հերթին փոխանվում  
էին տարբեր լեզուների կողմից:

Լատիներենն ինքը լի էր հունական փոխառություններով, որոնց մեծ  
մասը նույնպես անցնում էր եվրոպական լեզուներին: Դրանից բացի, մար-  
դասիրություն և ու վերածնունդյան դարաշրջանում լատինալեզու սքոլաստի-  
կայի դեմ հակադդեցության հետևանքով հունարենի նկատմամբ առաջացած  
հետաքրքրությունը նպաստեց , ,Թափառող, , բառերի՝ հունաբանություննե-  
րով համալրմանը: Ավելի ուշ /20-րդ դ./ , ,միջազգային, , բառերի շար-  
քը սկսեցին դասվել նաև ամեն կարգի Թափառող տարաշխարհիկ բառեր և ու-  
գիտնալիզմներ:

Միջազգային բառերի ըմբռնումը սկսեց հատուկ նշանակություն ու  
քաղաքական երանգ ձեռք բերել վերջին ժամանակներս, երբ աշխարհում ու-  
ժեղացել է թե՛ մեծ ազգերի ու տերությունների պայքարը գերիշխանության  
համար, թե՛ դրա հետ կապված՝ լեզվական մրցակցությունը:

Միջազգային բառերի տարածումը երբեմն դիտվում է իբրև համընդհա-  
նուր լեզվի առաջացման նախապատրաստական փուլ /է.Ս.Ավադոստ, Յ.Ա.Բելչի-  
կով և ուրիշներ/: Այդ մասնապարհով , ,համընդհանուր, , լեզվի առաջա-  
ման կեղծ գիտական տեսությունը ոչ միայն հակառակ է լեզուների զար-  
գացման բնական ընթացքին /մյուլդալորում, ինքնուրույնացում, հարաբե-

րական մեկուսացում/, այլև հակաբարոյական է /քանի որ ենթադրում է բռնի միջամտություն/, հակամարդկային /քանի որ հակառակ է մարդկային հասարակության բազմազանության ձգտմանը/ և քաղաքականապես սխալ /քանի որ դեմ է ազգերի, նրանց մշակույթների ու լեզուների ազատ զարգացման ու ծաղկման սկզբունքին և դրանով իսկ վնասում է ժողովուրդների միջազգային համերաշխության՝ ինտերնացիոնալիզմի ոգուն/:

Քննությունն առաջին հերթին քացահայտում է միջցգայնաքանությունն հասկացության հարաբերականությունը և ըստ էության համընկնումը ուղիղ առաջիկայի հետ /Մ.Մ.Մակոմսկի/:

Ոմանք /Ա.Փրինտե, Օ.Բ.Շախրայ/ միջազգային են համարում բազմաթիվ կամ մի շարք լեզուներում միաժամանակ գոյություն ունեցող բառերը: Ոմանք /Ա.Ա.Բելեցկի, Վ.Վ.Ակուլենկո, Յ.Ա.Բելչիկով/ մշտում են լեզուների քանակը, հասցնելով նվազագույնը երեքի, սակայն շարքային փոխառությունների ու ներթափանցումների, ինչպես նաև ցեղակցական ընդհանրությունների /գուգաբանությունների/ հետ չնույնացնելու համար մտնում են լրացուցիչ չափանիշներ, միջազգային համարելով առնվազն երեք ոչ մերձացեղակից , ,զլխավոր, , լեզուներում համաժամանակյա կըտըրվածքում գոյություն ունեցող ոչ տարաշխարհիկ և ոչ անհամարժեք, իմաստով և ձևով նույնական կամ գոնե , ,միջին լեզվակրի, , կողմից նույնացվող այն բառերն ու տերմինները, որոնք արտահայտում են , ,միջազգային հասկացություններ, , : Ոմանք /Վ.Փրիդ, Վ.Վ.Ակուլենկո/ միջազգային բառ կամ դրա նախնական աստիճան են համարում երկու լեզվում միաժամանակ գոյություն ունեցող ամեն սի փոխառություն: Ոմանք էլ /Յ.Ա.Բելչիկով/ միջազգային տերմինների շարքն են դասում նույնիսկ այն բառերը, որոնք թեև գոյություն ունեն միայն մեկ լեզվում, սակայն բաղադրված են բառակազմական օտար /փոխառյալ/ միջոցներով /օրինակ, ռուսերենում հունալատինական հիմքի վրա կազմվող գիտատեխնիկական նոր տերմինները/:

Գիտական հիմնավորման չեն տրվում նաև միջազգային բառերը փոխառություններից առարկայորեն տարբեր երևույթ համարելու փորձերը /Վ.Վ.Ակուլենկո, Յ.Ա.Բելչիկով/: Այդ տարբերությունը ոչ թե առարկայական է, այլ հայեցակետային: Լեզվից լեզու անցնող միավորը սկզբնաղբյուր լեզվի տեսակետից փոխառություն է, ընդունող լեզվի տեսակետից՝ փոխառություն, միջնորդ լեզվի տեսակետից՝ փոխանցում, իսկ շարքերակված տեսակետից /երբ լեզուների բառապաշարային ընդհանրությունները դիտվում են անկախ սկզբնաղբյուրից/՝ թափառող բառ: Ահա այս վերջին նշանակությամբ էլ գործածվում է միջցգային բառ կամ տերմին արտահայտությունը:



հայառությունը:

Միջազգային բառամթերքի օգտակարությունը ոմանը /Վ.Վ.Ակուլենկո, Յ.Ա.Բելչիկով և ուրիշներ/ փորձում են տեսնել հիմնականում օտարալեզու խոսքի և տեքստի ընկալման, գեղարվեստական և գիտական թարգմանության իրականացման, իրագեկման միջազգային փոխանակման հեռության և լեզուների մերձեցման առումներով: Սակայն, եթե տարալեզու անհատների առօրյա հաղորդակցման ժամանակ լեզուների ըստապաշարի ընդհանուր /նման/ տարրերը կարող են ինչ-որ չափով հեշտացնել փոխմբերումն ու հաղորդակցումը, ապա ավելի լուրջ խնդիրների դեպքում /իրագեկման միջազգային փոխանակում, գիտական ու գեղարվեստական գրականության թարգմանություն և այլն/ բառապաշարի այդպիսի տարրերը /,,ինտերնացիոնալիզմները,, / ավելի շատ բացասական դեր են կատարում իբրև ,,թարգմանչի կեղծ բարեկամներ,,: Դրանից բացի, լեզուների բառապաշարի միջազգայնացման պահանջը հակառակ է լեզվի դեմոկրատացման միտմանը, քանի որ տվյալ լեզվի հիմնական և բնիկ բառազանծի վրա չհիմնված փոխառությունները լեզվակիրների կողմից ընկալման առումով միշտ էլ զիջում են այդպիսի հիմք ունեցող սեփական բառերին: Վերջիններս տրվյալ լեզվի իմաստակառուցվածքային գույճորդումների դաշտի շնորհիվ ունենում են ստուգաբանական խորք, որը մեծ չափով բարձրացնում է նրանց ապփորձային հասկանալիությունն ու ընկալելիությունը:

Ս.Տ.ԶՈՂՅԱՆ /Երևան/

#### ԲԱՆԱՍՏԵՂԾԱՆԱՆ ԱՍՈՒՅԹԻ ԳՈՐԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ասույթի գործաբանությունը դիտվում է այստեղ որպես նախադասությունը ասույթի վերածող լեզվական գործոնների համալիր, որի շնորհիվ լեզվական միավորը առկայանում է խոսքում: Այդ համալիրի կենտրոնը կազմում են ,,եսակենտրոն,, միավորները, որոնց միջոցով նախադասությունը հարաբերվում է հաղորդակցման խոսքաշարի հետ:

Բանաստեղծական ասույթի գործաբանության ուսումնասիրությունը հանգեցնում է բավական անսպասելի եզրակացությունների: Խոսողի կողմնորոշիչը հարկ է սահմանել ոչ թե իրական աշխարհում, այլ այն հնարավոր աշխարհներում, որտեղ տվյալ ասույթը հանդես է գալիս որպես մշտմարիտ Cresswell 1978, Lewis 1978/: Փաստորեն նույն դրույթը հռչակվեց նաև նշանաբանության դիրքերից՝ տեսականորեն շարադրանքի իրական հեղինակը ,,զիջում,, է իր տեղը ,,խոսողին,, , որի թակ հասկացվում է ոչ թե որևէ իրական անձ, այլ շարադրանքի նշանաբանական



ոչ միայն ուսանողներով, այլև միութենական հանրապետութիւններ լեզուներով:

Արդի հայերեն տեխնիկական գրականութիւնը պարունակում է մոտավորապէս 300000 տերմին, որից 50000-ը գրանցված է բառարաններում:

Թարգմանութիւնների քանակի ավելացման և որակի բարձրացման, ինչպես նաև մեծաթիվ, բայց չմիասնականացված հայերեն տեխնիկական տերմինաբանութիւն լայն կանոնարկման համար հիմք ստեղծելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել ուսու-հայերեն /այսուհետև՝ բազմալեզու/ պոլիտեխնիկական ընդարձակ բառարան, ընդ որում նյութը հիմնականում պետք է քաղվի տեխնիկական գրականութիւններից:

Հայերեն տերմինաբանութիւն ավանդույթի համաձայն ընդունված է տերմինները ստեղծումը բառարանների շրջանակներում, այդ պատճառով անհրաժեշտ է բառարաններ ստեղծել տեխնիկայի այն բնագավառների համար, որոնք առավել արդիական են ՀՍՍՀ ժողովրդական տնտեսութիւն տեսակետից:

Նպատակահարմար է հանրապետութիւն տեխնիկական ԲՈՒՀ-երում դասավանդել հայոց լեզու հատուկ թեցումով, քանի որ. ա/ հայերեն տեխնիկական տերմինաբանութիւնը զգալի չափով օգտագործում է գրաբարի բանապաշարն ու բառակազմական կաղապարները, բ/ անհրաժեշտ է ակտիվացնել և հեշտացնել հայերեն տեխնիկական գրականութիւն յուրացումը, գ/անհրաժեշտ է արդյունավետ դարձնել ուսանողներն և օտար լեզուներով տեխնիկական գրականութիւն յուրացումը, դ/ տեխնիկական տերմինաբանութիւնը զնալով ավելի մեծ չափերով է ստեղծվում համապատասխան գիտամշակութիւն մասնագետների կողմից:

Ուսուցման ընթացքը պետք է պարունակի. ա/ ուսու-հայերեն տեխնիկական թարգմանութիւն, բ/ ընդհանուր և հայկական տերմինագիտութիւն, գ/ հայերենի տերմինակազմութիւն հիմունքներ:

Նկատի ունենալով հայերեն տեխնիկական տերմինաբանութիւն անբավարար մշակվածութիւնը, ԳՏՀ-ի արդի փուլում անհրաժեշտ են հրատապ հետազոտութիւններ հայերեն տեխնիկական տերմինաբանութիւն ուսումնասիրութիւն և մշակման ուղղութիւնում:

Ա.Ռ.ԻՍԱՀԱՅԱՆ /Երևան/

ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂՈՐԴԱԿՅԱՆ ԼԵՋԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ժամանակակից լեզվաբանութիւն շատ երևույթներ դիտվում են խոսողութիւն տեսութիւն հայեցակետից: Ոճաբանութիւնը պետք է համարել



լեզվական հաղորդակցման միասնացնող մասերից մեկը: Խոսքային գործունեության տարբեր ուղիղ շնորհի ոճաբանական կարևորության աստիճանը մինչև այժմ դեռ բավարար չափով ուսումնասիրված չէ:

Ոճաբանությանը հաղորդակցման տեսանկյունից դիտելու համար շատ կարևոր է այն հանգամանքը, որ լեզվի գործառական-հաղորդակցական ուսումնասիրումը հնարավորություն է տալիս ընդգրկել լեզվական հաղորդակցության երկու կողմերը՝ թե՛ տեքստի ստեղծման և թե՛ նրա ըմբռնման /ընկալման/ գործընթացները: Ընդ որում, պետք է ելնել այն բանից, որ տեքստի ընկալումը ոչ թե նրա բովանդակության պատիվ յուրացումն է, այլ ստեղծագործական ակտիվ գործունեություն է:

Ոճաբանությունը պետք է ուղղված լինի ամբողջական տեքստի ուսումնասիրությանը, այսինքն պետք է լինի տեքստի ոճաբանություն, որի համար ընկալումը /տեքստի ըմբռնումը կարողացողի կամ ասողի կողմից/, որպես ակտիվ հաղորդակցական գործունեություն, ունի բացառիկ նշանակություն այն իմաստով, որ այդ ըմբռնումը ոճաբանական վերլուծության նախապայմաններից մեկն է, նրա առաջին փուլը, որը ղուում է տեքստի հեղինակի ստրատեգիան և դրա լեզվաոճական իրականացումը ուսումնասիրելու հիմքը:

Եթե ընդունենք ոճաբանության և լեզվական հաղորդակցման սերտ կապի մասին վերոհիշյալ դրույթը, լեզվական հաղորդակցման փուլային կադապրը թույլ է տալիս որոշ մշտումներ մտցնել փուլերի հաջորդականության և բովանդակության տեսակետներից:

Ս.Գ.ԼԱՄԲԱՐՋՅԱՆ, Ռ.Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ /Երևան/

ՏԵՔՍՏԻ ՄԵՋ ԿԻՍԱՆԿԱՆ ԲԱԴԵՐԻ ԻՄԱՍՏԱՑԻՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ժամանակակից իմաստաբանական շարահյուսության արդիական խնդիրներից մեկը նախադասության մեջ մտնող բոլոր իմաստների ընդլայնագրումն է: Այդ խնդրի մասնավոր հարցերից է կիսախնդրաբանական բառերով նախադասությունների իմաստաբանական կառուցվածքի ուսումնասիրումը: Շարահյուսության այդ բնագավառն առ այսօր առավել քիչ է ուսումնասիրված և դժվարամատչելի է հատկապես նրանց համար, ովքեր ուսումնասիրում են ոռւսերենը որպես ոչ մայրենի լեզու:

Ժամանակակից իմաստաբանությունը կիսանկախ բառերի՝ նախադասություն մուծած իմաստները դիտում է նրա համար պարտադիր: առանց այդ իմաստները միշտ հասկանալու չի իրականաա իրագեկման հաղորդման գոր-

## ճողութիւնը:

Կիսանկախ բառերով նախադասութիւններ իմաստների խոր վերլուծութեան անհրաժեշտութիւնը առաջ բերեց մի շարք խնդիրներ: Հիմնական խնդիրներից է լեզվական միավորի ընտրութիւնը, որի հիման վրա պետք է տարվի հետազոտութիւնը: Շարահյուսագիտութեան զարգացման ներկա փուլում այդպիսի միավոր ընդունված է տեքստը, քանի որ հենց այն է օգնում իմաստաբանական երևույթների էութեան առավել խոր ըմբռնմանը, թույլ է տալիս գտնել դրանց լեզվական, խոսքաշարային, գործաբանական գործառույթները, օգնում է բացահայտելու քննարկվող երևույթների ուսումնասիրման նոր հայեցակէտեր:

Մեր նպատակն է ցույց տալ, թե կիսանկախ բառեր պարունակող նախադասութեան իմաստային կառուցվածքի հետ կապված ինչպիսի երևույթներ կարելի է դիտել միայն տեքստի մակարդակով:

Կիսանկախ բառերով շատ նախադասութիւններ իրենց բովանդակութեամբ բազմիմաստ են: Նախադասութեան մակարդակում այդ բազմիմաստութիւնը անհնարին է վերացնել: Միայն տեքստն է թույլ տալիս միանշանակորեն իմաստավորել յուրաքանչյուր նախադասութեան մեջ իրացված նշանակութիւնը /իմաստը/:

Այսպէս, , ,իհարկե, նա զնաց թատրոն, , նախադասութիւնը, որը պարունակում է կիսանկախ /միջանկյալ-եղանակավորող/ բառը, տեքստից դուրս բազմիմաստ է՝ նրանում առկա համոզվածութեան իմաստների առումով: Տվյալ նախադասութիւնը կարող է արտահայտել՝ ա/խոսողի համոզվածութիւնը իրականութեան և արտահայտման բովանդակութեան համապատասխանութեան մեջ, բ/կարծիք-ենթադրութիւն, գ/խոսողի ենթադրութեան հաստատում: Եվ միայն տեքստից կարելի է հասկանալ, թե ինչ մասնավոր իմաստ է իրացվում նախադասութեան մեջ:

2. Տեքստը նպաստում է ոչ միայն բազմիմաստութեան վերացմանը, այլև յուրաքանչյուր մասնավոր իմաստի իրացման բոլոր պայմանների որոշմանը: Այսպէս՝ , ,Մի՞թե ես ձեզ չեմ ասել այդ մասին, , հարցը կարող է իրացնել երկու նշանակութիւն՝ , ,հակառակի հաստատում, , և , ,կասկած-անվստահութիւն, , : Միայն տեքստն է վեր հանում դրանց իրացման պայմանները: Այսպէս, 1-ին իմաստի իրացման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները. խոսողը բացարձակապէս համոզված է, որ իրականութեանը համապատասխանում է հարցում արտահայտված իրողութեան հակառակը, նա զիտի, որ զրուցակիցը հակառակ տեսակետի է, խոսողի նպատակն է՝ հարկադրել զրուցակցին հրաժարվել իր դիրքից: Քննարկվող հարցի նման իմաստավորում, իրացման պայմանների և խոսողի փոխադարձ կա-

պի մտադրութիւնն ըացահայտմամբ հանդերձ, հնարավոր է միայն ,Միջին  
ես ձեզ չեմ ասել այդ մասին: Ոչ միայն ասել եմ, այլև հազար անգամ  
կրկնել,, տիպի տեքստում: 2-րդ իմաստի իրացման համար անհրաժեշտ է  
վերը նկարագրվածի հակառակ իրադրութիւնը և, ընականաբար, պետք է լի-  
նի պայմաններին այլ ընտրութիւն: Խոսողը վստահ չէ, թե արտահայտու-  
թյան ըովանդակութիւնը համապատասխանում է իրականութեանը, դրա հետ  
միասին, նա հակված է մտածելու, որ ճիշտ է այն, ինչը հակառակ է ար-  
տահայտութեան ըովանդակութեանը: Այդ իմաստը կարող է իրացվել ,Մի-  
ջին ես ձեզ չեմ ասել այդ մասին, իսկ ինձ թվացել է, որ ասել եմ,, տի-  
պի տեքստում:

Ս.Պ. ԼԱՄԲԱՐՋՅԱՆ, Ե.Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Է.Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ  
/Երևան/

ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՆԳՈՒ-  
ՑԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախադասութեան իմաստաբանական կառուցվածքը լեզվաբանների ուշա-  
դրութեան առարկան դարձավ մեր դարի 70-ական թվականներին: Դա կապված  
է վերջին տասնամյակում լեզվական միավորի ըովանդակային կողմի, մաս-  
նավորապես, նախադասութեան նկատմամբ առաջացած մեծ հետաքրքրութեան  
հետ:

Մեր նպատակն է ցույց տալ նախադասութեան իմաստաբանական կառուց-  
վածքի անհատական հանգուցակի ուսումնասիրման մի քանի հեռանկարները:

ա. Տարբեր հեղինակներ, ելնելով առանձին նախադրյալներից, առաջ  
են քաշում այլևայլ իմաստներ՝ որպես նախադասութեան իմաստաբանութեան  
անհատական հանգուցակի կազմիչներ: Եվ անհատական իմաստների ուսումնա-  
սիրման ժամանակակից փուլի կարևոր խնդիրներից մեկը դրանց վերջնական  
ցանկի ըացահայտումն է:

բ. Անհատական հանգուցակը կազմավորող իմաստները քաժանվում են  
պարտադիր և ոչ պարտադիր: Այսպես, եղանակավորման և համոզվածու-  
թեան իմաստները հեղինակների մեծամասնութեան կողմից համարվում են  
պարտադիր, իսկ ցնահատմանները՝ ոչ պարտադիր/լրացուցիչ/: Անհրաժեշտ  
է համաձայնութեան զալ պարտադիր և ոչ պարտադիր իմաստների որոշման  
հարցում:

գ. Անհատական հանգուցակի իմաստները կազմում են իմաստային դաշ-  
տեր, որոնք ունեն քարդ կառուցվածք: Այսպես, համոզվածութեան՝ վստա-  
հութեան-անվստահութեան իմաստները առաջացնում են դաշտեր, որոնք նե-  
րառում են իմաստներ թե՛ վստահութեան ոլորտից, թե՛ այդ երկու ոլորտ-



ների միացումից: Արդի փուլում կարևոր խնդիրներից է բոլոր այն իմաստային դաշտերի բացահայտումն ու նկարագրությունը, որոնք առաջ են բերում անհատական իմաստներ:

դ. Անհրաժեշտ է նաև բացահայտել անհատական իմաստների փոխազդեցություն և փոխներգործության մեխանիզմները:

ե. Անհատական հանգուցակի իմաստները փոխազդեցվում են առարկայական հանգուցակի-իմաստների հետ, ընդ որում առաջինները հաճախ կանխորոշվում են վերջիններով: Այդ փոխհարաբերությունների բնույթը ևս անհրաժեշտ է բացահայտել և բնութագրել:

զ. Անհատական հանգուցակի մեջ մտնող շատ իմաստներ տեքստում կատարում են զանազան գործառնություններ: Այսպես, վստահություն-անվստահության իմաստները տեքստում իմաստային կապակցություններ են: Եվ հետագոտողի խնդիրն է որոշել ըննարկվող իմաստների տեքստային բոլոր գործառնությունները:

Ա.Ե.ՌԱՍՏՐՑԱՆ /Երևան/

#### ՎՅՈՒՆԻ ՊՏՄՄԱՍՆ ՀՆԱՅՈՒՆԱԹՈՒԹՅՈՒՆ ԾՈՒՐՋԸ

Նախագրային հայերենի չլուսաբանված հարցերից է լ-ի առկայությունը մի շարք բառերի մեջ՝ առածել-առաւտ, հառանել-հաւտ, յատանել-յաւտ, մատչիլ-մաւտ, գտանել-գիւտ, գցածիլ-գաւտի, ծանաչել-ծանաւթ, քղաչել-քղաւթ, ամաչել-ամաւթ, քրտաւութ-քրտաւսր և այլն: Նկատելի է, որ լ-ով տարբերակները հիմնականում հանդես են գալիս բայերից այլ խոսքի մասեր կերտելիս՝ հիմքի ձայնավորի ուժգին և թերևս տևական շեշտ կրելու հետևանքով: Հնագույն շեշտի յուրահատկությամբ պետք է բացատրել նաև մտանել-մոյծ, քտել-քոյծ տիպի փոփոխությունները: Թերևս շեշտակիր ալ-անշեշտ ք հերթագայության արտահայտություն են թանալ-թաւն, անցցամիլ-գցաւն, յատակ-հեռագաւտել, առած-համառաւտ բառագույզերը:

Հիշյալ հերթագայության հետ կապ չունեն ամառ-աւմառ, ,նյարդ,, աւմառ-ամառ, ,ձիու սարը,, , ամառ-աւմառ, ,օմառ,, , քաւրակ-քառակ-քորակ, ,սաւթ-սաթ-սոթ, ,կարծր,, , գուգածները, որոնք արդյունք են հայերենի և փոխառու աղբյուրների՝ հին շրջանում ունեցած բարբառային տարբերակածության: Այս շարքում կարելի է դնել կաւշիկ, ,վարծ,, և կաշառ բառերը:

Եթե մի պահ ենթադրելու լինենք, որ հինհայերենյան աւ երկբարբառը մեզ անհայտ է, ապա դժվար թե հնարավոր լիներ այն վերականգնել միայն արդի բարբառների ավյալներից ելնելով: Ի տարբերություն հին-

հայերենյան մյուս երկբարբառների, այն չի վերածվել իր բաղադրիչ տարրերին և հայերենի ողջ տարածքում փոխարինվել է միևնույն օ հնչյունով: Միաժամանակ բարբառների տվյալները հուշում են, որ այդ օ-ն հայերենի մի ընդարձակ տարածքում չի նույնացել հին ը ծայնավորի հետ: Բարբառների մի մեծ խմբում հին ալ-ը ներկայանում է որպես պարզ, իսկ ը-ն որպես երկբարբառային ծայնավոր: Այս հանգամանքը օգնում է մըշտելու հինհայերենյան ուրոշ բառերի գրությունը: Այսպես, պարզվում է, որ քոյ, ,ծածկույթ,, ,թթոշ, ,մողես,, բառերը նախապես գրվել են քալ, թալթալ, քանի որ բարբառներում դրանք ունեն պարզ ծայնավորներ /քալ նախածնի վերականգնումը իր հերթին նպաստում է այդ բառի ստուգաբանությանը՝ ավելի ակնառու դարձնելով նրա կապը հ.-ե. ,ծածկել,, արմատի հետ, որից ծագում են նաև խուլ, հիւլ, քիւլ ցեւ, այլև բարբառային քոյ, քոյտիկ, քուլիկ բառերը/:

Ալ երկբարբառի լ բաղադրիչը արևելյան տարածքի բարբառներում ուրոշ բառերի մեջ արտացոլվել է խ և ղ հնչյունների տեսքով՝ օլտը-յէլտը, աղծ-օղծ, գալտի-ցօլտի, օլտաը, նօլտ: Այս ձևերը մեզ հուշում են ենթադրելու, որ ալ-օ հնչյունափոխությունը ընդհանուր հայերենում տեղի է ունեցել ալ > օլ > օլ > օ ուղիով: Նախապես ա-ն լ-ի ազդեցությամբ շրթնայնացել է, ապա տեղի է ունեցել լ > լ փոփոխությունը: Բայց քանի որ լ > բ աղաձայն կապակցությունը միևնույն վանկի սահմաններում հնարավոր չէ, ապա այն շատ արագ դուրս է ընկել՝ միայն ուրոշ հետքեր թողնելով առամային պոյթականներին նախորդող դիրքում. ծայնեղների մոտ վերածվել է ղ-ի, խուլների մոտ՝ լ-ի: Մեր ենթադրության օգտին են խոսում Ազուլիսի բարբառի էլտը, աղծ, գալտի, արևմտյան բարբառների թալթիկ /<թալթալի/ ձևերը, որոնցում լ > լ/ղ անցումը նախորդել և կանխել է ա-ի շրթնայնացմանը: Ալ-ի դիմաց ղ վ գրությանը հանդիպում ենք ամենահին ձեռագրերում՝ ամղթ, նոքղթ, աղտառուղթ և այլն: Մեզ թվում է, թե հնագույն ձեռագիր և վիմագիր աղբյուրներում ալ-ի փոխարեն հանդիպող ղ վ գրությունը նույնպես արտացոլում է այդ ղ վ կամ օլ միջակա հնչումը, քանի որ ալ > օ > ղ հնչյունափոխությունը հասուկ է միայն եզրային ուրոշ բարբառների և ամենայն հավանականությամբ կառարվել է ուշ շրջանում /10-12-րդ դարերից հետո/:

ԳՐԱԲԱՐԻ ԵՎ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎԵՐՈՎ ԱՐՏԱ-  
ՀԱՅՏՎՈՂ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄՏԱՆԱԿԱՆ  
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արդի հայերենը հիմնականում պահպանել է զրաբարից ավանդված միա-  
դիմի քայաճևերով արտահայտվող միակազմ /ՄԲԱՄ/ նախադասությունների  
տեսակներն ու ենթատեսակները:

Արդի հայերենում, ինչպես և զրաբարում, առանձնանում են մանկ  
և ձոնի գործունի միակազմ նախադասությունների տիպերը, որոնց գլխավոր  
անդամը կամ վերջինիս քաղաղրիչներից մեկն արտահայտված է չեզոք կամ  
կրավորական սեռի քայերի միադիմի ձևերով, որով և արդի հայերենը ևս  
աարքերում է ՄԲԱՄ նախադասությունների չորս ենթատեսակ՝

Ա. Ձեռքը Սեռի ԲԱՅԵՐԻ ՄԻԱԴԻՄԻ ՁԵՎԵՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆԿԱՆ  
ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ,

Բ. Ձեռքը Սեռի ԲԱՅԵՐԻ ՄԻԱԴԻՄԻ ՁԵՎԵՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ՁՈՒԳՈՐԴ-  
ՎՈՂ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ,

Գ. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՐԻ ԲԱՅԵՐԻ ՄԻԱԴԻՄԻ ՁԵՎԵՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ԱՆ-  
ԿԱՆ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ,

Դ. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՐԻ ԲԱՅԵՐԻ ՄԻԱԴԻՄԻ ՁԵՎԵՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂ ՁՈՒ-  
ԳՈՐԴՈՂ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Սակայն եթե զրաբարյան կրավորական սեռի ՄԲԱՄ նախադասություն-  
ների տիպերն ամբողջութամբ և չեզոք սեռի ՄԲԱՄ նախադասությունների  
որոշ տիպեր փոխանցվել են արդի հայերենին, ապա նույն քանը չենք կա-  
րող ասել չեզոք սեռի քայաճևերով արտահայտվող անկախ միակազմ նախա-  
դասությունների մի շարք տիպերի մասին, որոնք հատուկ են միայն զրա-  
բարին և լեզվի հետագա շրջաններում կիրառություն չեն գտել: Դրանք  
են՝ ՀՈԳԵՎԻՃԱՆՍԻՇ ԲԱՅԵՐԻ ՄԻԱԴԻՄԻ ՁԵՎԵՐՈՎ, ինչպես նաև ՀՈԳԵՎԻՃԱ-  
ԿԱՆԻՇ ԲԱՄ + ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ, ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ + ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ,  
ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՍԵՐԱԿԱՆ + ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ + ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ, ԱՆԴ +  
ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ + ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ կաղապարներով արտահայտվող մանկ  
միակազմ նախադասությունները:

Արդի հայերենում, հատկապես վերջին մի քանի տասնամյակների ըն-  
թացքում, նկատելիորեն սակավ են զրաբարում խիստ ակտիվ կիրառություն  
ունեցող ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ + ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ կաղապարով արտահայտվող  
ձոնի գործունի միակազմ նախադասությունները և դրանց արտահայտման մի-



ջոցները /, , Պատահում է՝ սիրող լցվում ու չի լալիս ժամանակին, /:

Դրան հակառակ, այժմ խիստ համախալի կիրառություն ունեն գրաբարից արդի հայերենին անցած ԵՂԱՆԱԿԻՉ ԲԱՄ + ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ + ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ կաղապարով արտահայտվող ԱՆԿԱՍ /, , Պեռք է տեսնել նրան, / և ԵՂԱՆԱԿԻՉ ԲԱՄ + ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ կաղապարով արտահայտվող ՋՈՒԳՈՐԴԱՈՂ ՄԻԱԿԱՅՄ /, , Համեմեմ է, երբ քեզ հասկանում են, / նախադասությունները:

Ինչ վերաբերում է ԱՊԱՐՆԻ ԴԵՐԲԱՅԻ + ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԱԶԵՎ կաղապարով արտահայտվող նախադասություններին, ապա վերջիններիս գործառույթային երկվությունը /գրաբարում հանդիպում էին այդպիսի անկախ, և զուգորդվող միակազմ կառույցներ/ վերացել է, և արդի հայերենում հանդես են գալիս բացառապես որպես ԱՆԿԱՍ ՄԻԱԿԱՅՄ նախադասություններ /, , նկատելի է, որ... , /, հիմնականում գիտական ոմ ստեղծելու միտումով:

Հնայած արդի հայերենը չի որդեգրել գրաբարյան ՄԲԱՄ նախադասությունների արտահայտության պլաններից շատերը, սակայն դրանց փոխարեն կամ ստեղծել է միադիմի բայաձևերով /կամ վերջիններիս օժանդակությունը/ արտահայտվող բայական միակազմ նախադասությունների կազմության բոլորովին նոր կաղապարներ, կամ էլ , , դիմել է, , երկկազմ նախադասությունների օգնությամբ:

Վ. Լ. ԿԱՏԱՎԱԼՅԱՆ /Երևան/

#### ՀԱՅՏՈՒՆԱՓՈԹՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հնչյունական փոփոխությունները ընդհանուր լեզվաբանության մեջ սովորաբար դասակարգվում են ըստ փոփոխության բնույթի և ըստ այն հնչյունական պայմանների, որոնցում տեղի է ունենում փոփոխությունը:

Ըստ փոփոխության բնույթի՝ հնչյունների փոփոխությունը կամ զարգացումը տարբերակվում են հնչյունների փոխարինումից:

Ըստ հնչյունական պայմանների, որոնցում կատարվում է փոփոխությունը, տարբերակվում են փոխազդեցականը ինքնակա հնչյունափոխություններից:

Առանձին ուսումնասիրության են ենթարկվում այն հնչյունական փոփոխությունները, որոնք կապած են բառի քերականական ձևափոխությունների հետ և կամ պատճառ են դառնում նույն արմատից համազոյակից այլ արմատների առաջացման: Այս առիթի փոփոխություններն անվանում են հերթազայություններ:

Հնչյունի ուսմունքի ստեղծման և հնչյունաբանություն ու հնչ-

չույթաբանությունն բաժինների առանձնացման հետ կապված՝ առանձին ուսումնասիրության առարկա դարձան խոսքի շղթայում հնչույթների ձևափոխությունները, այսինքն՝ հնչույթների տարբերակները:

Հայ լեզվաբանական գրականության մեջ հանգամանորեն բացահայտված ու նկարագրված են հայերենի հնչյունական փոփոխությունները: Սակայն վերջիններիս դասակարգումները բավականաչափ հստակ չեն և ամբողջական պատկերացում չեն տալիս դրանց մասին:

Այսպես, հայերենում տարբերակում են հնչյունափոխությունները երեք տեսակ՝ փոխադոցական, դիրքային և պատմական կամ ընդհանուր: Եթե փոխադոցական և դիրքային փոփոխությունները առանձնացնելիս նկատի ունեն այդ փոփոխությունների հնչյունական պայմանները, ապա պատմական փոփոխությունների դեպքում հիմք է ընդունված դրանց պատմականությունը և ընդհանրականությունը:

Ակնհայտ է, որ նման դասակարգման հիմքում միևնույն չափանիշը չի ընկած:

Հայերենի հնչույթային համակարգի փոփոխությունները, ինչպես նաև որոշ հնչյունական օրենքներ տարբաբանված են հնչյունափոխությունների ընդհանուր նկարագրություններում, մինչդեռ դրանք արժանի են առանձին նկարագրության:

Փոխադոցական համարվող մի շարք հնչյունափոխական երևույթներ, ինչպիսիք են դրափոխությունը /բանալի-բալանի, կապերտ-կարպետ, կամորջ-կարմունջ/, ամփոփումը /փեսայացու-փեսացու, տալը-տաք, անծնանկեր-անծովեր/, արտակարգ հնչյունափոխությունը /ես ինչ իմանամ-եսիմ, Գրիգոր-Գիգո, ցտեսություն-ցը/, հավելումը /հատ-եհատ/, պարտադրված հնչյունափոխությունը /մրազալույց-մրազալույս/ ակնհայտորեն չեն կարող նույն շարքում դասվել առնմանման, տարնմանման, համաքանության ու տարաքանության հետ: Վերջիններս ևս միատարր չեն: Օրինակ, հնչյունափոխական այնպիսի երևույթներ ինչպիսիք են ,արյան-արյամբ,-ը և ,գոլժկալ-ժուժկալ,-ը կամ ,ծանաչել-ծանաչել,-ը, տարբեր ուղղոթի զործոնների ազդեցությամբ են առաջ եկել, սակայն հայ լեզվաբանությունը չի սահմանազատում դրանք:

Հայերենի հնչյունափոխությունների համակողմանի ու ամբողջական ուսումնասիրության համար Թերևս անհրաժեշտ է նախ սահմանազատել հնչույթային համակարգի փոփոխություններն ու հնչյունափոխական օրենքները, այնուհետև տարբերակել հնչույթների տարբերակային փոփոխությունները այլ տիպի փոփոխություններից: Վերջիններս պետք է դասակարգել ըստ մի շարք չափանիշների, օրինակ, ըստ հնչյունափոխության

բնույթի, հնչյունափոխութեան գործոնների բնույթի /հոգեբանական, թե արտաբերական/, ընդգրկման ոլորտի, հնչյունափոխութեան դիրքի և այլն: Խոսքում հնչյունների տարբերակային փոփոխությունները կարող են փորձառական ուսումնասիրությունների, որից հետո միայն հնարավոր կլինի նրանց ամբողջական դասակարգումը:

Ա.Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ /Գորիս/

ՄԻԱԿՈՐՑԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ  
ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԲԱՆԱԴՐԻԶ

Միավորյալ /ընդհանուր ենթակայով բարդ համադասական/ նախադասությունը համադասական կապակցության մի տարատեսակն է: Այն ոչ միշտ է հանդես գալիս ինքնուրույն, այլ իր երկկազմ ու միակազմ դրսևորումներով արտահայտվում է նաև շարահյուսական այլ կառույցների կազմում, իբրև դրանց բաղադրյալ կազմիչ: Մասնավորապես պետք է նշել միավորյալ նախադասության գործածությունը շարահյուսական հեռայալ բաղադրություններում:

1. Միավորյալ նախադասությունը ավելի հաճախ դառնում է տարբեր ենթականերով բարդ համադասական կապակցության բաղադրիչ: Մասնավորապես գործածում են. ա/ միավորյալ նախադասություն + միավորյալ նախադասություն, բ/ միավորյալ նախադասություն + պարզ նախադասություն, գ/ միավորյալ նախադասություն + այլ ենթականերով համադասական նախադասություն, դ/ միավորյալ նախադասություն + բարդ ստորադասական նախադասություն կաղապարներով կառույցները: Այս դեպքում ամբողջ նախադասությունը բաղադրվում է երկու կամ ավելի ամբիջական կազմիչներից՝ միավորյալ նախադասություններից կամ միավորյալ նախադասություններից և մեկ այլ /պարզ կամ բարդ/ նախադասություններից, որոնք կապվում են միավորական, ներհական, տրոհական, հավելական, մեկնական և այլ հարաբերություններով, կապակցվում են բառական ու շարահարական եղանակներով: Օրինակներ՝ ա/ Հիմա սաքերը քնած դաքեր են. Պատմություններ են անհերքելի, Բոլոր քաքերը շիրմաքաքեր են Եվ բեկորներ են հին փառքերի /Հ.Սահյան/: բ/ Նա /երկիրն/ է որոշում ազգերի մակատաճից. Եւ ռանց նրա բնավորությունը հասկանալու ոչ կարող ես անցյալը ըմբռնել, ոչ ներկադ հասկանալ, ոչ ապագադ տնօրինել /Թումանյան/: գ/ Պապս դարձյալ ինչ-որ խոսքեր է ասում հորս, տառա աշխատում է մեղմել պապիս ասածները, իսկ հորեղբայրս ցայիս մոտ նստած աչքի տակով լսեթ նա /Բ. Մանուկյան/: իսկ հորեղբայրս ցայիս մոտ նստած աչքի տակով լսեթ նա /Բ. Մանուկյան/: իսկ հորեղբայրս ցայիս մոտ նստած աչքի տակով լսեթ նա /Բ. Մանուկյան/:



նում է այդտեղից, պառկում է հանգած մի խորույկի մոտ, բայց հեռվից  
եկող աղջկական ծիչերը թույլ չեն տալիս, որ աչք փակի /Ս.Այվազյան/:

2. Արդի հայերենում միավորյալ նախադասությունը արտահայտվում է նաև բարդ ստորադասական կապակցության մեջ՝ դառնալով զլխավոր կամ երկրորդական նախադասություն: Ընդամին, այն զլխավոր նախադասություն է, երբ նրա բոլոր բաղադրիչներն ունենում են ընդհանուր ստորադաս նախադասություն, ինչպես՝ Ում կամենում էր, տուն էր բերում, պատվում, մամիա դնում /թումանյան/: Բարդ ստորադասական կապակցության մեջ միավորյալ նախադասությունը ավելի հաճախ հանդես է գալիս երկրորդական նախադասության գործառույթով՝ կազմելով համաստորադասություն, իսկ բարդության ավելի ստորին օղակներում՝ համաստորադասություն ու ենթաստորադասություն միաժամանակ, ինչպես՝ Ձմռանամ, որ Սահակ վաղժապետին սիրում էին մեր գյուղում և մինչև օրս էլ հիշում են /թումանյան/: Վախենում էի միջամտել, որովհետև զիմ կեկելն այդպիսի դեպքում այն աստիճան զայրացած էր լինում, որ ոչ միայն չէր լսի ինձ, այլև կարող էր վերապրանք հասցնել միջամտության համար /Նար-Դոս/: Սակավադեպ էլ ստորադասական նախադասության կազմում միավորյալ է լինում թե՛ գերադաս և թե՛ ստորադաս նախադասությունը, ինչպես՝ Նրբ պահակները հեռանում էին միջանցքից կամ նստած տեղերում մրափում, ճանտարկյալներս մոտենում էինք դռներին, անցքերից իրար ծայն տալիս և սկսում էինք խոսել /Իսահակյան/:

3. Երբեմն միավորյալ նախադասության բաղադրիչներից մեկն ունենում է ստորադաս նախադասություն: Ձի բացառվում նաև նրա բոլոր բաղադրիչների՝ ստորադաս նախադասություն ստանալը: Երկու դեպքում էլ ամբողջ նախադասությունը պետք է դիտել համադասական/ովյալ դնպքում՝ միավորյալ/, հաշվի առնելով նրա ամիջական կազմիչների միջև եղած հարաբերությունը, ինչպես՝ Բոլորը նրան թշնամացել են և ճիմամբ քաղցած են թողնում, որ սովից մեռնի /Շիրվ./:

4. Միավորյալ նախադասությունը հանդես է գալիս նաև մեջբերվող նախադասությամբ կապակցության մեջ՝ դառնալով թե՛ ուղղակի և թե՛ հեղինակի խոսք, ինչպես՝ -Եվ բռնվածին կխոշտանցեն ու կսպանեն չարաչար, - ավարտեց քանդակագործը /Ստ.Զորյան/: -Չկերը ձերը չեն, - կրճուկ ասում է Անդոն և գլուխը քաղձ պահած գնում է դեպի կամուրջը, դեպի մեր թաղը /Բակունց/: Երբեմն էլ միավորյալ է լինում և հեղինակի խոսքը, և ուղղակի խոսքը, ինչպես՝ -Լավությունն արա ու թեկուզ ջուրը գցի... - ասում է անծանոթն ու չքանում աչքած մարդ ու կնկա աչքերից... /թումանյան/:

5. Միավորյալ կառույցը գործածվում է նաև որպես միջանկյալ ու ներդրյալ նախադասություն. ինչպես՝ նա մեզ ցույց՝ ավելի հիմնական-սը՝ խառնիմադանջ, կեղտոտ փողոցներով /այստեղ ամբողջ աղբը ցեղեկները պարզապես փողոց են թափում և մաքրում են ցիշերները/ /Վ. Պետրոսյան/:

Վ.Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ /Երևան/

ԱՆԳԼԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱ-  
ՀԱՏԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԱՍԹԻՆ ՇՐՋԱՆԻ ՌՈՒՆԵՐԵՆՈՒՄ

Խորհրդային շրջանում արտակարգ գործուն են ուսուցիչների բառապաշարի համալրման և հարստացման հետ կապված քաղմաթիվ գործընթացներ: Կարևոր դեր է հատկացվում բառապաշարի միավորների ոմախմաստային ծավալի փոփոխություններին /բառակազմության բառախմաստային միջոցին/:

Հայտնի է, որ բառախմաստային բառակազմությունը ընդգրկում է ոչ միայն բնիկ ուսուցիչներ, այլև փոխառյալ բառերի ուղորդը: Այս հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրելու խմաստային տեղաշարժի երևույթը ոչ միայն բնիկ, այլև փոխառյալ բառերում, որոնք փոխառյալ լեզվում նրա օրենքների համաձայն որոշակի հարմարեցման են ենթարկվում:

ԳՏՀ-ի դարաշրջանում կարուկ ածել է անգլերենի ձևույթների թափանցումը ուսուցիչների մեջ: Անգլիաբանությունները մեր օրերում թափանցում են լեզվի գործառնության գրեթե բոլոր ուղորտները, հատկապես գիտության, հրապարակախոսության և քաղաքական գրականության լեզվի մեջ:

Քանի որ այսօրվա գործառնական ոմերից ոչ մեկը անջրգետած չի մյուսներից, մի ոմի տարրերի թափանցումը և կիրառումը այլ ոմերի մեջ գնալով ավելի բնական է դառնում, իսկ դա իր հետքն է թողնում թափառող ձևույթի իմաստի վրա և պայմանավորում նոր փոխառու լեզվում քացակա իմաստի առաջացումը: Միաժամանակ տեղի է ունենում փոխառյալ բառերի ոմական նշույթավորման փոփոխություն, որը նրան ավելի է հեռացնում իր մայր ձևից: Հմտ. օր., ураган, шквал /օդերևութ. / - ураган, народных волнений, шквал протеста общественной /հասարակական-քաղաքական/:

Բառերում անգլիաբանություններին ոմախմաստային փոփոխության կարևորագույն պառմառններից է դրանց հասարակայնացումը՝ փոխառնող լեզվի համակարգում զաղափարախոսական նոր բովանդակություն ստանալը: Այս երևույթը հատկապես պարզորոշ է երևում խորհրդային շրջանի թերթային

Դրապարեակնոսական ոմում գործառնող անգլիաբանություններն դեպքում:  
Բառերի գնահատողական լիցք ձեռք բերելու հետ չկապած այլ պատճառ-  
ներից կարելի է նշել իմաստի կեղծ առկայացումը, այժմեականացումը,  
տերմինային տարրի վերատերմինացումը և այլն:

Նշանակության տեղաշարժի առավել արդյունավետ ուղիներից են  
փոխառյալ ձևութի վերատերմինացումը, դրա իմաստի ընդհանրացումը, կի-  
րառման մասնագիտացումը և ուրորտի ընդլայնումը:

Անգլիաբանությունների ոմաիմաստային տեղաշարժը խորհրդային շըր-  
ջանի ռուսերենի բառային համակարգի հարստացման կարևոր աղբյուրնե-  
րից և լեզվի զարգացման էական բնութագրերից մեկն է:

Գ.Վ. ՀԱՅՈՒԲՅԱՆ /Երևան/

ԵՐԵՐՈՐԴԱՅԻՆ ԱԶԳԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ

ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՋԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

/5-րդ դարի հայերենի հիման վրա/

Երկրորդային ազգակցության անունների իմաստային առանձնահատկու-  
թյունները բացահայտվում են բուն ազգակցության անունների համեմատու-  
թյամբ: Երկրորդային ազգակցությունը բանական հասարակության և մշա-  
կութի զարգացման արդյունք է: Իր էությունմբ այն բուն ազգակցության  
որոշ եզրերի հասարակական լրացումը կամ փոխարինումն է: Այս պատճա-  
ռով երկրորդային ազգակցության անունների բնութագրման համար էական  
են տեսականության /ժամանակավորության, օրինականության/ ապօրինու-  
թյան իմաստային հատկանիշները, որոնք անիմաստ, այլև ավելորդ են  
բուն ազգակցության անունների բնութագրման համար: Եվ ընդհակառակը,  
բուն ազգակցությունը բնութագրող իմաստային հատկանիշները՝ արյունա-  
կից /ձեռքբերովի, անմիջական /միջնորդավորված, հավելյալ են երկրոր-  
դային ազգակցության համար, որի հարաբերությունները անմիջական են և  
ձեռքբերովի /բացառությամբ , ,ապօրինի զավակ, , նշանակությամբ անուն-  
ների/: Հետևաբար բուն և երկրորդային ազգակցության անունների համար  
էական է միայն կենսաբանական սեռի իմաստային հատկանիշի արտահայտու-  
թյունը բառիմաստում, սակայն այս հատկանիշը էական է ընդհանուր բառա-  
պշարային մակարդակում՝ անձի և կենդանական աշխարհի որոշ ներկայա-  
ցուցիչների անուններում:

Երկրորդային ազգակցության անունների նշված առանձնահատկու-  
թյունները և 5-րդ դարի հայերենի տրամադրած նյութը թույլ են տալիս  
հետևյալ ձևով ներկայացնել նրանց իմաստային դասակարգումը: Երկրոր-



դային ազգակցութեան անունների իմաստային զերդաշտը պարունակում է երկու իմաստային դաշտեր՝ օրինական և ապօրինի ազգակցութեան անուններ:

1. ՕՐԻՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԱԶԳԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ իմաստային դաշտը բաժանվում է երկու ենթադաշտերի՝ ըստ հարաբերությունների տեղականութեան կամ ժամանակավորութեան:

1.1. ՏԵՎԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԱԶԳԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ենթադաշտը պարունակում է 5 իմաստային շարք՝ ըստ հարաբերությունների ձեռքբերման հասարակական հիմքի.

ա/ իրավաբանական ձեռքբերում /յօրայ, մօրու, ուրջու, խորթ/,  
բ/ բարոյագործառական ձեռքբերում / դայեակ, տիտան, սան, կաթնեղբայր, դայեկորդի, սանեղբայր, սանակից, կաթնկեր, սինտեկնոս/,

գ/ անորոշ բարոյական ձեռքբերում /ուղեգիր, եղբայրագիր, քոյրաթիւ, եղբայրատեսակ, զուգահայր, հօրամոյն/,

դ/ մասնավոր սեփականատիրական ձեռքբերում /ընդոծին, զերդաստանիկ, հարմ/,

ե/ ծիսական ձեռքբերում /կնքաւոր, կնքահայր, սան, սանակից, սանեղբայր, խոստովանաքոյր, որդի խոստովանութեան և այլն/:

1.2. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԱԶԳԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ենթադաշտը բաղկացած է երեք իմաստային շարքերից՝ նույնպես ըստ հարաբերությունների հասարակական հիմնավորման.

ա/ բուն ազգակցութեան թեկնածուներ /հարսնացու, առնակոյս, խօսնայր, ընկալուչ/,

բ/ բուն ազգակցութեան իրական միջնորդներ /առիթ, աստաւղ, խնամեխօս/,

գ/ բուն ազգակցութեան ծիսական միջնորդներ /հարսնեղբայր, հարսնաքեր, հարսնաւեր, փեսահրաւեր, փեսաւեր, փեսայածու/:

2. ԱՊՕՐԻՆԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԱԶԳԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ իմաստային դաշտը պարունակում է երկու ենթադաշտեր՝ ըստ հարաբերությունների ձեռքբերման հիմքի և տեղականութեան:

2.1. ՏԵՎԱԿԱՆ-ԱՐՑՈՒՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ենթադաշտ /խորթ, հարմորդի, աղջկորդի, բոգորդի, պոռնկորդի, շնորդի, պիտակ/,

2.2. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ-ՉԵՌՔԵՐՈՒՎԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ենթադաշտ /հարմ, աղիմ, կեսակից, անկողնակից, հոմանի, սեղեփ և այլն/:

ՀԱՅԵՐՆԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՓՈՐՁ

Հենվելով Մոուստի քննադատական դիտողությունների վրա՝ Ջ.Գրին-բերգը, Քանադական մոտեցումը լեզուների ձևաբանական տիպաբանության մեջ, հայտնի հոգվածում նշում է Է.Սեպիրի տիպաբանական դասակարգման որոշ հատկանիշների մակերեսայնությունը: Լեզվաբանի ընդհանուր տպավորությունն այն հիմքը է, որի վրա կարելի է ծավալել նման կարևոր դասակարգում, ուստի Գրինբերգն առաջարկում է լեզվաբանության մեջ այսօր լայնորեն հայտնի բանաձևերը՝ այս կամ այն ցուցիչների հաշվարկման միջոցով փառաբանական դասակարգման աղյուսակում լեզվի տեղը մշտելու համար: Դրանք տասն են և առնչվում են սեպիրյան դասակարգման բոլոր երեք չափանիշներին /հասկացությունների տիպերը, բերականական տեսնիկան, համադրության աստիճանը/:

Բոլոր բանաձևերը չեն, որ իրագործելի են լեզուներում: Հնարավոր առարկությունների մի մասը քննարկում է հեղինակն ինքը, մյուս մասը բացահայտվել է մեր հաշվարկումների ժամանակ: Մի կողմ թողնելով բանաձևերի մի մասը, որոնց հաշվարկումը դեռևս հնարավոր չենք համարել հայերենի նյութի վրա, ընտրել ենք առարկություն Հհարուցողները և փորձել ստանալ հայերենի հարաբերությունները հնարավորին չափով առարկայորեն գնահատող ցուցիչներ:

Եղած բանաձևերից ընտրել ենք համադրության, բառաբարդման, բառափոխության, նախածանցման, վերջածանցման և միջածանցման աստիճանների ցուցիչները հաշվարկող բառաձևերը: Միջածանցների փաստն ընդունել ենք հայերենի նյութի հրամայական պահանջով, դրանց տակ քննելով -ա-, -ե/ի+ա-/ հոդակապերը, կցական բարդություններում հոդակապի արժեք ունեցող -ըստ-, -ընդ-, -առ-, -և-, -ու- և այլ միավորներ: Նման միավորների դասակարգման և արժեքավորման հարցում եղած թեականությունը հատուկ է ոչ միայն այս լեզվաբանությանը: Սակայն, որոշակի բերականության, վերջին հրատարակությունում հոդակապն արդեն դիտվում է իբրև միջածանց:

Հաշվարկման էական դժվարություններից է նյութի ձևաբանական վերլուծության ժամանակ հանդես եկող երկընթացքը. որքանով կարելի է հաշվի առնել բառակազմության պատմականորեն մաքուր և այժմ ոչ գործունե կաղապարները: Դրա համար դժվար կամ զրեթե անհնարին է առաջարկել որոշակի գործողության ծրագիր. ամեն դեպքում վճռական է դառնում լեզվա-

բանի ներըմբռնմամբ իրականացող գնահատությունը: Պակաս կարևոր չէ նաև բնագրերի ընտրության որակական և քանակական խնդիրների պարզումը: Գրինբերգն իր ցուցիչները հաշվարկում է 100 բառանոց բնագրերի հիման վրա: Սակայն, եթե նրա խնդիրն է ցույց տալ հաշվարկման եղանակը, ապա մենք փորձել ենք գտնել հայերենի բնութագրական ցուցիչները: Այստեղ կարևոր է նյութի ռեսուսմասիման ուղղվածությունը: Հաշվարկման առաջին փորձերի ժամանակ ջանում էինք նյութը համակարգել ըստ ժամանակաշրջանների՝ 19-20-րդ դդ.՝ գրականությունից վերցված տարասեռ բնագրերով: Սակայն ոչ մի օրինաչափություն չէինք գտնում, որը համարվեր ստացված ցուցիչների առարկայականությունը: Հետագայում նյութը խմբավորեցինք ըստ գրական ոճերի և բացահայտեցինք շոշափելի տարբերություններ:

Հաշվարկված են 30 հազար բառանոց բնագրեր՝ առնված 10 հազար բառ լեզվաբանության, հոգեբանության, մանկավարժության և քաղաքատնտեսության դասագրքերից, 10 հազար բառ՝ հայ գրական արձակից, 10 հազար բառ՝ չափածոյից: Արդյունքները գոհացուցիչ են այն առումով, որ ցուցիչները հետևողականորեն արտացոլում են նշված տարբերակման առարկայականությունը: Գրական արձակի բնագրերի ցուցիչները ամենուրեք միջին դիրք են զբաղում զիտական և չափածո բնագրերի միջև, բացառությամբ նախածանցման ցուցիչի /ամենացածրը/, իսկ սա նշանակում է, որ լեզուների ցուցիչները կարելի է հաշվարկել գրական բնագրերի հիման վրա և արդյունքները ներկայացնել իբրև լեզվի միջին:

| բնագրեր | համադրություն | բառաբարդություն | ածանցում | նախածանցում | միջածանցում | վերջածանցում | բառափոխություն |
|---------|---------------|-----------------|----------|-------------|-------------|--------------|----------------|
| զիտական | 2,20          | 1,11            | 0,54     | 0,03        | 0,10        | 0,41         | 0,55           |
| արձակ   | 1,90          | 1,06            | 0,36     | 0,01        | 0,04        | 0,30         | 0,48           |
| չափածո  | 1,78          | 1,04            | 0,33     | 0,02        | 0,03        | 0,28         | 0,41           |

Սույն աղյուսակը հավակնություն չունի ներկայացնելու հայերենի վերջնական ցուցիչները՝ նյութի նեղ ընդգրկման պատճառով /ընդամենը՝ 30 հազար բառ/, սակայն ցույց է տալիս, որ հենց նման եղանակով պետք է կատարել նյութի խմբավորումը և արդյունքների համակարգումը:



ԺԸ-ԺԹ ԴԴ. ԳՐԱՐԱՐԻ ԲԱՌԱՊԱՇՏԱՐԻ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Բառապաշարի կատարելագործումը լեզվի ինքնարտահայտման բնական և օրինաչափ երևույթներից է. այն հանդես է գալիս լեզվական իրակու-թյունների վերակազմավորման և որակական փոփոխություն ձևով, հետապն-դում է հաղորդակցման միջոցի արդյունավետության բարձրացման նպատակ: ԺԸ-ԺԹ դդ. զրաբարի բառապաշարի կատարելագործումը տեղի էր ունենում օտար ազդեցության վերացման, , , դասական զրաբարի, , բառապաշարի օգտա-գործման և ինքնուրույն մշակման ուղիների որոնման հիմունքներով:

Օտար ազդեցության վերացումն ամբողջովին վերաբերում է զրաբարի բառապաշարում երբեմնի արմատավորված լատինաբան նորամուծությունների հաղթահարմանը: Այն ընդգրկում է ԺԸ դ. սկզբներից մինչև 80-ական թթ., ընթանում արտաքին միաջմտության աչալուրջ և համերաշխ պայմաններում, իրագործվում , , հայկաբան, , հայերենի համարմով ու լեզվական պայքարի երեք փուլով:

Ոմանք , , դասական զրաբարի, , գյուտը դիտում էին նոր ժամանակնե-րում գործառույ զրաբարի կատարելագործման կարևորագույն խթան: Այդ գյուտի հեղինակները, իբրև հայ մշակույթի և հայերենի ուսումնասի-րության առանձին հաստատության ներկայացուցիչներ, առաջարկում են նոր շրջանի հայերենը, հատկապես նրա զրաբար տարբերակը կատարելագործել , , դասական զրաբարի, , բառապաշարի օգտագործումով: Այդ հարցում, ընդ-հանուր շահագրգռության պայմաններում, տեղի է ունենում որոշակի տա-րածայնություն. , , դասական զրաբարի, , կողմնակիցների ձեռնարկումներն ամբողջովին հակադրվում են զրաբարի մյուս կարգի մշակման փորձերին: Հատկանշական է մխիթարյան երկու դպրոցների միջև երևան եկած տարածայ-նությունը:

Փորձեր են արվում զրաբարի բառապաշարը կատարելագործել ըստ , , դասական զրաբարին, , սուովել բնորոշ հետևյալ եղանակների. բառակազ-մական , , մաքուր, , և երկրորդային հիմքերի փոխարեն համապատասխանաբար ձևավոր և առաջնային հիմքերով բաղադրված բառերի կիրառում /աստեղագի-տական, աստեղագիտություն, երեքանկյունաչափություն, չորեքկուսի/, տեղ-միակազմության հարցում դիմել , , դասական զրաբարի, , ավանդույթին, ըստ որում նախապատվությունը տալ հին, օտար տեղմիսին, քան անհրկի նորակազմությանը /ագիմուտ, գենիթ, սքուլաստիկա/, գործածել հնամիտ

քաղաղական հիմքերը /երկուորականութիւն- dualisme , հագաքապետ-  
major , հարկւրապետ- capitaine , համարողութիւն- arithmétique , նը-  
կատութիւն- théorie , տեսողութիւն- optique / , , դասական գրաբարյան ,  
բառերը կիրառել նոր իմաստով , բայց ոչ դիմել նոր փոխառության /ղար-  
ժուած- apostrophe , գեղչել- paralepsis , շրջանք- tropes / :

Գրաբարի բառապաշարը որոշակիորեն կատարելագործվում է ինքնու-  
րույն մշակման ուղիների որոնմամբ : Զանգեր են զործադրվում ըստ կա-  
րելվույն հետամուտ լինել հին հայերենի ընդհանուր զրական նորմային ,  
խուսափել գրաբարի բառապաշարի այն տարրերից , որոնք նրան անցել են  
հետագայում՝ ոչ կենդանի հաղորդակման միջոց լինելու շրջանից ի վեր :  
Այս իրողութիւնը ցայտուն է հատկապես տարբեր ժամանակներում երևան  
եկած գրաբար միևնույն երկի լեզվական , , մշակման , , աշխատանքներում ,  
ինչպիսիք են ըստ այդմ՝ հարադրութիւնից հետագայում առաջացած կցա-  
կան ըարդության վերածում հարադրության / , , հետաշրջում , , / . / հմտ .  
յանկելանեմ - յանկելանեմ , ցանցառնեմ - ցանցառնեմ / , բառահիմքերի  
միշտ ընտրութիւն / հմտ . դրեցեալ - եղեալ , քանեցեալ - քացեալ / , ո-  
րոշ բառերի ոչ միշտ զրության , որոշ նախդիրների անհարկի կիրառու-  
թյան շտկում / հմտ . ըռպէ - ըռպէ , ի յիւրաքանչիւրում ժամանակի -  
յիւրաքանչիւրում ժամանակի , ցո և իցե ցնիւթ-զո և իցե նիւթ / , բառա-  
կազմական շտկումներ / հմտ . հինգերորդ - հինգերորդ / :

Հայերենի զարգացման նոր շրջանում հիմնականում նման հիմունքներ-  
նով կատարելագործված գրաբարի բառապաշարը ակնհայտորեն նպաստում է  
նոր զրական հայերենի բառապաշարի զարգացմանը : Նոր զրական հայերենը  
հարստանում և անընդհատ կատարելագործվում է գրաբարի բառապաշարի հի-  
ման վրա , որը տեղի է ունենում զրական աշխարհաբարի սկզբնավորումից  
մինչև զրական հայերենի ժամանակակից փուլը :

Ա. Ն. ՀԱՆՆԵՅԱՆ / Երևան /

ՇՆՁԵՆԻ ԶԱՅՆԵՆՆԵՐԻ ԱՐՏԱԲԵՐԱՅԱՆ ՏԱՐԲԵՐԱՆ-  
ՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐՔԱՌՆԵՐՈՒՄ

Աղդի հայերենի բարբառների բաղաձայնական համակարգում շնչեղ ձայ-  
նեղները սառուզաբանական միևնույն հիմքն ունեցող / հին հայերենի ք, ց,  
դ, ձ, ջ-ին համարժեք / հպական ու կիսաշփական այն հնչյուններն են , ո-  
րոնց բնորոշ է ձայնեղ կամ կիսաձայնեղ շնչեղության որոշակի հառկանիշ :  
Ըստ հագագային բնույթի յուրահատկութիւնների , առանձնանում են շնչեղ  
ձայնեղների արտաբերական երկու հիմնական տարբերակ՝ ուժգնային և

## Թույլ:

Ուժգնային տարբերակի ծայնեղ շնչեղությունը արտահայտվում է ստորին-կոկորդային մաքուր կամ աղմկավոր ծայնային արտաբերությամբ, որով էլ հասկանշվում է հնչյունի ուժգնային բնույթը: Իր կոկորդային յուրահատուկ հնչողությամբ այս տարբերակը աղերսվում է միևնույն համակարգում ինքնուրույն գործառույթ ունեցող ծայնորդային հազագին /հմմտ.՝ հիշատակ, հմմտն և բ<sup>ա</sup>հերան, գ<sup>ա</sup>հինի/:

Թույլ տարբերակը ընդհանուր առմամբ ընկալվում է իբրև շնչեղ, սակայն ունի ծայնեղ շնչեղության թույլ արտահայտություն, որը գուրկ է առաջին տարբերակի ուժգնային բնույթից: Այս տարբերակով բնորոշվող բաղաձայնական համակարգերը միահազագ են, ունեն միայն խուլ յ, որը սակայն ծայնավորից առաջ կարող է դրսևորել նաև ծայնեղության որոշ աստիճան թե ինքնուրույն գործառույթ, թե շնչեղ բաղաձայնների կազմում:

Փորձառական հետազոտության ավյալներով շնչեղ ծայնեղների երկու տարբերակներն էլ երևան են հանում հնչյունի հպական-կիսաշփական բաղադրիչի /հատույթի/ նույնանման բնույթ լայն աստանումով՝ ծայնեղությունից մինչև լիակատար խլություն, վերջինիս գերակշռությամբ:

Ձայնապակերներում հնչյունի ուժգնային տարբերակի կոկորդային բնույթը ունի երկակի դրսևորում. այն կամ պայթյունի փուլին հաջորդող, աղավել կամ նվազ ուժգնությամբ արտահայտված ծայնորդ-ծայնավորային հատույթ է, որ հստակորեն առանձնանում ու տարբերվում է հաջորդող ծայնավորի պատկերից, կամ վերջինիս վրա մասամբ, երբեմն միայն ամբողջությամբ տարածվող աղմկային երանգ: Նշված իրողությունը, որ հատուկ է նաև ինքնուրույն գործառույթով ծայնորդային յ հազագին, մեր կարծիքով, պայմանավորված է հազագային արտաբերության մեջ ծայնի և աղմուկի հարաբերությամբ. առաջին դեպքում գերիշխող է ծայնեղությունը, երկրորդ դեպքում՝ նաև աղմկային տարրը:

Հնչյունի թույլ տարբերակի հազագային բնույթը ձայնապակերներում արտահայտված է պայթյունի փուլին հաջորդող կիսաձայնեղ շփական հատույթի պատկերով /ծայնեղացած յ/: Հաջորդող ծայնավորը ընդհանուր առմամբ ունի թույլ ուժգնությամբ սկիզբ, որի վրա երբեմն դիտվում է աղմկային երանգի աննշան արտահայտություն:

Շնչեղ ծայնեղների ուժգնային տարբերակը ընդգրկում է արդի հայերենի բարբառների կենտրոնական, մասամբ էլ հարակից արևմտյան և արևելյան տարածքը /Մուշ, Կորին, Արարատյան դաշտ, Բայազետ, Նոր-Ջուղա, Արաբկիր, Սեբաստիա, Շապին-Գարահիսար/: Այն պայմանականորեն անվանել ենք կենտրոնական սեղա տարածք: Շնչեղ ծայնեղների թույլ տար-



բերակը տարածված է /եղել/ արևմտյան բարբառաբանում /Խոտըջուր, Այն, Համշենի Մալա, Ատաիալ, մասամբ էլ՝ Նոր-Նախիջևան, Նիկոմիդիա, Բեյ-լան/։ Այս տարածքը, որ կոչել ենք արևմտյան, ցրելվ է՝ համա կղզիացած հեռավոր գաղթօջախներում։

Շնչեղ ծայնեղները գործառում են հիմնականում բառասկզբի, որոշ բարբառներում /Նոր-Ջուղա, Բայագեա, Մուշի խոսվածքներ/ նաև միջծայնավորային կամ նախածայնավորային դիրքերում /ազ՝ա, բ՝օրբ՝ոս/։ Հըն-չույթաբանական մակարդակում հանդես են գալիս իբրև բաղաձայնական եռանդամ համակարգի լիիրավ միավոր /շնչեղ-ծայնեղ, շնչեղ-խուլ, ոչ շնչեղ հնչույթ/։ Ուժգնային տարբերակը համակարգի մյուս անդամներին հակադրվում է ծայնեղությամբ և շնչեղությամբ կամ կոկոռոյանությամբ /դ՝ա-թա-տա-տա/։ Լարվածությունը նրա հավելյալ հատկանիշն է, քանի որ հատուկ է նաև մյուս անդամներին՝ խուլերին և շնչեղ խուլերին։ թուլլ տարբերակի էական հատկանիշներն են՝ շնչեղությունը և թուլությունը՝ ոչ լարվածությունը։ Ձայնեղությունը այս տարբերակի հավելյալ հատկանիշն է, քանի որ արևմտյան տարածքում, իբրև էական, այն սովորաբար հատուկ է լինում ոչ շնչեղ հնչույթին /դ՝ալ-դալ/։

Կենտրոնական տարածքում միջծայնավորային և բաղաձայնի դիրքերի ծայնեղ-կիսածայնեղները /աբուլը, աք<sup>4</sup>/ հնչույթային միասնության մեջ են ոչ թե շնչեղ ծայնեղների, այլ բառասկզբի պարզ խուլերի հետ /պադ<sup>5</sup>, կադու/՝ լրացուցիչ բաշխման հարաբերությամբ ներկայացնելով համակարգի ոչ շնչեղ հնչույթը /հմտ.՝ կուղ<sup>2</sup>, կուղ<sup>3</sup> ուղի, կուտ-կու<sup>6</sup>ղի/։

Ա.Ն.ՀԱՆՇՅԱՆ /Երևան/

ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՅՆԵՎ ՊԱՅՔԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԻՍԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ  
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Հայտնի է, որ արդի հայերենի բարբառային տարբեր տարածքներում բ, ց, ը, ձ, ջ զրույթներին հնչյունապես համապատասխանում են շնչեղ ծայնեղներ, շնչեղ խուլեր, ծայնեղներ և խուլեր /բ՝, փ, բ, պ.../։ Այս տարբերակումը կրում է բավական ընդհանուր բնույթ։ Տարածքային հանգամանակից ընտելությունը երևան է հանում նշված հնչյունների արտաբերական այլալիսի յուրահատկություններ, որոնց դիտարկումը խիստ շահեկան է տարածամասկյա հետազոտության տեսանկյունից։

Բարբառների կենտրոնական և շրջամտյան տարածքներում գործառում են. ա/շնչեղ ծայնեղների՝ ուժգնային և թուլլ արտաբերությամբ տարբերակներ. բ/բմաերանգ շնչեղներ /դ՝անակ, թանակ/, գ/ոչ կայուն, ծայ-

նեղության և խլուքյան միջև ժառանգորդ ժայնեղներ. դ/ անշան շնչեղությամբ ուղեկցվող խուլներ: Այս բոլոր հնչյունները, կարծում ենք, ծագումով հանգում են շնչեղ ժայնեղներին:

Բարբառների արևելյան տարածքում ժայնեղները և դրանց դիմաց առկա խուլները բնորոշվում են քմաերանգությամբ /քմն, պմն.../: Ենթադրվում է, որ սրանք զարգացել են քմայնության հատկանիշով օժաված երբեմնի ժայնեղներից:

Միջակա /սահմանային/ տարածքներում գործառող քմաերանգ շնչեղ ժայնեղներն ու վերջիններիս հանգող շնչեղ խուլները առաջացել են, ըստ երևույթի, քմակոկորդային երանգով նախնական ժայնեղների մի շարքից:

Քանի որ հայերենի հին շրջանի սկզբում արդեն նշվում է ժայնեղների շնչեղության, խլուքյան և քմայնության հատկանիշների առկայություն /բազուկ, պազուկ, փազուկ, գեամ<գամ/, ուստի ուշ հնագույն հայերենի բարբառային տարածքներում կարելի է վերականգնել կոկորդային /շնչեղ/, քմային և քմակոկորդային բնույթով օժաված նշանակիր ժայնեղների շարքեր /բ՛, բ՛, բ՛/: Պատմական բարբառագիտության խնդիրն է՝ բացահայտել ժայնեղների նշված շարքերի նախնական աղբյուրը, որով կհավաստվի նաև արևելյան տարածքի հնագույն ժայնեղների քմային բնույթը /ի դեպ, ենթադրվում է, որ քմայնության հատկանիշն այս տարածքում ենթաշերտային կամ առշերտային ազդեցության արդյունք է/:

Շնչեղ ժայնեղների ուժգնային տարբերակով բնորոշվող բաղաձայնական համակարգերում գործառում է նաև ժայնորդային յ հազազը, որն աղբյուրվում է հին հայերենի բառասկզբի յ ժայնորդի հետ /հիսուն, հագօփ/: Բացահայտելով այս աղբյուրը՝ նախապես առաջադրել էինք հին հայերենի յ ժայնորդի կոկորդաքմային բնույթի վարկածը /տես մեր ,,Բարբառային ժայնեղ հազազները և նրանց աղբյուրը հին հայերենի բառասկզբի յ ժայնորդի հետ,, , Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Եր. 1984, էջ 360-368/:

Նկատի ունենալով, որ ա/ժայնորդային յ հազազը առնչվում է նաև շնչեղ ժայնեղների հազազային բնույթին /ք՛հեռան, ք՛հնի/ և բ/ յ և յ հնչյունների ծագումնային աղբյուրի հիման վրա կարելի է վերականգնել շնչեղ ժայնեղների հնագույն տարբերակը՝ արդի յ-ի դիմաց հազազային յ ցուցիչով՝ բ<sup>յ</sup>, գ<sup>յ</sup>, դ<sup>յ</sup>, ժ<sup>յ</sup>, չ<sup>յ</sup>, առաջադրում ենք մի նոր վարկած, որի համաձայն վաղ հնագույն հայերենի ժայնեղներին հատուկ է եղել քմակոկորդային բնույթ: Ահա այն ակունքը՝ բ<sup>յ</sup>, գ<sup>յ</sup>..., որից, մեր կարծիքով, կարող էին սերվել թե շնչեղ ժայնեղները, և թե քմայինները:

Ջարգացման տարամետ ուղիներով արևմտյան տարածքում չեզոքացել է ժայ-  
նեղների քմայնության հատկանիշը, իսկ արևելյան տարածքում՝ շնչեղու-  
թյունը:

Չայնեղների այս երկու տարբերակների ձևավորման գործընթացում,  
անշուշտ, որոշակի դեր է կատարել բարբառային տարբեր տարածքներում  
նախահայկական հ.-ե. ցեղերից ժառանգված արտասանական հիմքը: Հայտնի  
է, որ պալթականների քմայնացման երևույթները, սկսած հ.-ե. շրջանից,  
ընդունել են եղել նախահայերենի բաղաձայնական համակարգին: Ուստի և քմ-  
նական է կարծել, որ հիմքեր ունենալով վաղնջական ժամանակներում՝ հը-  
նագույն հայերենի մակարդակում քմայնացման երևույթը ինչ-որ չափով  
զարգացել է արևելյան բարբառային տարածքում՝ ընդգրկելով նաև ժայնա-  
վորական համակարգը: Մեր կարծիքով այս իրողությունն արդեն արտահայտ-  
ված է Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում: հմտ.՝  
Giarnia > Գժռնի, Կժռնի, Baina > Վան: Այս տեղանուններում ժայ-  
նեղներին հաջորդող լ-ն, ամենայն հավանականությամբ, քմայնացման զը-  
րային արտահայտությունն է, կամ գոնե՝ նախադրյալը:

Այսպիսով՝ եթե հաստատվի հնագույն հայերենի բարբառներում նը-  
շանակիոր ժայնեղների աղուների բացահայտման այս վարկածը, ապա հիմնա-  
վորված կլինի արևելյան տարածքի նախնական ժայնեղների քմային բնույ-  
թը, այսինքն՝ կբացահայտվի , ,Ամառյանի օրենքի, , զաղտնիքը:

Մ. Կ. ՀԱՆՏԵՑԱՆ /Երևան/

ԿԵՆՏԱՆԻՆԵՐԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ  
ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ԻՄԼՍՏԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայերենի հնդեվրոպական բառապաշարում զգալի թիվ են կազմում  
կենդանիների անվանումները /շուրջ հիսուն բառ/: Թեմատիկ այս խմբի  
մեջ մտնող բառերը ընդունվում են մի շարք հնչյունական, ձևաբանական,  
իմաստային առանձնահատկություններով, ուստի միշտ եղել են համեմատա-  
բանների ուշադրության կենտրոնում:

Մեր նպատակն է առլ հայերենի հնդեվրոպական ծագման կենդանիների  
անվանումների տարածքային նկարագիրը, բացահայտել այդ անվանումների  
գուգաբանական տարածքները բառաձևերի և բառիմաստների համար, ինչպես  
նաև պարզել այդ բառերի իմաստային և ձևաբանական կառուցվածքներում  
կատարված պատմական տեղաշարժերը: Նյութի վերլուծությունը կատար-  
վել է տարածքային լեզվաբանության մեջ ընդունված մեթոդներով ու  
սկզբունքներով: Հնդեվրոպական նույն արմատներից եկող բառերը հառ-



կացվել են այս կամ այն տարածքին ըստ տարածքային հատկանիշների ընդհանրությամբ:

Իբրև բառային գուգաբանության արտահայտություն դիտվածքի տարածքային հատկանիշներ ընտրվել են իմաստագատիչ գործառություն ունեցող տարրերը: Դրանք հիմնականում տարբեր բառակազմական միջոցներն են /արմատ, ածանց, ածական, ծայնդարծ և այլն/: Բովանդակության դիտվածքի տարածքային հատկանիշներ են նույնիմաստությունը, մերձիմաստությունը /երբ բառը դուրս չի գալիս միևնույն թեմատիկ խմբի շրջանակներից/ և տարիմաստությունը:

Պահպանված անվանումները բաժանվել են երկու հիմնական խմբերի՝ ընտանի և վայրի կենդանիներ:

Հայերենում առկա են ընտանի կենդանիների հետևյալ անվանումները՝ առևար, կով, հորթ, եզն, ցուլ, երինջ, մոզի, էշ, ձի, մաքի, զառն, բուծ, այծ, ուլ, հավ, աքաղաղ, շուն, սկուռնդ/: Վայրի կենդանիներ՝ աղուես, առիւծ, առն, արծուի, արջ, զայլ, եղն, ինձ, ոգսի, ծիծառն, ցին, կոռնկ, մուկն, ծուկն, ծագ, մարի, միջատներ և երկկենցաղներ՝ մուս, մրջիմն, անիծ, թիթեռն, լու, մեղու, սարդ, տիգ, բռ, գորտ, օձ, իծ, քարը:

Ստորև հիմնականում քննվել են ընտանի կենդանիների անվանումները:

Հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների մերձավորության աստիճանն ու ցեղակցական կապերը բացահայտելու նպատակով կազմվել են աղյուսակներ: Դրանց հիման վրա կատարվել է վիճակագրություն, որից արվել են հետևյալ եզրակացությունները.

ա/ Համահնդեվրոպական ընդհանրություններ դիտվում են հիմնականում ընտանի կենդանիների անվանումներում /օրինակ՝ կով, ձի, շուն և այլն/: Վայրի կենդանիների անվանումների մեծ մասը, ինչպես նաև ընտանի կենդանիների որոշ անվանումներ /օրինակ՝ այծ/ ունեն տարածքային սահմանափակումներ: Նման փաստի պատճառը, հավանաբար, հնդեվրոպական ցեղերի համախառն տեղաշարժերն են եղել, որոնք գուցե որովայն են աշխարհագրական ավյալ տարածքի կենդանական աշխարհի փոփոխությանը: Համախառն հայերենի բառը մեկուսանում է այս կամ այն լեզվով սահմանափակվող տարածքում /հիմնականում հունարենի, հնդկերենի և գերմանական լեզուների հետ/:

բ/ Թեմատիկ այս խմբում բառերի իմաստափոխությունը շատ դժվարում պայմանավորվել է տարբերություն /օրինակ՝ արջ, զայլ, օձ, նպաստակ, մուկն և այլն/: Որոշ դեպքերում կենդանիների անվանումները փոխվել

են՝ մնալով, սակայն, միևնույն թեմատիկ խմբի շրջանակներում /օրինակ՝ հայ. ինծ.- հհնդկ. առյուծ/: Կենդանիների անվանակազմության համար երբեմն հիմք են հանդիսացել նրանց արծակած ծայները /այլ կերպ՝ որոշ անվանումներ նմանաձայնական ծագում ունեն. օրինակ՝ հայ. առյուծ, ,մոնչալ,, -ից/, երբեմն՝ կենդանու զույնը կամ էլ որևէ այլ հատկություն /օրինակ՝ մուկը լիովներենում , գորշից,, և այլն/:

զ/ Հնչյունական առումով այս խմբի բառերը յուրահատկություններ, շեղումներ գրեթե հանդես չեն բերում: Եղած փոփոխությունները հիմնականում պայմանավորված են ձևաբանական գործոններով:

դ/ Ձևաբանական առումով նկատվել են հետևյալ փոփոխությունները: Հարաբերականորեն ավելի մեծ թվով բառեր խմբավորվել են -ու- հիմքի շուրջը /կով, աղվես, առյուծ, ինծ և այլն/: Սրանց մեջ կան այնպիսիները, որոնք շարունակում են հ.-ե. օ-ս-ով հիմքերը, ինչպես, օրինակ, աղուեսն է: Հետագայում այս հիմքը դարձել է թեմատիկ տվյալ՝ խմբի ձևաբանական ցուցիչը:

Կենդանիների անվանումները խմբավորվել են նաև ձևաբանական այլ ցուցիչներով՝ \*ko-, \*to- ածանցներ /օրինակ՝ ժուկն, մուկն, մըլուկն, սարդ և այլն/:

Ծ.Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ /Երևան/

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆԻՐԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՄՏՈՒԳԱՔԱՆԱԿԱՆ ՈՒ ԳՈՐԾԱՌԱՎԱՆ ԱՂԵՐՍՆԵՐԸ ԴԵՐԱՆԱԿԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

\*ԵՅԵԹ հնդեվրոպական արմատը հնարավոր է գտնել հայերենի ծագումնաբանական ամենատարբեր շերտերում և բառաշարի ամենաբազմազան թեմատիկ խմբերում: Ներկա ուսումնասիրություն խնդիրն է ներկայացնել այս արմատի ծայնդաժային տարբերակների դրսևորումները հայերենի դերանվանական համակարգում:

1/ Լիժայն \*seyo- արմատաբերակը առկա է իւը անդրադարձ դերանվան հիմքում գուժ հայկական ր ամականի հավելումով, իւը, իւըոյ անդրադարձ-ստացական դերանվան և, հավանորեն, հիւը, հիւըոյ գոյականի կազմում, եթե, իհարկե, վերջինս չի ծագում ծայնդաժային գրո աստիճանով արմատաբերակից /հմտ. հ. սլավ. СВЯТЪ, լիտվ. svėdas, svėtis, ևշ. sveas, , ,հյուր,, և այլն/:

2/ Արմատի միջին ծայնդաժային \*soyo- տարբերակը հայերենում նկատված է ըըոյ, ըըըոյ դերանուններում /Հ. Գեղեցիկյան/, նաև սոյոք բառում, թեպետև վերջինս արմատական ս-ի պահանջմամբ հնչունական օրի-

նաչափություններից շեղվելու դեպքերի մեջ է մտնում /Գ.Ջահուկյան/:

Յ/ Ձայնդարձի հ.-ե. \*e և \*o աստիճաններով արմատաորեն անբերելի են նույնական բառակազմության ուշադրով գուգահեռներ են ներկայացնում: Հմտ. իրենք-որենք, իրաւուն-օրէն և այլն: Մասնավորապես ուշադրութեան արժանի է հիմքերի ր/ն հերթագայութեան առումով՝ օրենք/օրէն կամ որենք/որէն հարաբերակցութեանը: Այդ տեսակետից հմտ. հ.-ե. նույն արմատին հանգող *Svear*, *Suiones*, շվեդներ, շվեդացիներ, ցեղանվան տարբերակներ:

Զ/ Ամենահարուստ ու քաջագան բառատեղծման առիթ տվել է ձայնդարձի զրո աստիճանով արմատաորեն անբերելի՝ \*sye-ն. որը՝

ա/ արմատի ձայնորդի վանկարար արժեքի ձեռքբերումով և համապատասխանաբար վանկասկզբի ս-ի անկումով տվել է ուսանիմ, ամուսին, ուսած և այլ բառեր,

բ/ հայտնի հնչյունական հ.-ե. \*su>հայ. ք զարգացմամբ ստացվել են ցեղակցական քոյր, քեղի, քենի եզրերը, ինչպես նաև քեց, քոյ և այլ բառեր,

գ/ արմատի ձայնորդի անցումով ետնալեզվային պայթականի և նրան անմիջապես նախորդող ս-ի պահպանումով /ամբողջութեամբ վերցրած սա ևս օրինաչափութեանից շեղվող դեպք է/ ունենք սկեստուր բառը:

Այն հանգամանքը, որ զրո ձայնդարձով արմատաորեն անբերելի են նույն ցեղակցութեան եզրաբառեր է առաջ բերել, մտածել է տալիս այս արմատի և հ.-ե. \*teye-/seye- , ընդարձակվել, առաջացնել, ծնել, արմատի միջև եղած աղերսների բնույթի մասին:

դ/ Արմատի զրո ձայնդարձով տարբերակը տեղ է գտել նաև հայերենի դերանվանական համակարգում՝ նախ և առաջ ինքն, ինքեան դերանվան կազմում /\*in-aye-in-ից ըստ Տերվիշյանի, ի հակադրութեան Պեղերսենի, որը հանգեցնում էր \*in-aye-in նախածին/: Հիմնվելով ծնական և իմաստային բնույթի մի շարք կովանների, ինչպես նաև հ.-ե. այլ լեզուներում համապատասխանութեանների առկայութեան կարևոր կովանի վրա, կարելի է առաջ քաշել այն վարկածը, թե նույն այդ \*aye արմատաորեն անբերելի առկա է նաև երկրորդ դեմքի անձնական դերանվան եզակի թվի թեք հոլովահիմքերում:



## ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԽՄԱՍՏԱՅԻՆ ԽՐԲԵՐԸ

Հայկական տեղանունների կազմությանն առավելապես բնորոշ է բառաբարդումը: Տեղանվանական հիմքերի մեջ պետք է առանձնացնել երկու խումբ, որոնք ըստ բաղադրության մեջ իրենց դիրքի ունեն նաև գործառույթային տարբերություններ. I. տեղանունակերտ հիմքեր, որոնք հիմնականում բարդ անունների վերջնադիրքային բաղադրիչներն են, II. տեղանունակազմ հիմքեր, որոնք հիմնականում պարզ անուններ են, ածանցավորների հիմքեր և բարդ անունների սկզբնադիրքային բաղադրիչներ:

I. Տեղանունակերտ հիմքեր են դառնում.

1. Ֆիզիկաաշխարհագրական առարկաների անունները՝ դաշտ, հովիտ, տափ, գետ, ծով, լիժ, ալբյուր, լեռ, սար, քար, ձոր և այլն.
2. Բնակավայր կամ շինություն նշանակող անունները՝ քաղաք, ուստան, զավառ, գյուղ, շեն, կերտ, ավան և այլն.
3. մարմնի մասերի անունները՝ աչք/ակն, ալ, ականք, քիթ, բերան, գլուխ, ոտք, փոր և այլն:

II. Տեղանունակազմ հիմքեր են դառնում ինչպես իմաստային այս երեք խմբերի, այնպես էլ իմաստային այլ դաշտերի անդամներ, որոնք ըստ խոսքիմասային պատկանելության բաժանվում են գոյականների, ածականների, թվականների:

Ա. Գոյական տեղանունակազմ հիմքերի մեջ մեծ խումբ են կազմում.

1. Ա ն ծ ն ա ն ու ն ն եր ը, որոնք կարող են լինել ա/ ազգանուններ, բ/ լրիվ կամ կրճատ անձնանուններ ու կեղծանուններ, գ/ դիցաբանական ու էպիկական անուններ. վերջին ենթախմբի հիմքերն առավելապես մասնակցում են ֆիզիկաաշխարհագրական առարկաների, առաջին երկու ենթախմբինը՝ բնակավայրի անունների կազմությանը:
2. Ծ ա ո ա տ ե ս ա կ ն եր ի, բույսերի, պտուղների անունները, որոնք հիմնականում մասնակցում են բնակավայրերի անունների կազմությանը. ակտիվ գործառություն ունեն -ուլտ, -ավետ ածանցների և -շատ, -շեն, -ավան ածանցավորների բաղադրությամբ:
3. Ա ե ն դ ա ն ի ն եր ի, թռչունների, միջատների անունները, որոնք առավելապես կապվում են դիցաբանական հավատալիքների ու բանահյուսական մտածողության հետ և հիմնականում մասնակցում են լեռնանունների կազմությանը:

4. Գ ո ռ ծ ի ք ն ե ռ ի /հիմնականում հողագործություն և անասնապահություն հետ առնչվող տարբեր առարկաների ու գործիքների, ինչպես նաև առօրյա գործածություն իրերի/ անունները, որոնք մասնակցում են նախ՝ լեռների, ապա նաև՝ զետերի ու գյուղերի անունների կազմությանը:

5. Հ ա ն ք ա տ ե ս ա կ ն ե ռ ի , նյութերի անունները, որոնք մասնակցում են գյուղանունների, ինչպես նաև լեռնանունների կազմությանը -շեն, -կեղ, -հանք ծանցավերպների հետ:

6. Կ ռ ո ն ա պ ա շ տ ա մ ու ն ք ա յ ի ն տերմիններն ու բառերը, որոնք կարող են լինել ա/ նախադրիստոնեական և բ/ քրիստոնեական շրջանի հավատալիքներ նշանակող կամ դրանց հետ առնչվող բառեր. սրանց մշտող մեծամասնությունը մասնակցում է ֆիզիկաաշխարհազրույցի առարկաների անունների կազմությանը:

7. Ց ե դ ա ն ու ն ն ե ռ ը , որոնցով տեղանվանակազմությունը ներկայումս գրեթե վերացած է: Եղել է արդյունավետ միջոց երկրանունների և բնակավայրերի անունների կազմության մեջ, -ք և -ստան ծանցների լծորդությամբ:

8. Ածական տեղանունակազմ հիմքերի մեջ մեծ խումբ են կազմում գ ու ն ա ն դ ու ն ն ե ռ ը . գործածվում են բոլոր վեց հիմնական գունանունները՝ տարբեր արդյունավետությամբ, տարաբնույթ առարկաների անունների կազմում: Այս խմբի մեջ մտնում են նաև շեն, ոսկի թուփ, ծիրանի, կլաք միջանկյալ գունանունները: Պետք է նշել նաև, որ տեսք, դիրք, որակ ցույց տվող ածականները փոքր խմբերով գործում են իբրև տեղանունակներ հիմքեր:

9. Թվական տեղանունակազմ հիմքերից հայկական տեղանուններում գործածված են. երեք/եռ-, չորս/քառ-, յոթ/յոթն-, քառասուն, քառ և ցուլ բառերը, որոնցից վերջին երկուսը առավելապես գյուղանունների, մնացածը՝ լեռնանունների, ապա նաև ջրանունների կազմում են գործում:

Ջ.Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/ԵՐԵՎԱՆ/

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՆԱՍՏԵՐԵՈՒԹՅԱՆ ԿՇՌՈՒԹՅՈՒ ՓՈՐՁԱՄԱՍՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Խոսքի հիմնական առողանական բնութագրերից մեկն է կշռույթը, որը հատուկ է բանաստեղծությանը, թե արձակին:

Կշռույթը բնորոշվում է որոշակի խոսքային հատույթների մոտա-

վոր հավասարատևությամբ ու պարբերական կրկնությամբ: Աշուռ յթալին միավորները ձևավորվում են առոգանական հատկանիշների/մեղեդի, շեշտ և դադարներ/ որոշակի կրկնությամբ և հակադրությամբ:

Ձայնաքանական մակարդակում դրանց համապատասխանում են հիմնական շարույթի համախականությունը, ուժգնությունն ու տևողությունը, որոնք մեծ դեր են խաղում հնչյունական շղթայում կշռույթալին միավորների միաձուլմանը և տրոհմանը: Այդ հատկանիշների և բանաստեղծության ուրիշ մի ձևավորման մեջ դրանց դերի փորձառական ուսումնասիրությունը մեր խնդիրներից մեկն է:

Լեզուներն ըստ կշռույթի դասակարգվում են վանկային, շեշտային և ամանակային տիպերի: Վանկային կշռույթը հիմնված է վանկերի /անկախ նրանց շեշտվածությունից/ մոտավոր հավասարության վրա, շեշտայինը՝ շեշտված վանկով միավորված անշեշտ վանկերի խմբի/կշռույթալին խմբի/ պարբերական կրկնության վրա, իսկ ամանակային կշռույթը կարժ և երկար վանկերի հաջորդականությունն է: Տաղաչափության մեջ առավել հստակորեն արտացոլվում են լեզուների կշռույթալին այս կառուցվածքները:

Հայերենի տաղաչափության կշռույթալին միավորների, ինչպես և կշռույթի մասին միասնական կարծիք չկա:

Ըստ Մանուկ Աբեղյանի<sup>1</sup>, հայերենի բանաստեղծության կշռույթը շեշտային է, հիմնված շեշտերի կայուն դիրքի և շեշտված ու անշեշտ վանկերի խմբերի /ոտքերի/ կրկնության վրա:

Է.Ջրբաշյանը<sup>2</sup> հերքում է այս տեսակետը՝ հայերենի տաղաչափությունը համարելով վանկային, ուր կշռույթը հիմնված է տողերում վանկերի թվի և հատանների կայուն դիրքի վրա:

Երրորդ կարծիքի համաձայն, որը հայտնել է Ռ.Պապայանը<sup>3</sup>, հայերենի բանաստեղծության կշռույթը լինելով վանկային, իր մեջ գուրգալցում է նաև շեշտային տաղաչափության հատկանիշներ: Վանկային հատկանիշները գերիշխում են տողասկզբում, իսկ շեշտայինը՝ տողավերջում:

Հայերենի տաղաչափության համակարգի բնույթի որոշմանը մեծապես կապաստի կշռույթի փորձառական եղանակով ուսումնասիրությունը:

1. Մ.Աբեղյան, Երկեր, հ. Ե, Երևան, 1971:

2. Է.Ջրբաշյան, Գրականության տեսություն, Երևան, 1972թ.:

3. Ռ.Պապայան, Վանկային և շեշտային սկզբունքների հարաբերությունը հայերենի ոտանավորում, Բանբեր Երևանի համալսարանի, 1973թ., նո. 1:



Անհրաժեշտ է կատարել նաև լսողական վերլուծություններ, քանի որ կշռույթը նախ և առաջ ընկալվում է լսողությունամբ:

Լսողական վերլուծությամբ կարելի է պարզել.

ա/ արտասանության արագությունը,

բ/ շեշտերի և դադարների տեղաբաշխումը բանաստեղծության մեջ,

գ/ մեղեդու ելևէջները,

դ/ ինչպիսի հատույթներ են ընկալվում որպես հավասարառև:

Էլեկտրաձայնաքանական վերլուծությամբ կարելի է որոշել.

ա/ հիմնական լարույթի համախանուկության և ուժգնության փոփոխման միջարկներն ու ուղղությունը կշռույթային միավորներում,

բ/ խոսքային հատույթների /վանկերի կշռույթային խմբերի, կիսատո-դերի և տների/ տևողությունը,

գ/ դադարների տևողությունը:

Այնուհետև նպատակահարմար է, համադրելով լսողական և էլեկտրա-ձայնաքանական տվյալները միմյանց հետ, ստանալ բանաստեղծության որոշ կշռույթային պատկերը:

Ս.Ե. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/Լենինական/

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐԻ ԼԵՁՎԱԿԱՆ

ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շնորհավորանքների առիթները խիստ բազմազան են՝ օրացուցային ու ազգային տոներ, ծեսեր, ընտանեկան և անհատական հանդիսավոր արարողություններ ու հավաքույթներ և այլն: Նշված գրեթե բոլոր առիթների համար մշակված են չափածո կամ արձակ շնորհավորանքների պատրաստի բացիկներ: Հեղինակի կողմից հավաքվել, դասակարգվել և մշակվել են տարբեր բնույթի հազար շնորհավորական բացիկներ, որոնց ուսումնասիրությունը բացահայտում է մի շարք լեզվական առանձնահատկություններ: Պետք է ասել, որ շնորհավորանքների լեզուն որոշակիորեն տարբերվում է թե գրական, թե խոսակցական անգլերենից և թե անգլերենի այլ ոճերից /գիտական, գործառական, մամուլի և այլն/, որը մեզ թույլ է տալիս խոսել շնորհավորանքների լեզվի՝ որպես անգլերենի մի տարբերակի մասին, որն իր առանձնահատկություններով և արտահայտած բովանդակությամբ խիստ մոտենում է ժողովրդական բանահյուսությանը: Շնորհավորանքներն ըստ էության հիմնականում արտահայտում են բարեմաղթանքներ: Նրանց բովանդակության դիտվածքում ևս կան առանձնահատկություններ, որոնք առանձին ընտելության նյութ

թյան նյութ են: Արտահայտության դիտվածքում ակնառու է շնորհավորանքների լեզվի և ոմի պարզությունն ու հստակությունը: Անգլիական շնորհավորանքների լեզվի առանձնահատկություններից կարելի է նշել նաև հետևյալները.

1. Շնորհավորանքն անփիջականորեն ուղղվում է տվյալ անձին՝ նորածնին, մորը, հորը, ըրոշը, հարսին, օրինակ՝ "Dear Mother-Father", "Very Special Son-Daughter", "Wonderful Daughter-in-law", "Sweet Godchild", "Special Sister-Brother", "Lovely Cousin":

2. Հիմնականում կիրառվում են երկրորդ դեմքի բայերը, օրինակ՝ "You're thought of more with each and every year":

3. Ավելի հաճախ ֆանդիպում է անորոշ ըղծականը, օրինակ՝ "May this be the nicest year":

4. Բնականաբար մեծ դեր ունի "may" եղանակավորող բայը, օրինակ՝ "May love and happiness decorate your holidays", "May your Easter be Merry and Bright":

5. Մաղթանքները որպես կանոն ֆանգավորված են, օրինակ՝  
May love and joy come to you

At a very merry Christmas too:

6. Շնորհավորանքները ծավալով մեծ չեն, պարունակում են մեկ նախադասություն՝ մեկ տողով /"Congratulations on the Baby's arrival" /, իսկ առավելագույնը՝ մինչև 8 տող, 2-3 նախադասությամբ:

7. Հաճախ լրացումները անսովոր կերպով կուտակվում են՝ մաղթանքի ուժգնությունը շեշտելու համար, "Many happy returns of the day and may there be many, many more". "I could say it in Spanish, in German, and French, in Russian and in Chinese too..."

8. Շնորհավորանքների լեզուն աչքի է ընկնում փոխաբերությունների առատությամբ, օրինակ՝ "Sunny Smile", "A basket full of wishes":

9. Շնորհավորանքներում ֆանդիպում է ասացվածքների ու թևավոր խոսքերի քառացի փոխառում, օրինակ՝ "Behind a helping hand is a loving heart". "The gentle mind... by gentle deeds is known":

Ն.Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/Երևան/

ՇԱՀԱՊՅԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈՃԱԽԱՍՏԱՑԻՆ ԲՆՈՒՅԹԸ ՆԱԴՍԵ  
ՀՈՎԱՅԱՆՆԻ ՏԱՂԵՐԻ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՄԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նաղաշ Հովնաթանի տաղերի բարդ համադասական նախադասություններ /բն/ կառուցվածքային փոխաբերություններում կարելի է ա-

հանձնացնել շաղկապների գործածություն միավորական, հակադրական, տրոհական իմաստային ոլորտներ: Միաժամանակ միևնույն շաղկապը տա-  
ղերում դրսևորում է իմաստային այլևայլ առնչություններ՝ նրբերան-  
գային զանազան հարաբերություններով:

1. Տաղերի բն-նություն միավորական հարաբերությամբ են բնութա-  
գրվում հետևյալ շաղկապները, որոնք համապատասխանաբար արտահայ-  
տում են. ա/ միավորում-ներառում, այլև հավելում՝ և, ու, ևս,  
էլ, նոյնպես և, այլ և, ինչպես էլ այնպես, բ/ թվարկումով միա-  
վորում՝ թէ, կամ, համ, ոչ, գ/ ժամանակային  
հաջորդում կամ փոխհաջորդում՝ նախ և այս, այս և թէ:

2. Հակադրական հարաբերությամբ երկու, երեք գործածություն  
ունեն քայքայ, իսկ շաղկապները: Փոքր-ինչ ավելի են միևնույն հարա-  
բերությամբ ժողովրդախոսակցականից եկող էլ, այս շաղկապների կի-  
րառությունները: Մի շարք բն-նություն և շաղկապը արտահայտում է  
հակադրական իմաստ. այն որոշակիորեն կարելի է փոխարինել քայքայ,  
իսկ շաղկապով: Զուգահրեհ հակադրական հարաբերություն է ներառ-  
ում այլ շաղկապը: Պայմանա-ներհակառակ հարաբերություն է դրսևորում  
ժողովրդախոսակցականին հարազատ թէ չէ-ն:

3. Տրոհական հարաբերությամբ տաղերում առանձնանում են կամ,  
կամ և կամ, կամ թէ չէ շաղկապները, սակավ կիրառությամբ՝ թէ-ն:

Առանձնացվող այս խմբավորումներով որոշակի է ինչպես բն-նե-  
րի նրբերանգային հարստությունը տաղերում, այնպես էլ շաղկապ-  
ների նկատելի ներհուսքը ժողովրդախոսակցական լեզվից:

Ի. Գ. ԿԱԶՈՒՄԵԱՆ /Երևան/

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԲԱԻԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ  
ՏԱՌԱՐԱՐԶՈՒՄԸ ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ

Հայոց ազգանունների ուղևորներն առաջարկումը հետաքրքիր է  
երկու տարբեր, սակայն ավելի դեպքում փոխկապված խնդիրների տեսա-  
կետից՝ հայերենի բարբառային իրողությունների ուղևորներն առաջարկ-  
ման և լեզվական շփումների տեսակետից:

Խաղաղ առարկա բարբառագիտական նյութը գրանցված է ՎՍՍՀ, Ադր.  
ՍՍՀ և ՌՍՖՍՀ այն շրջաններում ու քաղաքներում, ուր պատմական  
հանգամանքների բերումով կա օտարալեզու շրջապատում ապրող հոծ  
հայկական զանգված:



Տառադարձական զգալի տարբերություններ կան նույնիսկ այնքան տարածված ազգանուններում, ինչպիսիք են Կիրակոսյան-ը և Մարտիրոսյան-ը :

| Երևան      | Բաքու      | Թբիլիսի    | Սուխում    | Ռոստով     |
|------------|------------|------------|------------|------------|
| Киракосян  | Кирокосян  | Киракозов  | Гирагосов  | Герагосов  |
| Мартиросян | Мартиросов | Мартирузов | Мардиросов | Майдеросов |

Հայոց ազգանունների բարբառային ձևերի ողուսերեն տառադարձությունների համեմատությունը Հայաստանում ընդունված քնորինակ ձևերի հետ հնարավորություն է տալիս առանձնացնելու Հայաստանում չհանդիպող ձևերի իրար չհամընկնող 3 խումբ:

1. Ռուսական ազգանվանակերտ -ով ածանցով վերջացող հայոց ազգանուններ. Авакимов, Аванесов:

2. Եզակի կրողներ ունեցող , տարաշխարհիկ, , հայոց ազգանուններ. Альбертян, Арудов, Арутинов, Гришикян, Гокорян, Давудов,

3. Բարբառային արտասանությունն արտացոլող հայոց ազգանունների հնչյունական տարբերակներ: Մեր ունեցած նյութում նկատվում են բաղաձայնական հետևյալ տեղաշարժերը.

ա. ը-ի փոխարեն լ-ի արտասանություն.

Хазарян < Ղազարյան > Казарян

բ. հ-ի փոխարեն յ-ի արտասանություն

Сайратян < Սահրադյան > Саградян

գ. Միջձայնավորային դիրքում բաղաձայնի կրկնակ արտասանություն.

Аллахвердян < Ալահվերդյան > Алахвердян

դ. Բառակզրում բաղաձայնից առաջ հ-ի հավելում /ռուսական տառադարձությամբ՝  
Кодабамян < Օդաբաձյան > Одабамян

ե. Բառակզրում հ-ի փոխարեն լ-ի արտասանություն /բառակզրի հ-ն ողուսերենում սովորաբար չի տառադարձվում/.

Ханесян < Հանեսյան > Анесян

զ. Բարբառներում բացակայող ֆ-ի փոխարեն փ-ի արտասանություն

Сапаров < Սաֆարյան > Сафарян

է. ը-ի փոխարեն յ-ի արտասանություն.

Майдеросов < Մարաիրայան > Мартиросян

Հայոց անունների և ազգանունների բարբառային ձևերը ողուսերենում ավելի ազատ են օգտագործվում, քան գրական հայերենում:

„ԱՅՈՒՆՈՂ“, ՀԱՐՑԱՆ ՀԱՉԵՐԱՆԳԸ ԳՐԱԿԱՆ  
ԱՐՑՄՏԱՀԱՅԵՐԾՆՈՒՄ

Արևմտահայերենի հնչերանգի ուսումնասիրությունը կարևոր է նրա լեզվական համակարգի մասին ամբողջական գաղափար կազմելու համար: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում այդ-ու-հ հարցման հնչերանգի փորձառական ուսումնասիրության արդյունքները, որոնք էական են արևմտահայերենի արտասանության մասին ընդհանրական պատկերացում ունենալու համար:

Ուսումնասիրել ենք հիմնական տոնի համախականության շարժման ուղղությունը, միջուկի, նախամիջուկի ու եամիջուկի կառուցվածքը և մի շարք ծայնաքանական հատկություններ՝ ըստ ծայնի համախականության, ուժգնության, ու եկել որոշակի եզրակացությունների:

Հիմնական տոնի շարժման ուղղությունը մեծ մասամբ բարձրացող-իջնող է: Այն կարող է լինել նաև հավասար-բարձրացող-իջնող և հավասար-բարձրացող-իջնող-հավասար-իջնող, սակայն վերջին երկու տարբերակները շատ հազվադեպ են հանդիպում: Արևմտահայերենում տոնի շարժումը միջուկից հետո կտրուկ չի նվազում, ինչպես կատարվում է արևելահայերենում, այլ միջուկին հաջորդող վանկերում աստիճանաբար ցիչ-ցիչ նվազում է և կտրուկ վայրէջք կատարում վերջին վանկում:

Միջուկում տոնը միշտ կտրուկ ամուս է՝ միջինը՝ 9-11 կիսատոնի սահմաններում:

Հնչադասության համախականության ծայնածավալը բարձր ծայնաշար ունեցող հաղորդավորների դեպքում փոփոխվում է միջինը 11-13 կիսատոն սահմաններում, իսկ ցածր ծայնաշար ունեցողների դեպքում՝ 9-10 կիսատոն:

Հնչադասության սկզբի համախականության մակարդակը բարձր ծայնաշար ունեցող հաղորդավորների դեպքում փոփոխվում է միջինը 130-140 հց սահմաններում, իսկ ցածր ծայնաշար ունեցողների դեպքում՝ 80-100 հց:

Եամիջուկային վանկի համախականության ծայնածավալը փոփոխվում է միջինը -2 - 0 կիսատոն սահմաններում:

Հնչադասության վերջին վանկի համախականության ծայնածավալը

Նույնպես նվազող է և փոփոխվում է միջինը -9 - -7 կիսաառն սահմաններում:

Հնչադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է միջինը 32-35 դբ սահմաններում:

Հնչադասության ուժգնության ժայնածավալը փոփոխվում է միջինը 5-8 դբ սահմաններում:

Հնչադասության վերջին վանկի առավելագույն ուժգնությունը փոփոխվում է միջինը 29-32 դբ սահմաններում:

Արևմտադայերենի այո-ոչ հարցման հնչերանգը արևելադայերենի հետ համեմատած լարված է, որն ունի հոգեբանական նախադիմքեր և պայմանավորված է արևմտադայության հասարակական, քաղաքական և տնտեսական վիճակով: Արևմտադայության շատ ավելի անհանգիստ կյանքը արևմտադայով է նրանց հոգեկան շշխարհում, որն էլ իր հերթին դրսևորվել է նրանց հնչերանգի մեջ, որովհետև մարդու հոգեկան շշխարհում կատարվող ամեն մի տեղաշարժ անմիջականորեն արտացոլվում է նրա ժայնի մեջ:

Վ.Վ.ՄԱԴՈՑԱՆ /Լենինական/

ՀԱՂՈՐԴԱԾԱՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՑՔԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԻ ԺԵՐԱԿԱՆԱԿԱՆ  
ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՔԱՆ

Լեզվի կառուցվածքի փոփոխությունները և դրանք առաջացնող պատճառները մշտապես մնում են իբրև լեզվաբանական ուսումնասիրության առարկա, քանի որ դրանք թույլ են տալիս ոչ միայն վերականգնելու լեզվի զարգացման նախորդ փուլերը, այլև նախ՝ բացատրելու նրա ներկա վիճակի փաստերը և ապա՝ ըմբռնելու այն խոր վերափոխող միտումները, որ առաջման ուղեկցում են լեզվին նրա զարգացման բոլոր փուլերում:

Գաղմական տվյալների անբավարար քանակը, հետևաբար, և վերափոխող գործընթացների հիմնական դրդապատճառները բացատրող հիմնական մտակառույցի բացակայությունը բարդացնում է խնդիրը, իսկ դա առաջ է բերում լուծման մեթոդների և սկզբունքների բազմազանություն:

Լեզվի հիմնական գործառույթի և քերականական, մասնավորապես՝ ձևաբանական փոփոխությունների միջև եղած կապի որոնումն ըստ էության, դեռ քիչ է ուսումնասիրված, սակայն բավական հեռանկարային է: Ինչպես ցույց է տալիս ուսենբենի գոյականական բառափոխական



համակարգի զարգացման ուսուցման արդյունքում, կառուցվածքային տեսակետից շատ կարևոր վերափոխումները /շնչավորության կարգի, հոգնակիի հարաջուրի թեք ձևերի զարգացումը/ տեղի են ունենում առաջին հերթին հոլովային նույնանունության վերացման չափանիշով, քանի որ թեքական նույնանուն ցուցանիշի փոխարեն զարգանում է ոչ նույնանուն նորը, ընդ որում՝ առաջին հերթին հատկապես այնտեղ, ուր կա հոլովածների փաստացի նույնանունություն: Սկզբնապես ընթանալով այն անունների շրջանում, որոնց հին վերջավորությունը հանգեցնում է հոլովների վերջավորությունների նույնությանը, այդ փոփոխությունները հետագայում ,,իններջիայով,, տարածվում են նաև սրանց հետ որոշակի բառային կամ ձևաբանական հատկանիշների ընդհանրությամբ կապված գոյականների վրա:

Նշված հանգամանքները վկայում են այն մասին, որ հաղորդակցական անհրաժեշտությունը, որն այստեղ արտահայտվում է որպես իր շարահյուսական իմաստը հոլովային ցուցանիշներով միանշանակ արտահայտելու ձգտում, լեզվի տեսափոխական զարգացման բավական գործունե խթան է, որ ձևաբանական և շարահյուսական տարբեր պայմաններում իր արտահայտություն յուրահատուկ ձևերն է ստանում:

Ն.Ա.ՄԱՆԱՍՅԱՆ /Երևան/

ԲԱՌԱՊԱՇՏՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԺԱՆԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՆԻՇՆԵՐԸ ԼԵԶՎԻ  
ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏԱԳՄԱՆ ՄԵԶ

Գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում անհրաժեշտություն է առաջանում արդյունավետ դարձնել մարդկային գործունեության համարյա բոլոր կողմերը: Դասավանդման ընթացքը բացառություն չի կազմում այս միտումի առումով:

Դասավանդման արդյունավետացման կողմերից մեկն է բառաքերական նախնական նվազագույնի ընտրությունը: Մասնագիտական գրականությունը հասկանալու համար միշտ չէ անհրաժեշտ տվյալ օտար լեզվի ամբողջական իմացությունը: Բավական է իմանալ բառաքերական նախնական նվազագույնը: Այդ նվազագույնի ընտրությունը սերտ կապված է լեզվի ուսուցման հաշվառվածություն հետ:

Բանասերը և լեզվի դասավանդողը /մանավանդ ոչ մայրենի լեզվի/ համախ հանդիպում են խնդիրների, որոնք լուծում են պահանջում քանակական չափումների օգնությամբ: Ինչպիսի՞ն է բառերի թեկուզ մոտավոր քանակը լեզվում: Ինչպիսի՞ն է այն նվազագույնի ծավալը,

որն անհրաժեշտ է լեզվի դասավանդման այս կամ այն փուլում: Ինչ-  
պե՞ս կարելի է վեր հանել ամենաշատ օգտագործվող բառերը, բառակա-  
պակցությունները, քերականական կաղապարները և երևույթները: Ինչ-  
պե՞ս և ի՞նչ ծավալով կատարել հաշվարկները՝ հուսալի արդյունքներ  
ստանալու համար:

Այս բոլոր հարցերին պատասխանում է քանակական լեզվաբանություն-  
նը, որն իր զինանոցում ունի այդպիսի նվազագույն քանակները որո-  
շելու հնարքներ և մեթոդներ:

Այս խնդրի լուծման համար որոշիչ դեր կարող են ունենալ լեզ-  
վաբանական բաշխումները: Լեզվաբանական բաշխումը լեզվաբանական բարդ  
համակարգային առարկային դասավորման արտահայտությունն է: Դիտելով  
բաշխումները, համեմատելով դրանք միմյանց հետ, հայտնաբերելով  
նրանց ընդհանուր և միանման գծերը, պատկերացում ենք ստանում լեզ-  
վաբանական առարկայի, այսինքն՝ լեզվի գործառական ոմի, ենթալեզվի  
և այլնի մասին:

Վերլուծության տարբեր աստիճաններում կարելի է իրազեկում ստա-  
նալ լեզվաբանական առարկայի տարրերի կամ տարբեր առարկաների միջև  
իրական հարաբերակցությունները մասին:

Ա.Խ.ՄԱՆՈՒԿՅԱՆ /Երևան/

ՀԱՄԱՆՈՒՄՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՋԱՐԱՆԱԿԱՆ  
ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱՆԱՌԻՄ

Ներկայումս մեծ ուշադրության են արժանանում բնական լեզու-  
ների մեքենական ֆոնդերի և լեզվաբանական տվյալների բանկերի ստեղծ-  
ման հետ կապված հարցերը: Հայերենի լեզվաբանական բանկը ենթադրում  
է ձևաբանական գործակցի առկայություն, որը պարունակում է նաև  
երկրորդային ձևույթների բառարաններ: Վերջիններիս բառահոգվածը  
բաղկացած է գլխաբառից /ձևույթից/ և նրա բնութագրից: Ձևույթի  
բնութագիրը ընդգրկում է մանրամասն տվյալներ /բառակազմական, փո-  
խակերպման, համախափն, բաշխումային և այլն/ յուրաքանչյուր ձե-  
վույթի և նրա գույքորոշիչության վերաբերյալ:

Փամանակակից հայերենի ածանցների մի մասը օժտված է իմաստային  
հետևյալ առանձնահատկություններով՝ համանունությամբ, հոմանիշու-  
թյամբ, հակառակությամբ: Նկատի ունենալով այս, ածանցների բնութագրե-  
րի մեջ առանձնացվում են տիրույթներ, ուր զբաղվում են տվյալ ձե-  
վույթի նշված առանձնահատկությունները /վերջիններիս առկայության

դեպքում/:

Առաջարկվում է տարբերել երկու տիպի համանունություն.

1. ձևույթի մեկարդակի՝ կամ տարահիմք համանունություն, երբ տղվալ ձևույթը տարբեր հիմքերի հետ գուգորդվելիս կազմում է տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր, օրինակ՝ -առ վերջածանցը, որը մի խումբ հիմքերի հետ կազմում է գոյականներ /բաց-ատ/, մյուս դեպքում՝ ածականներ /պոչ-ատ/,

2. բառի մեկարդակի, կամ նույնահիմք համանունություն, երբ տղվալ ձևույթը որևէ հիմքի հետ գուգորդվելիս կազմում է տարբեր խոսքի մաստային արժեք ունեցող բառ, օրինակ՝ -երեն վերջածանցը, որը համանունություն է ստեղծում գոյականի, ածականի և մակբայի նկատմամբ /ոուսերեն/:

Հայերենի որոշ վերջածանցների դեպքում հնարավոր է նշված երկու տիպի համանունության առկայությունը:

Նկարագրված են վերջածանցների համանունության հետևյալ դեպքերը.

1. գոյական /ածական, օրինակ՝ -առ /պոչատ/բացատ/,
2. ածական/մակբայ, -ին /դժվարին/տակվին/,
3. գոյական/մակբայ, -ուստ /հագուստ/արտաքուստ/,
4. մակբայ/ածական/մակբայ, -իվ /առթիվ/լրիվ/  
/չակերտներով նշված է երկրորդ տիպի համանունությունը/,
5. գոյական/ածական/մակբայ/ածական -ուկ /հեղուկ/խղճուկ/կամացուկ/,
6. գոյական/ածական/մակբայ, -երեն/ոուսերեն/:

Ա.Խ.ՄԱՆՈՒԿՅԱՆ, Ա.Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ /Երևան/

ՌՈՒՍԵՐԵՆԻ ԳՈՅԱՆՆԻ ԹԵԶՈՒԹՅՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ

ԲԱՅԼԱԿԱՐԳ

Ռուսերենի գոյականի թեքությունները որոշում են միաժամանակ թվի և հոլովի քերականական հատկանիշները: Այդ հատկանիշները պայմանավորված են գոյականի սեռի և շնչավորության հատկանիշներով:

Թեքությունների մի մասը՝ Յ, -Н, -а, -я, -е, -б, -у, -о, -ѣ, միևնույն սեռի և շնչավորության/անշնչավորության հատկանիշներ ունեցող տարբեր հիմքերից սերված գոյականների դեպքում որոշում են թվի և հոլովի տարբեր հատկանիշներ, այսինքն նշված առումով բազմիմաստ են:

Այսպիսով անհրաժեշտություն է առաջանում հիմքին վերագրել այն



ախսի լրացուցիչ անհատական բնութագիր, որը կարող է նպաստել բազմիմաստ թեքույթների դեպքում թվի և հոլովի համար համապատասխան իրազեկում ընտրելուն:

Այն կադապրները, որոնցով որոշվում են թվի և հոլովի միևնույն հատկանիշները, գոյականների մեծ մասի համար կանոնավոր են: Մնացած ոչ կանոնավոր դեպքերին համապատասխանող հիմքերը՝ կախված որոշակի թեքույթների հետ ունեցած կապակցելիությունից, կստանան անհատական բնութագրեր:

Գոյականի թիվը և հոլովը որոշող քայլակարգը իրականացված է

PL - 1 ծրագրավորման լեզվի միջոցով OC-EC համակարգում: Ծրագիրը պարունակում է թեքույթների և ածանցների, ինչպես նաև նրանց քերականական բնութագրերի աղյուսակներ, ուր յուրաքանչյուր բազմիմաստ թեքույթի բնութագիրը կախված է լրացուցիչ բնութագրերից: Գոյականների հիմքերի բառարանը իրականացված է որպես ինդեքսային-հաջորդական քայլ: Խեքույթի և հիմքի բնութագրերից և հիմքի լրացուցիչ հատկանիշի առկայությունից կախված՝ համապատասխան աղյուսակից ընտրվում են վերջնական ավյալները թվի և հոլովի վերաբերյալ:

Ծրագիրը պարունակում է 370 օպերատոր և պահանջում է 90 կիլոբայտ օպերատիվ հիշողություն:

#### Ն.Գ.ՄԱՆՈՒԿՑԱՆ /Երևան/

ԱՄԿԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՐԱԳԱՑՎԱԾ  
ՄԵԹՈԴՆԵՐՈՎ ՆՐԱ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ՄԻԱՇՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անգլերեն բայի ժամանակաձևերը, բացի իրենց հիմնական նշանակությունից /ներկա, անցյալ, ապառնի/, արտահայտում են գործողության բնույթը ժամանակի մեջ /ժամանակի մեջ շարունակական կամ կատարյալ, սահմանափակ լինելը/: Իհարկե, այս կարգերը լեզվում ունեն իրենց ձևական արտահայտությունը: Դրա հետևանքով անգլերենի ժամանակաձևերի համակարգը ստանում է ձևերի մեծ բազմազանություն, որն անհրաժեշտ է ժամանակի մեջ գործողության որոշակի տեսակի նշանակման համար: Այս ամենը դժվարություններ է առաջացնում լեզվի ուսուցման ընթացքում: Սովորողները, ի վիճակի չլինելով լիովին պարզաբանել բայական ձևերի իմաստը, բայաձևերի մյուսդավորված համակարգը կանոնավորապես ընկալում են իբրև ժամանակաձևեր, որը և քերականության ուսումնասիրության դեպքում ստեղծում է հոգեբանա-

կան արգելքներ:

Մեր կարծիքով, ժամանակածանրը համակարգի ուսուցումը հաջողությամբ տանելու համար առավել նպաստավոր են նյութի մատուցման այնպիսի միջոցներ և այնպիսի հերթականություն, որոնք կվերացնեն դժվարությունները, և թե բայածանրը հետևողականորեն ներկայացվեն հեղադրությունների այնպիսի համակարգում, որտեղ դրսևորվեն բայի իրական ձևախմբաբան հատկանիշները:

Այս նպատակով մշակել ենք ժամանակածանրի համակարգի ուսուցման մի կաղապար և փորձարկել այն ԱՄՆ-ում: Անգլերեն լեզվի քերականական փուլում մշակված այս համակարգը զորոնականում իրեն արդարացրել է:

Նկարագրվող նյութի մատուցումը այս ձևով սովորական հնարներին տարբերվում է նրանով, որ այս դեպքում հենվում ենք բայածանրի իմաստի վրա, այսինքն՝ ուսուցումն ընթանում է նշանակությունից դեպի իմաստը:

Լ.Ե.ՄԱՐԿՈՍՅԱՆ /Երևան/

ՎԻՃԱԿԻ ԵՎ ԴՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐՈԳՑԱԼՆԵՐԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստորոգյալների առանձին խմբերի իմաստա-շարայուսական առանձնահատկությունների ուսումնասիրման նպատակը ստորոգյալների իմաստաբանական դասակարգումն է, իսկ հեռանկարում՝ նաև համակիրարկ տիպաբանական դասակարգման ստեղծումը: Վիճակի և դրությունից ստորոգյալների միասնացնող հատկանիշները հետևյալն են. ա/ ժամանակային դրսևորվածություն /որը դիտարկվում է որպես դասի հատկանիշ/, բ/ կայունություն /կամ անհարմունություն/, գ/ սուբյեկտի անակտիվություն/անզործակալություն տերմինը պայմանական է և համապատասխանում է ռուսերեն НЕГАТИВНОСТЬ բառին/:

Այդ հատկանիշները պատճառ են դարձել ստորոգյալական այս խմբերի խառնման համար: Նրանց մեջ եղած իմաստա-շարայուսական տարբերությունները թույլ չեն տալիս դրությունից ստորոգյալները ներգրավել վիճակային կարգի մեջ: Տարբերակիչ հատկանիշներին են վերաբերում ա/ սուբյեկտի տիպը, որը այս ստորոգյալների հեռ համակցվելիս ավելի ակտիվ է, բ/ ի տարբերություն վիճակների, դրությունները չեն պարունակում պատկանելության նշանակություն, գ/ դրությունները համախառն իմաստագրվում են, վերանալով, մի բան, որը հատկանշական չէ վիճակների համար, քանի վերջիններիս բացառումը նախադասու-

Յյան կառուցվածքից զուգակցվում է կամ այդ կառուցվածքի խառու-  
մով, կամ նրա իմաստի փոփոխմամբ /համտ. նա կանչնած է այգում -  
- նա գտնվում է այգում - նա այգում է և նա ցվարմանում է այգում,  
որտեղ անհնար է վիճակի ստորոգյալի վերացումը առանց նախադասու-  
թյան իմաստը վնասելու, դ/ նրանց տարբերությունը շեշտվում է նաև  
նրանց համատեղ զուգակցմամբ /նա ուրախ կանչնած է/, որտեղ դուռ-  
թյան ստորոգյալը կատարում է միայն լրացուցիչ, օժանդակ դեր,  
ե/ վիճակները պարունակում են պատճառային իմաստ, որը դիտարկվում  
է որպես , , թաքնված, , հոլով /ըստ Ու.Բուքի և Չ.Ֆիլմորի մեկնու-  
թյան/, գ/ նրանք չեն օգտագործվում այնպիսի բառերի զուգորդու-  
թյամբ, ինչպիսիք են ուրախում թյամբ, համուրքով:

Ա.Ա.ՄԵՐՈՒԹՅԱՆ /Երևան/

ՄԻՋԼՆԿԱՅԱԼ ԵՎ ՆԵՐՊՈՒՅԱԼ ԼՐԱՆՆԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՄԲԵՆՈՒՄԸ  
ՀԱՅ ԶԵՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՃ

Միջանկյալ և ներդրյալ արտահայտությունները գործածվել են  
հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններում, սակայն սկզբնապես  
քերականական արժեքավորում չեն ստացել. հայ քերականագիտության  
ձևավորման շրջանում դրանք, ընդհանրաբար, չէին կարող արժանաչա-  
կորոշակի ուշադրություն, մանավանդ՝ նախադասության մասին ուսմուն-  
քի բացակայության պայմաններում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, իրոր, ոչ միայն  
սեռանձին բառեր, այլև ամբողջական նախադասություններ միջանկյալ  
կիրառությամբ գործածվել են դեռևս մեսրոպյան շրջանի զրաբարում,  
որպես խոսքի լիարժեք արտահայտման միջոցներ:

Միջանկյալ բառերի, բառակապակցությունների ու նախադասու-  
թյունների՝ որպես հիմնական խոսքի հետ քերականորեն չկապվող յու-  
րահատուկ արտահայտությունների, ըմբռնումն ու շարահյուսական ար-  
ժեքավորումը պայմանավորված է աշխարհաբար լեզվի զարգացմամբ: Աշխար-  
հաբարի շարահյուսական մակարդակում ավելի ամբողջական տեսք է ստա-  
նում նախադասության կառուցվածքային բնութագիրը. որպես շարահյուսա-  
կան ինքնուրույն միավորներ առանձնանում են նաև նախադասության  
հետ քերականորեն չկապվող արտահայտությունները, որոնց թվում և  
միջանկյալ բառերը, բառակապակցությունները, նախադասությունները:

Մեր կողմից հանդամադրեն ուսումնասիրվել է հարցի պատմու-  
թյունը՝ ըստ աշխարհաբարի քերականների աշխատությունների: Բնականա-



բար անդրադարձել ենք նաև ժամանակակից քերականագիտության մեջ արտահայտված կարծիքներին ու տեսակետներին:

Զնայած որ ժամանակակից քերականագիտության մեջ միջանկյալ ու ներդրյալ արտահայտություններն ընդունվում են որպես շարահյուսական առանձին կարգեր, հետազոտվել են առավել կամ պակաս շահով, և ունեն իրենց քերականական բնութագիրը, բայց և այնպես զգացվում է նրանց ամբողջական, հանգամանակից ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Ս.Ա.ՄԻՆԱՍՅԱՆ/Ստեփանակերտ/

ԱՅԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ ԳՈՅԱԿԱՆ ԲԱՄԱՆԱԴԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀՈՎՀ.ՇԻՐԱՋԻ ՊՈԵՄՆԵՐՈՒՄ

Լեզվաբանության և մասնավորապես ռուսերենի քերականագիտության մեջ Ֆ.Ֆորտունատովին է պատկանում բառակապակցությունների ուսմունքի հիմնադրումը, թեև այն ձևավորվել է մ.թ. 2-րդ դարի քերական Ապոլլոնիոս Դիսկոլոսի կողմից: Այդ բնագավառում զգալի աշխատանքներ են կատարել Ա.Դոբրաշչը, Ա.Պեչկովսկին, Ա.Շախմատովը, Յոն Բիսը, Ֆ.Սոսյուրը, Ա.Բեֆորմատսկին, Մ.Բլումֆիլդը, Լ.Շչերբան, Վ.Վինոգրադովը և ուրիշներ:

Հայ քերականագիտության մեջ կապակցությունների բնությունը սկիզբ առնելով լատինաբան հեղինակներից՝ Ս.Ջուղայեցուց, Կ.Գալանոսից, Հ.Հոլովից, Յ.Շրյոդերից, Բաղդասար Դսիլից, Մ.Սեբաստացուց և ուրիշներից, հետագայում աստիճանաբար մոտեցավ նախադասության ուսմունքին /Մ.Զամչյան և ուրիշներ/: Տրամաբանական քերականության տիրապետության շրջանում այն անտեսվեց, իսկ Մ.Աբեղյանի շնորհիվ այն մասամբ վերականգնվեց ու նոր սկզբնավորում ստացավ:

Բառակապակցության ուսմունքի բազմաթիվ տարրեր առանձին-առանձին ուսումնասիրված են արդի հայ քերականագիտության մեջ /Վ.Առաքելյան, Ա.Մարգարյան, Ս.Աբրահամյան և ուրիշներ/: Ներկա վիճակում այն համարյա ամբողջական ու լիարժեք ուսումնասիրության է ենթարկվել Վ.Ա.Քոսյանը՝ հենվելով ռուսագիտության նվաճումների վրա:

Հովհ.Շիրազի պոեմներում, ինչպես առհասարակ հայերենում, սծական լրացումներով գոյական բառակապակցություններն ավելի լայն գործածություն ունեն, ուր իմաստային հետքերը լրություններ ունեն փոխաբերությամբ գործածվողները՝ մակդիրները: Փոխաբերական իմաստ պա-

ըուհակում են նաև ամբողջական բառակապակցությունները, որոնք առնչվում են շրջառությունների ու դարձվածքների հետ:

Իրենց բառակազմական, իմաստաբանական և այլ հիմունքներով առանձնանում են հուզարտահայտչական երանգավորումներով հանդես եկող բառակապակցությունները /ածանցավոր, բարդ, նորակազմություններ, հոմանիշներ, գունային ընդհանրություններ ունեցողներ և այլն/: Ըստլիսի արտահայտություններից աչքի ընկնող յուրօրինակություններ ունեն հատկապես հատկանշություն ունեցող կառույցները, որոնք երբեմն հավասարվում են նրբաբանության /օբսիմորոնի/:

Հովհ. Ծիրազի պոեմներում գործածված ածական լրացումներով բառակապակցությունները գործառական տարբեր ոմներից են՝ գիտական, հրապարակախոսական, ժողովրդա-խոսակցական, գեղարվեստական, անհատական և այլն, որոնք ազգային ընույթ կրելով, արժանի են համընդհանուր ծանաչման:

ժ.Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ/Երևան/

„ԱՇԽԱՅԱՆԻ ՕՐԵՆՔԸ“, ՎԱՆԻ ԻՄՊՐԻՄՈՒՄ

Վանի բարբառն առաջին անգամ ուսումնասիրել և առանձին մենագրությունամբ ներկայացրել է Հ.Ամառյանը /„Ջննություն Վանի բարբառի“, Ե., 1953/: Հետազոտությունը կատարվել է բուն քաղաքի խոսվածքի նյութի հիման վրա: Այնինչ այդ բարբառն ընդգրկում է Վանի նահանգի մի շարք քնակավայրեր, որտեղ այն դրսևորում է որոշակի տարբերություններ: Սակայն հարցին վերաբերող այլ ուսումնասիրություններ հրապարակ չեն եկել:

Բարբառագիտական առկառի նյութերի հավաքմամբ զբաղվելով, մենք գրի գնք առել Վանի տարածքի շատ խոսվածքային միավորներ /Աբաղայի, Բիմարի, Աղբալի, Վերին Հայոց Զորի և Ներքին Հայոց Զորի շրջաններից, Ոստան գավառից և այլն/: Հավաքված նոր նյութը հնարավորություն է տալիս լրացնելու և ընդհանրացնելու Վանի բարբառի ամբողջական նկարագիրը:

Հայտնի է, որ արդի հայերենի բարբառներում զրաբարյան ժայնեղներին համապատասխանող բաղաձայնների մոտ ժայնավորների քմայնացումը Հ.Ամառյանն առաջին անգամ նկատել է Վանի բարբառում, որի մատուցած վաստեղից ելնելով էլ ձևակերպել է այն իբրև հնչյունական օրենք /„Ամառյանի օրենք“, /: Այն հիմնականում վերաբերում է պայթական ժայնեղների մոտ ա-ի քմայնացմանը: Սակայն, ինչպես





Ապահանի տարածքը, որն ունեցել է 7 շրջան՝ շուրջ 74 գյուղերով, իր լեզվական հատկանիշներով ընդհանրառևմ է Արարատյան բարձրագույն կենտրոնական խոսվածքների հետ: Այստեղ է գտնվում նաև Նոր Զուղա գաղթօջախը, որի բարձրագույն հատկանիշները ավելի հարազատ են արտահայտում այդ բարձրագույն վիճակը:

Ճևաբանական մակարդակում պարսկահայ տարածքի մի քանի խոսվածքներ արևմտահայ տարածքին հատուկ զեբբե են երևան հանում /վաղակատարի - եր վերջավորութուն/:

Տալ, ցալ, լալ բայերի համար որոշ վայրեր ներկա ժամանակի խոնարհման համակարգում ունեն ընդհանրութուններ Բայազետի, Մակուի և Իզդիրի շրջանի գյուղերի խոսվածքների հետ:

Հետաքրքրական է պարսկահայ տարածքի որոշ վայրերի /օր. Զարմահալի շրջան/ բարձրագույն հատկանիշներին՝ ճևաբանական մակարդակում եղած ընդհանրութունները Լոռու խոսվածքի հետ:

Ուշագրավ են տարածքի խոսվածքների վերջնամակային շեշտադրութունը և վերջինիս հետ կապված հնչյունափոխական օրինաչափութունները, որոնցով պարսկահայ տարածքը էապես հեռանում է արևելյան խմբակցութունից և ընդհանրառևմ արևմտյան խոսվածքների հետ:

Հնչյունափոխական մի քանի առանձնահատկութուններով տարածքն ընդհանրառևմ է արևմտյան խմբակցության որոշ բարձրանների հետ /իւ>ու, ոյ>ու, րս>շ, րն>յն ո>օ/:

Բառային մակարդակում ևս տարածքը, հիմնականում հարելով արևելյանին, ունի արևմտյան տարածքին հատուկ բառածեբբե /հավկիթ, տախլին>ստեպղին, քօվ, մեբմակ, խածել/:

Վ.Լ.ՄԱՅԱՆԱՆՑԱՆ /Երևան/

ՎԱՂ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԵՒԱԲԱՆԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նոր գրական հայերենը, որպես գրավոր հաղորդակցման միջոց, սկսում է գործառել 17-րդ դարի սկզբներից: Այդ. Գ.Ջահուկյանը 15-16-րդ դարերը համարում է ,,աշխարհաբարացման ենթաշրջան,, և հայոց երրորդ գրական լեզվի պատմությունն սկսում է 17-րդ դարից: Ըստ նրա շրջանաբաժանման՝ վաղ աշխարհաբարի ենթաշրջանը բռնում է ,,17-րդ դարի սկզբներից մինչև 19-րդ դարի կեսերը,, / ,,Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը,, , Ե., 1969, էջ 50/:

Նոր լեզուն, 17-րդ դարից սկսած, որոշակի գործառական ուղոր-

ներ է ծնոք բերում: Այդ դարից հայտնի են Հ.Հոլովի, Պ.Նյուրի վկայությունները, ըստ որոնց , ,քաղաքական, , /civilis քառյ լարգ-մանություն է/ հայերնը կիրառվում էր հասարակական վայրերում, դատավարական գործընթացում և այլն, այլ խոսքով՝ այն տարբեր բար-բառների ներկայացուցիչների համար հաղորդակցման հիմնական միջոցն էր:

Որպես գրական լեզու, նոր գրական հայերենը, ինչ խոսք, մեծապես գիշում էր գրաբարին, սակայն նույն 17-րդ դարից արդեն այն դառնում է տպագիր խոսք: Բանասիրության առաջմ երեք գիրք է հայտնի, տպագրված եվրոպական քաղաքներում, որոնց լեզուն ժամանակակից գրական հայերենի 17-րդ դարի տարբերակն է/ , ,Արհեստ համարողութեան, , , Մարտել, 1675, , ,Գարգարանութիւն... , , Վեն. 1687, , ,Գանձ չափոյ... , , Ամստերդամ, 1699/:

Միջբարբառային հասկանալի լեզվի կարիքը, բնականաբար, պայմանավորված էր առաջին հերթին հասարակական կյանքի պահանջով: Եվրոպական երկրների հետ շփումը, վաճառականության միջոցով եվրոպական կյանքի առաջավոր, նոր երևույթների, ձևավորվող բուրժուական հարաբերությունների ներթափանցումները Հայաստան անհամեմատ մեծ չափերի են հասնում 16-րդ դարի վերջերից սկսած: Վաճառականության ծաղկումն ու զարգացումը առաջադրում է համապատասխան՝ հաշվապահական-բնարանական բնույթի գիտելիքների խմացության պահանջ: Վաճառականների, արհեստավորների և հարակից շրջաններում միջբարբառային խոսակցական հայերենի ձևավորմանը գուզահեռ սկսում են ստեղծվել հաշվապահական, հաշվողական-գործարարական բնույթի գիտելիքներ սովոր դպրոցներ, ծնունդներ /տպագիր և ծնոագիր/ և այլն: Ինքնին հասկանալի է, որ կիսազրաբարազնտ առևտրականների շրջանում քաղաքացիություն է ստանում , ,քաղաքական, , հայերենը: 17-րդ դարում , ,քաղաքական, , հայերենը կամ նրա որևէ տարբերակը /գրաբարամետ կամ բարբառամետ/ հանդես է գալիս նաև որպես գեղադեմոստական գրականության լեզու /Ն.Հովնաթան, Ջուղայի գուսաններ/, հուշագրության լեզու / , ,Գառնություն ՊրաՕգոստոնոսի, , /, դավթար-հաշվետոմարների լեզու /Զ.Ազուլեցու , ,Օրա-գրությունը, , , Ե., 1938/, մասամբ նաև՝ պատմագրության լեզու /Գր.Դարանադու լեզուն/ և այլն:

18-րդ դարում , ,քաղաքացիական, , /Շրյոդեր/ հայերենի գործառական ուղորտներն ավելի են ընդլայնվում: Նախ՝ այն դառնում է լեզվաբանական-քերականագիտական բնություն առարկա /Շրյոդեր և Սե-

բաստացի/։ Ընդ որում, Շրյոդերի վկայմամբ, այն գործառական մենաշնորհ չուներ միայն կրոնական-եկեղեցական ընդգրկում։

Ամուսնացած է, քաղաքացիական, հայերենով հրատարակությունների թիվը։ Նոր լեզուն մուտք է գործում նոր ուղորտներ՝ դառնալով պատմագրության, կրոնա-բարոյախոսական, գեղարվեստական գրականության, պետական-պաշտոնական գրագրության լեզու։ Լեհահայ գաղութի համար տպագրվում են նաև այբբենարաններ, դասագրքեր։ Այս բնույթի է, անշուշտ, Կլ. Սարաֆյանի, Բանալի գիտությունը, /Մ., 1788/։ Տպագրվում են Սյուրմելյանի, Համառոտ թվաբանությունը, /Պոլիս, 1788/ ու Ինժինյանի, Աշխարհագրությունը, /Պոլիս, 1791/։ Նշելի է, որ արևմտահայ տարբերակի բառապաշարը ևս վավերացվում է Աբաստացու բառարանի երկրորդ հատորում /1769/։

19-րդ դարի առաջին կեսում աշխարհաբար հրատարակությունների թիվն անհամեմատ ամուսն է և սկսում մրցել զրաբարի հետ։ Նոր գրական լեզուն հաստատ քայլերով ձեռք է բերում հիմնական գրական լեզվի մենաշնորհը և, զրապայքարից, հետո դառնում միակը։ Այս բանին, ինչպես նաև նոր լեզվի մշակմանը, մաքրմանն ու միօրինակացմանը զգալիորեն նպաստում են հայ կրթողները /Ներսիսյան և Լազարյան դպրոցները/, մտավորականները /Արուստ, Նազարյան, Նալբանդյան, Պատկանյան և այլն/։ Պատմական մակատառի բերումով 19-րդ դարում վերջնականապես կազմավորվում են գրական հայերենի երկու՝ արևելյան և արևմտյան տարբերակները և հաջորդությամբ կատարում գրական հասկանալի լեզվի իրենց դերը՝ դառնալով մամուլի, գրականության, ուսուցման և այլնի լեզու։

Է. Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ /Երևան/

ՀԱՆՐԱՆԵՋՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Լեզվական և խոսքային նշանակարգերի ուսումնասիրության կազմակերպմամբ Խոմսկին պարզորոշ կերպով տարբերակում է լեզվի կանոնների համակարգի ուսումնասիրությունը այդ համակարգի խոսքաշարային կիրառությունը բնորոշող հասարակական վարքի կանոնների ուսումնասիրությունից։ Այդ բանը նա անում է իրավասության և իրականացման միջև սահմանազատում անցկացնելու միջոցով։ Իրավասությունը վերաբերում է կանոնների համակարգի մանկական բառերով շարտահայտված հասկացմանը, իրականացումն ըստ էության վերաբերում է տվյալ կանոնների համակարգի հասարակական կիրառմանը։



Կանոնների հատուկ լեզվաբանական համակարգերն ընդհանուր մշակութային համակարգի մի մասն են կազմում: Հարցն այն է միայն, թե կանոնների լեզվաբանական համակարգերը ինչ եղանակով են մշակութային համակարգի ձևեր ընդունում: Լեզուն այն կանոնների համակարգն է, որին պետք է ենթարկվեն խոսքային բոլոր նշանակարգերը:

Ուսումնասիրելով իրականացման ազդեցությունը իրավասության վրա, արտասահմանյան հանրալեզվաբանների մեծ մասը տարբերում են երիտասարդ սերնդի հասարակայնացման չորս իրադրաշար. ա/ կարգավորիչ, բ/ հրահանգչական, գ/ երևակայական կամ նորարարական, դ/ միջանձնական:

Հանրալեզվաբանական յուրահատուկ հասկացություն է հասարակական գործոնների դերը լեզվաբանական տևափոխության մեջ: Լեզվաբանական տևափոխության մեջ հասարակական գործոնների դերի մասին խոսելիս շատ կարևոր է չգերազնադասել հասարակական արժեքների և լեզվի կառուցվածքի կապի կամ մասնակի շփման աստիճանը:

Կ.Բ. ՇԱՀՆԱՋԱՐՅԱՆ /Երևան/

ՀԼԿ-ի ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵԲՍՏՈՒՄ ՆԱԽԴԻՐՆԵՐԻ  
ՁՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՅԵԾՍ-

ԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ

/հայերեն և ռուսերեն մաթեմատիկական տեքստերի նյութի  
հիման վրա/

Վերջին ժամանակներս լեզուների զուգադրական ուսումնասիրության հարցերը մեծ ուշադրություն են գրավում: Դա պայմանավորված է ինչպես լեզուների տիպաբանության նկատմամբ աճող հետաքրքրությունով, տեքստերի հաշվարկական լեզվաբանության և ընդհանուր-թյան հարցերով, այնպես էլ թարգմանության համարժեք տեսության ստեղծման պահանջներով:

Երկու կամ ավելի լեզուների լեզվաբանական միավորների զուգադրական վերլուծությունը կարող է հիմք հանդիսանալ լեզվաբանական քայլակարգի մեքենայական թարգմանության համար, որը կառուցվում է որպես երկակի համապատասխանությունների համակարգ:

Գիտատեխնիկական տեքստերի թարգմանության ժամանակ բավական կարևոր նշանակություն ունի ազատարկու խոսքի մասերի, մասնավորապես նախդիրների միջլեզվական համապատասխանությունների հաստատումը:

Սույն աշխատանքում այդ նպատակի համար օգտագործվել է Գ.Բ.

Հահուկյանի կողմից առաջարկված համընդհանուր լեզվաբանական կադուսարը/ՀԼԿ/: Այն հնարավորություն տվեց գիտատեխնիկական տեքստերի հիման վրա կատարել ինչպես բառային, այնպես էլ քերականական իմաստների միարժեք վերլուծություն: ՀԼԿ-ն վերջին հաշվով հանդիսանում է մի շարք հիմնական հասկացությունների հավաքակազմ, որոնց միջոցով, հենվելով որոշ կանոնների վրա, կարելի է բնութագրել լեզվաբանական առարկան:

ՀԼԿ-ի հիման վրա կատարվել է երկու լեզուներով մաթեմատիկական տեքստերում նախդիրների վերլուծության և գործելու օրինաչափությունները ի հայտ բերելու մի շարք փորձեր, որոնք սովորովի են հաջողություն բերել: Այդ հետազոտությունները կատարվել են մաթեմատիկական տեքստերի վիճակագրական վերամշակումների հիման վրա և ստացված արդյունքներից կազմվել են ռուսերենի ամենահաճախական նախդիրների, նախդրական կառույցների և հայերենի նախդրությունների և ետդրությունների ցուցակներ: Մեր կողմից վերամշակվել է ռուսերեն տեքստում նախդիրների գործածության 986 օրինակ /У.Рудин.Основы математического анализа. М., изд-во "Мир", 1976, с.9-112/. В-237, из- 129, для - 110, при - 118, с - 65, к - 54, на - 46, по - 45, в случае - 35, в силу - 16, за - 15, от - 15, между - 14, 0 - 14, через - 12, в связи с - 9, согласно - 7, в виде - 6, относительно - 5, за исключением - 5, вопреки - 4, в отношении - 4, кроме - 3, в смысле - 3, под - 3, в качестве - 2, вместо - 2, в зависимости - 2, в соответствии - 2, по мере - 2, по причине - 1, в отличие от - 1:

Նմանատիպ ցուցակ ստացված է նաև տեքստի հայերեն թարգմանության համար /Ու.Ռուդին, Մաթեմատիկական անալիզի հիմունքները, , Լույս, , հրատարակչություն, 1975, էջ 9-120/. համար - 128, դեպքում - 41, վրա - 35, հետ - 35, միջև - 12, նկատմամբ - 11, մասին - 9, համաձայն - 8, վերաբերյալ - 6, բացառությամբ - 5, հակառակ - 4, բացի - 3, փոխարեն - 2:

Վերլուծության հաջորդ փուլում նախատեսվում է ուսումնասիրվող լեզուների նախդիրները բերել իմաստաբանական համապատասխանությունների և ներկայացնել զրանք համապատասխան բանաձևերով:

Հետագա վիճակագրական վերլուծության պետք է ենթարկվի երկու լեզուների նախդիրների իմաստաբանական զույգերի կառուցվածքը: Նախատեսվում է ստուգել այն վարկածը, որ համախաղանության կայունությունը տիրապետում են ոչ թե իրենք լեզվաբանական միավորները, այլ

Նրանց իմաստու յթնները:

Այդ չափակով, նախդիրների և նախդրական կառույցների կառուց-վածքային վերլուծութայունից հետո նախատեսվում է անցկացնել այլևս անբաժանելի իմաստների վիճակագրական վերլուծություն:

Նման վերլուծության վիճակագրական արդյունքները հնարավորու-թյուն կընձեռեն նախապատվությունը տալ որոշակի տիպի նախդիրն կամ նախդրական իմաստին, նրանց քերականական արտահայտությունը այս կամ այն լեզվով:

Հետազոտության հաջորդ փուլում նախատեսվում է անգլերեն լեզ-վով գիտատեխնիկական տեքստում անցկացնել նախդիրների իմաստա-վիճա-կագրական վերլուծություն:

Վերլուծության արդյունքները կարելի է հաջողությամբ կիրա-ռել գիտատեխնիկական տեքստի ավտոմատ վերամշակման ժամանակ, այն է՝ ավտոմատ համառոտ շարադրանք, սեղմանշում և մեքենայական թարգմա-նություն կառարելիս:

Ս.Ա.ՉԱԼԱԲՅԱՆ /Երևան/

ՑՈՒՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՄՔԻՆՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՆԻՑ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լեզվաբանության մեջ ցուցականություն /դեյքսիս հունարեն δεικτικος,,ցույց տալ,,/ հասկացությունը առաջին անգամ մտքել է Կ.Բյուլերը: Ցուցական բառեր ասելով Բյուլերը ի նկատի ուներ այնպիսի լեզվական միավորներ, որոնք իրենց լրիվ իմաստավորումն ստանում են միայն լեզվի ,,խորհրդանշային դաշտում,, խոսքաշա-րում:

Բյուլերը լեզվի մեջ առանձնացնում էր ցուցական բառերի երեք հիմնական տեսակ. դեմքի ցուցականություն /ich-da /, տեղի ցուցա-կանություն /hier-dort / և ժամանակի ցուցականություն /jetzt-dann /:

Տարբեր տեսակայուններից ցուցականության ուսումնասիրություն-ները ցույց են տալիս, որ ցուցական բառերը ունեն լեզվական տար-բեր գործառույթներ:

Ցուցական բառի սահմանումը պետք է հիմնված լինի նրա իմաս-տաբանական առանձնահատկությունների վրա, քանի որ հենց այստեղ է ընկած ցուցական բառերի և լեզվական միուս նշանների միջև հիմ-նական տարբերությունը: Ցուցական բառերի իմաստաբանական բնորոշ առանձնահատկությունը նրանց հարաբերական նշանակությունն է:



Ցուցականությունը համընդհանուր կարգ է, քանի որ խոսքային իրադրության հիմնական կողմնորոշիչները /հաղորդակցման մասնակիցներ՝ խոսող և լսող, խոսքի արտաբերման ժամանակ և տեղ/ պարտադիր են և անհրաժեշտ բոլոր լեզուներում հաղորդակցումը իրականացնելու համար: Սակայն տարբեր լեզուներում, հատկապես, տարբեր խոսքի մասերը ուսուցմանսիրելիս, ցուցականության երևույթը տարբեր ձևով է դրսևորվում:

Ցուցականությունն արտահայտող լեզվական միավորները, այսինքն այն բառերը, որոնց իմաստի մեջ ցուցում է պարունակվում, ժամանակակից հայերեն լեզվում գրեթե ուսուցմանսիրված չեն:

Առարկած ուսուցմանսիրությունը ցույց է տալիս, որ ցուցականության կարգը իր բարահայտման յուրահատուկ առանձնահատկություններն ունի հայերեն և անգլերեն լեզուներում:

Ջ.Ս.ՉԱՐԱՅԱՆ/Լենինական/

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏԵԶՍՏԻ ԼՄԻՌԱՄԸՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Անավորվելով մեր դարի 60-ական թվականներին, տեքստի լեզվաբանությունն անցել է զարգացման որոշակի ծանալար և այսօր համարձակորեն կարելի է խոսել նրա՝ իբրև լեզվաբանական ինքնուրույն գիտակարգի մասին, համեմատել և միմյանց հակադրել տեքստի լեզվաբանության տեսության հիմնային հարցերին վերաբերող հիմնական միմյանց հակասող կարծիքներ:

Որոշակի ուշադրության է արժանի տեսական արմատների բացահայտման խնդիրը, որը շրջանցում են տեքստի լեզվաբանության տեսաբանները: Բեդեո տեքստի լեզվաբանության բուռն զարգացումը կապվում է 60-ական թվականների հետ, այսուհանդերձ նրա արմատները շատ սկսելի խորն են: Կարծում ենք, որ նրա զարգացման հետադարձ ընթացքը կարելի է ներկայացնել Խոմսկի-Սոսյուր-Հոմբոլդտ հիմնական օղակներով, իսկ սաղմերը կարելի է հայտնաբերել անտիկ փիլիսոփաների հոետորական արվեստի հիմունքներին վերաբերող աշխատություններում:

Տեքստի լեզվաբանության հիմնային հարցը տեքստի ըմբռնումն է: Փաստորեն տեքստի ըմբռնումը պայմանավորում է տեքստի լեզվաբանության տեսության ողջ կառուցվածքը: Ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ տեքստի վերաբերյալ չկա միանշանակ ըմբռնում: Բերեսսա է պատճառը, որ տեքստի լեզվաբանությանը վերաբերող գրեթե յու-

րաքանչյուր ուսումնասիրություն ունի որոշ չափով ծրագրային բնույթ: Տեքստը, որպես լեզվաբանության ուսումնասիրության առարկա, ինքնին չափազանց բարդ երևույթ է: Այդ բարդությունը պատճառաբանվում է տեքստի բազմաբնույթ էությունը: Տեքստը իր բնույթով աղերսվում է ինչպես արտալեզվական, այնպես էլ ներլեզվական հանգամանքների հետ: Մենք տեքստը դիտում ենք իբրև որոշակի իրադրականությամբ հաղորդակցությունն սպահովող ամբողջական մտքի և հոգեբանական մղման ավարտուն լեզվական արտահայտություն:

Ա.Վ.ՊԱՊԻԿՅԱՆ /Երևան/

ՔԱՏԵՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀՈՄԱՆԻՇՏՈՒՔՑՈՒՆԸ  
ԺԱՄԱՆԱԿԱԽՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ցուրաքանչյուր գիտակարգի տերմինաբանություն կազմավորվում է այդ գիտակարգի ծագման հետ միաժամանակ:

Հայերեն թատերական հոմանիշ տերմինները ժառանգման աղբյուրները տարբեր են և կրում են հիմնականում ազգային բնույթ:

Հայերեն թատերական տերմինների հոմանիշային շարքերի կազմության ուսումնասիրությունը պարզում է հետևյալը.

ա. Երկանդամ, եռանդամ հոմանիշային շարքեր են կազմում զրաբարյան թատերական տերմինները և հին փոխառությունները, ինչպես օրինակ՝ շուրջանասանիւիւր-ամֆիթատրոն, լեռկատակ-միմոս, եղեղեղգուլ-թյուն-նոխագեղգուլյուն-տրադեդիա և այլն:

բ. Թատերական տերմինների հոմանիշային շարքեր կազմվում են զրաբարյան ձևերով՝ ողբեղգուլյուն-նոխագեղգուլյուն, թատրադես-հանդիսադես, խալ-ալալ-կատակ և այլն:

գ. Երկանդամ, եռանդամ /երբեմն քառանդամ/ հոմանիշային շարքեր են կազմում արդի հայերենում գործածվող թատերական տերմինները, ինչպես օրինակ՝ բեմ-բեմաճառթիւ-թատերաբեմ, բեմափ-բեմագլ, դեզ-գանկ-խաղացանկ, դիմակախաղ-դիմակահանդես, բեմադրիչ-բեմադրող-դեռուսույց-դերասանապետ և այլն:

դ. Բազմաթիվ են սեփական և փոխառյալ թատերական տերմիններով կազմված հոմանիշային շարքերը, ինչպես օրինակ՝ համույթ-անամբլ, մասկարադ-դիմակահանդես, նախաբեմ-առաջաբեմ-ավաճեցես, խաղացանկ-դերագանկ-ոնեղեղուտը, մենախոսություն-մոնոլոգ, երկեռույթյուն-դիալոգ, բեմավիճակ-միգանսցեն, միջախաղ-միմ, դեկոր-բեմագործ, բեմադրիչ:

—ոճժիսոը և այլն:

Ե. Որոշակի թիվ են կազմում օտար լեզուներից փոխառյալ տերմինները, որոնք զործածվում են հայերենի թատերական տերմինների հետ՝ ենթարկվելով հայոց լեզվի օրինաչափություններին, ինչպես օրինակ՝ անսամբլային ներկայացում, անսամբլային թատրոն, դրամատիկական ստուդիա, թատերական ստուդիա, զաստրոլային ներկայացում և այլն:

Ա.Ե.ՊԵՏՐՈՍՅԱՆ/Երևան/

ՀԱՅ ԾԵՂԱՆՈՒՆԸ ՈՐՊԵՅ ՀԱՆՐԱՊԵՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԿԱՌՈՒԹՎԱԾԻ ՏԵՐՄԻՆ

Հասարակական տերմինը հաճախ կարող է վերածվել ցեղանվան: Բազմաթիվ ցեղանուններ նշանակում են , ,մարդ, , , ,իսկական մարդ, , , ,բարեկամ, , , ,տղամարդ, այր, , , հմտ. նաև հնդեվրոպական \*ax-ի-օ- , ,բարեկամ, տեր, պարոն, , , որի հետ կապում են իրան, իռլանդիա և այլ անվանումներ: Ավանդությունը հայ ցեղանունը կապում է Հայկ նահապետի անվան հետ: Հայկ է կոչվել նաև Օրիոն համաստեղությունը, որի անձնավորումը տարբեր ժողովուրդների առասպելներում հակադրվում է Բազումբ /հուն. Պլեյադներ/ համաստեղությանը: Բազումբ համաստեղությունը կոչվել է նաև Ալալունք կամ Ալալսունք, որը կարելի է համեմատել հուն. անվան հետ /հ.-ե. \*pleu- , ,լողալ, /: \*ala- ըստ երևույթին նշանակել է , ,տեր, պարոն, , , նույնն է նշանակում նաև Բելի անունը սեմական լեզուներում: Հաշվի առնելով սրանք, կարելի է Հայկ անունը կապել հ.-ե. \*pot-ի- , ,այր, տեր, , , արմատի հետ /ի միջի այլոց նույն արմատի հետ են համեմատել Շաիգեյը և Կիպերտը հայ ցեղանունը/: Առաջավոր Ասիայում հաճախ տեղ են անվանել մեռնող և հարություն առնող աստվածներին /Բալու, Ադոնիս/: Այդպես կարող է իմաստավորվել նաև հայկական համապատասխան աստծո՝ Արայի անունը/ \*ax- , ,բարեկամ, տեր, պարոն, , , հմտ. նաև տղամարդուն դիմելու արևելահայ աղա- ձևը/, ինչ որ հավանական է դարձնում Հայկի բերված ստուգաբանությունը /հայ-ի նվազականը հմտ. ռուս. боженька, ինչպես նաև հայ , ,հակա, , , հայկ , ,փոքր, /: Բարբառներում , ,մեր հայ, , են անվանում ընտանիքի զլխավորին /հմտ. հ.-ե. \*pot- նույն նշանակությամբ/: Ըստ մեր արտահայտած տեսակետի՝ հայ ցեղանունը կապվում է Արարառյան թագավորության սեպա-



գրերի Etin-hi/ni (resp. hat'i(i)o-) երկրի անվան հետ: Այդ երկիրը համապատասխանում է Հայաստանի կենտրոնական Այրարատ նահանգին: Այրարատը կարող է կապված լինել ալը, ,տղամարդ, , բառի հետ /հմտ. հեղեղատ, խորխորատ և. ալև/, որը Ս. Մանը և Ծ. Հարությունյանը համեմատում են վերոհիշյալ հ-ե. \*ar<sup>i</sup>-ի հետ: Ըստ ավանդության, Հայկը ընակվում էր Հարբում, բայց նրա բոլոր սերունդները ապրում և գործում էին Այրարատում, որը հնում օգտագործվել է նաև Հայաստան իմաստով: Այսպիսով Հայը և Այըաըա անունները կարող են հոմանիշներ լինել ցեղանվան ,այր, տեր, պարոն, , նշանակության դեպքում: Էթիոնիի և շրջակա երկրների որոշ անունների նախկինում բերված հնդեվրոպական մեկաբանություններին կարելի է ավելացնել որոշ ջրանունների ստուգաբանություններ: Arsanis Արածանի, հմտ. հ-ե. \*Harg'-, փայլել, , /ջրանունակերտ հիմք/ Ildasunia Հրազդան , հմտ. \*ait - ջրանունակերտ հիմք և հայ. առու /Հայաստանում կամ Առու անունով գետ/. Alia -Աղի, հմտ. \*sal - ,աղ, , /ջրանուններում/ և ալև:

Է.Խ. ՊԵՏՐՈՍՅԱՆ /Երևան/

#### ՀԱՅԱՍՏԱՆ ԱՄԱՍՊԵԼԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՌԻՐՋԸ

Հայ հին գրականությունից /Ձեռք Գլակ, 8-րդ դ./ հայտնի են մի շարք պատմա-առասպելական անուններ: Դրանք են՝ Գիսանե, Դեմետր, ըստ պատմագրի՝ հնդիկ իշխաններ, որոնք գալիս են հայոց Վաղարշակ Թագավորի մոտ, վերադառնալու Տարոնում, և հիմնում Վիշապ /օձ/ քաղաքը: Հետագայում Վաղարշակը սպանում է եղբայրներին և նրանց բոլոր իրավունքները փոխանցում Կուար, Մեղիտ և Հորեան անուններով նրանց որդիներին: Վերջիններս կանգնեցնում են Գիսանեի և Դեմետրի կուռքերը՝ երկար ծամով և թուխ /հողազույն/ դեմքով:

Մ. Աբեղյանը վերլուծելով այս առասպելը, ենթադրում է, որ Գլակը շփոթել է փաստերը: Նա գտնում է, որ Գիսանեն /,,գիսավոր,,/ եղել է Դեմետր աստվածուհու մականունը: Վերոհիշյալ անձնանունների մեզ հասած ստուգաբանությունը հնարավորություն է տալիս վերականգնել մի շարք նոր ավյալներ: Փոյուզիական դիցարանում Նոդհ -ը Ուրանի և Հերայի /Դեմետրա/ որդին է: Նոդհ -ը Դիոնիսիոս աստծու մականունն է: Դիոնիսիոսն, ըստ առասպելի, հասել է մինչև Հնդկաստան: Ենթադրում ենք, որ այս փաստի մեջ թաքնված է նրա կապը հնդեվրոպական ցեղերի և նախահայերի հետ: Հուս. Կսդհ /,,հերկ, հերկած արտ,,/, Կսս (Կսդհ) /,,որովայն, ըն-

դերք,,/ բառերը ունեն փոքրասիական՝ պելագգյան ծագում: Հմմտ. հայ. հիւս /,,ծամ,,/ հելս, հոսեմ /Ամառյան/: Ըստ Մորտմանի նույն արմատից են հայ. հիւսն, գերմ. Heus /,,տուն,,/, հեռեւաբար նաև՝ հայ. որդ-վայն, հերկ, /,,աշնանացան, աշնանային վար ու ցանք,, , հերք /հերկ/ ,,,ծամ, մազ,, բառերը: Հերկել փաստորեն պետք է նշանակի ,,Մայր հողի վրա գծեր, մազեր քաշել, արորով ակոսել, հերկ հարկանել,,:

Այսպիսով, Գիսանէ անվան մեջ կա ,,անձրև /ջուր/, որը հոսում է ակոսված դաշտում, խմաստը, իսկ ակոսը քաշել է հերկը՝ արորը, խոփը: Ըստ առասպելական մտածելակերպի, այստեղ կա պեղաբերության Per(k) հ.ե. Per(k) ամպրոպի աստուծու և Magna mater /Դեմետր/ հարաբերությունը: Հայ. Կուլար / k'ouaro>kouoro>or / - ,,ծակ, պատուածք, որովայն, որջ,, , հուն. κυαρ ,,որովայն,, , լատ. caverna ,,քարայր,, /Հանուկյան/: Առասպելական այս բոլոր հատկանիշները բնորոշ են Magna mater -ին:

Հորեան /հոր/ ,,Հրհոր, խոր փոս,, , հորել ,,ցորենը մի խոր տեղ թաղել, ամբարել,, , հորոն ,,ցորենի հոր,,: Բոլոր նշանակությունները նորից կապված են որովայնի և ցանքսի՝ որպես ցորենի թաղման ըմբռնման հետ: Հոր փորողը՝ հերկը, խոփը, արորը աղամարդու դիցաբանական խորհրդողանիշ է: Հայ. Մեղաի/մել/, հուն. μελι ,,մեղր,, , μελια ,,հացենի, նիզակ հացենուց,, , μελιχος ,,երգիչ, նվագող,, , Μελιττα /Մելիտենե, Մալաթիա/: Հացենում բնի մեջ մեղուները սովորաբար բույն են դնում: Մեղրի և մեղեղու /,,քաղցր երգ,,/ հասկացությունները կապված են իրար, իսկ Մեղաի կարող է նշանակել ,,երգիչ,, /դրական նշանակությամբ/ և ,,մեղուների, հովանավոր ոգի,, /աստված/ կամ նրա մականուններից մեկը: Մեղուների ուտելիքը մեղրահացն է և ըստ երևույթին երկրագործական համայնքներում հնում հացը նշանակել է ամեն տեսակի ուտելիք:

Վերահիշյալ անձնանունները ըստ առասպելական մտածելակերպի պետք է կապված լինեն միմյանց հետ և հնարավորություն են տալիս ենթադրելու, որ հնում Տարոնը և Մալաթիան եղել են երկրագործական պաշտամունքի կենտրոն, որի գլխավոր աստվածներն էին, մեր ենթադրությամբ, Հերը և Հերիքը /Հերիքնազ/ (Magna mater):

ՃԱԼԵԹԻ ԽՈՒՆՎԱԾՔԸ

Ճալեթը գտնվում է Ադրբեջանական ՍՍՀ Վարդաշենի /պատմական Աղվանքի 'Լապալա գավառ/ շրջանում: Այն Շաքի-Վարդաշենի տարածքի գուտ հայաքնակ միակ գյուղն է: Նրա բնակչության հիմնական մասը բնիկ է, մյուս մասը շրջակա բնակավայրերից, ինչպես նաև Նաչեխից գաղթածներ են:

Ճալեթցիների բարբառը հայերենի ցայժմ չուսումնասիրված ինքնատիպ խոսվածքներից է: Ըստ ձևաբանական դասակարգման այն ըւմ մյուսլի խոսվածք է. ըստ հնչյունաբանական դասակարգման պատկանում է երկաստիճան ձայնեղագուրկ բաղաձայնական համակարգ ունեցող բարբառների խմբին:

Ճալեթի խոսվածքում առկա են ա, օ, ոլ, գ, կ, ք բմային հնչույթները, որոնք հիմնականում ըացատրվում են Ամռոյանի օրենքով: Բացակայում է ը հնչույթը, որի փոխարեն բոլոր դիրքերում հանդես է գալիս ը-ն: Առկա է ը և ի ձայնավորների միջինը հանդիսացող ի հնչույթը, որը հանդես է գալիս հին հայերենի ը, ի, ձայնավորների դիմաց:

Ձայնավորները, որպես կանոն, շեշտափոխական հնչյունափոխության չեն ենթարկվում /համանչկօտ, միլըի, կատուի/: Խոսվածքն ունի յուրահատուկ հնչերանգ: Շեշտը վերջնականային է:

Բոլոր գոյականները հոլովում են միայն ի հոլովմամբ՝ լեցուի, ալեպլըի, կիկի, կնոջ, կիկի, գինու, մաթի, ամաթի, ամառվա, Բացառական հոլովը կազմվում է -ա /երբեմն՝ -իան, -այան, -անիյան/, գործիականը՝ -օ, ներգոյականը՝ -իմի մասնիկներով:

Խոսվածքը հայերենի մյուս բոլոր բարբառներից առանձնանում է խոնարհման համակարգում ունեցած յուրահատուկ յուրեններով: Բացակայում են պայմանական և հարկադրական եղանակները: Դրանց իմաստները համապատասխանաբար արտահայտվում են -օն, -օղ ձևովներով՝ բաղադրված դերբայների և օժանդակ բայի ձևերի միջոցով՝ ասօն էմ, կասեմ, ասելու եմ, կաղթօղն էմ, պիտի կարդամ, կկարդամ, կարդալու եմ,:

Վ.Գ. ԶԻՀԱՆՅԱՆ /Երևան/

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ  
ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հնագույն ժամանակներից Հայկական լեռնաշխարհը եղել է ազգային լեզվական բարդ գործընթացների թատերաբեմ: Դրանց լուսաբանման ուղղու-



թյամբ հնազիտուիթյան, պատմազիտուիթյան և լեզվաբանուիթյան քննազավառում կան որոշակի նվաճումներ, սակայն հնագույն պատմուիթյան թագմաթիվ հարցեր դեռևս անորոշուիթյան քողով են ծածկված: Վերջին շրջանում այդ հարցերի լուսաբանման նպատակով հաժախ են ըննուիթյան առնուում տեղանունները:

Հայկական լեռնաշխարհի հնագույն, սևագիր արձանագրուիթյուններում վկայված որոշ տեղանուններ, հավանաբար, հնդեվրոպական ծագում ունեն: Այստեղ ներկայացվում են դրանցից երեքը:

Ուրարտ. Ahuriani քաղաքանունը /այժմյան Սարիղամիշի շրջանում/ թերևս ծագում է հ.-ե. \*ak<sup>4</sup> - , շուր, խմել, , արմատից: Տևդանունը պահպանված է հայ. Ասուրեան գետանվան մեջ:

Ուրարտ. Seikuni /Seikuni / երկրանունը /հայ. Գեղա/ը/ընունի/, ըստ երևույթին, կառուցվածքային և ծագումնային ընդհանրուիթյուն ունի հուն. Ἑλικών լեռնանվան հետ՝ կապվելով հ.-ե. \*seli-ka- , ,արոտավայր, հովիտ, , նախածին /հ.-ե. \*sel- , ,պտտել, , արմատից/:

Ուրարտ. Alistu /իմ Alistu / քաղաքի անունը /հայ. Ալստի/ հնչյունական, գուցե և ծագումնային ընդհանրուիթյուն ունի Alistos, Alston < Alot (< \*Alot), Alista, Elston, Alette < Alستا, Alst < Alst, Alustu /այժմ՝ Ալուշտա, Ղրիմում/ տեղանունների հետ:

Վերջին երկու տեղանունները / Seikuni, Alistu / հայկական կամ ցեղակից լեզվական ուրարտ են նշում, այնինչ առաջինը, հավանաբար, անատոլիական լեզվական ուրարտի հետ է կապվում:

Լ.Ն. ԶՈՒՆԱՋՅԱՆ /Երևան/

#### ՀՈՒՋԱՅԱՆ ՓՈՒՍԱԳՐՈՒՄԻ ԼԵՋԱՅԱՆ ՆԵՐՆԱՅԱՋՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հոգեկան էրևույթների գիտական ուսումնասիրուիթյան արդյունավետ միջոցներից է ողջակողման կամ նախագիտական հոգեբանուիթյան մակարդակում նրանց լեզվական ներկայացումների քննուիթյունը: Վերջինս, ի լրումն իր օժանդակ գործառույթի, ունի նաև ինքնուրույն գիտական արժեք, քանզի հանրահայտ փաստ է՝ այս մասնապարհով ստացված տեղեկուիթյունները կարող են ոչ միայն հարստացնել հոգեկան երևույթների՝ վերահսկված մեթոդներով իմացուիթյունը, այլ նաև քացահայտել նրանց որակապես նոր կողմեր ու առանձնահատկուիթյուններ: Բանն այն է, որ կենցաղային իմաստուիթյան համակարգում հաժախ արտացոլվում են հոգեբանական ըավականին խրթին երևույթների ներքին էուիթյան հայտնատեսուիթյան փայլատակումներ,

ճրոնք ըստ հարկի զնահատման դեպքում կարող են հուշել նրանց զիտական մեկնաբանության մի շարք հետաքրքրական ուղղություններ: Ասվածը հա-  
կապես ակնառու է փոխադրումի ներուլթի առնչությամբ:

Փոխադրումը /հունարեն *empathoia* < *em-patheo* , ներ-աշ-  
րում, ,/ սահմանվում է որպես այլ անձնավորության հոգեվիժակի հուզա-  
կան հասկացում և ընկալվող հույզերի գործուն վերարտադրություն ան-  
հատի հոգեկանում: Արդի հոգեբանության մեջ տարբերվում են միջանձնա-  
յին փոխհարաբերություններում փոխադրումի երեք տարատեսակներ՝ հու-  
զական, իմացական և վարքային: Առորև կփորձենք խմբավորել հուզական  
փոխադրումի լեզվական ներկայացումները:

Հուզական փոխադրումը հայկական լեզվատածողության մեջ արտացոլ-  
վում է մանել ուրիշի վիժակի մեջ, կարեկցել, ցավեցել, վշտակցել,  
փոխալըել, հուցակցել, ալըուժակցել, բերկրակցել և այլ արտահայտչամի-  
ջոցներով: Այս իմաստով չափազանց բնորոշ է նաև , ,ցավդ տանեմ, , գուժ  
հայկական, խոսակցական արտահայտությունը, որն իր տեղին ու պատճառ-  
բանված գործածության դեպքում ունի հետևյալ հոգեբանական բովանդակու-  
թյունը. փոխադրելով քեզ հեռ, ես ոչ միայն կիսում եմ քո վիշտն ու դը-  
րանով թիթեացնում քո տառապանքները, այլև, որ ավելի կարևոր է, դրանք  
ամբողջապես վերցնում եմ ինձ վրա: Այլ կեպ ասած՝ տառապում ենք ոչ թե  
քեզ հետ միասին, այլ քո փոխարեն տառապում եմ ես:

Հուզական փոխադրումի լեզվական ներկայացումների վերլուծության  
նը հանգեցնում է լեզվամածողության մակարդակում նրա երեք մասնավոր  
ենթատեսակների տարբերակման անհրաժեշտությանը: Առաջին ենթատեսակը նե-  
րառում է բացասական հույզերի փոխադրումի ձևակերպումները՝ կարեկցել,  
ցավեցել, վշտակցել, ալըուժակցել: Ներկրորդ խումբն է կազմում դրական  
հույզերի փոխադրումի միակ արտահայտությունը՝ բերկրակցել: Ներկրորդ  
ենթատեսակը հիշյալ առումով չեզոք է, այսինքն ենթադրում է փոխադրման  
ամբողջական ընթացքը, անկախ փոխադրվող հույզի հոգեբանական մասնավոր  
նշանից՝ մանել ուրիշի վիժակի մեջ, փոխալըել, հուցակցել, ալըուժակ-  
ցել: Վերջիններս իմաստային մասնավոր երանգ են ստանում /որպես կանոն՝  
բացասական/ փոխադրումի որոշակի իրադրության սահմաններում: Ի դեպ,  
վերոհիշյալ տարբերակումը ընդհանուր առմամբ համառոտվում է ժամանակա-  
կից հոգեբանության մեջ միջանձնային փոխադրումի գոյածանրի՝ ըստ փոխ-  
ադրվող հույզի նշանի, դասակարգման հեռ:

Իմաստային տեսակետից փոխադրումին հարակից են նաև , ,գութ, , և  
ինչ-որ իմաստով՝ , ,խիղճ, , հասկացությունները, որոնցից, ըստ Բ. Գ.  
Ղազարյանի /1982/ տվյալների, առավել բարձր համախականություն և տա-

Պատժաժողովուն է վայելում , ,Խիղճը, , /238,43/: Վերջինս բացի ուրիշի տառապանքների ու վշտի նկատմամբ բարեզույթ և կարեկից վերաբերմունքի հանգամանքից, ենթադրում է նաև կարեկցանքի առարկայի թուլության և անլիարժեքության իմաստային նրբերանգը: Վերջինս հաստատում է նաև ըովանդակային-հոգեբանական վերլուծությամբ, քննելի հուզական բաղադրություն և գործընթացային առանձնահատկությունների իմաստով Խիղճը, ի տարբերություն կարեկցանքի, քննությանը վերաբերում է հոգեբանական միանգամայն այլ հատկություններով: Կարեկցանքի և Խիղճի նմանօրինակ մեկնաբանություններ ենք գտնում նաև Փրանսերենում, անգլերենում, գերմաներենում և իտալերենում: Հետաքրքրական է, որ առաջարկվող հոմանիշների իմաստային դաշտերի առումով հայերենին առավել մոտենում է Փրանսերենը: Սակայն, հօգուտ հայերենի, պետք է ասել, որ կարեկցանքի հոմանիշների քանակով այն գերազանցում է բոլոր մեզ հայտնի լեզուները: Ըստ Ա. Սուքիասյանի տվյալների, կարեկցանքի հոմանիշները հասնում են 23-ի: Մնում է միայն փսոսալ հայերենի այդ հարուստ արտահայտչամիջոցների ցածր համախառնություն համար:

Ա.Ս. ՍԱՐԳՍՅԱՆ /Երևան/

#### ՀՈԴԱԿԱՊԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Տարբերակներ են համարվում միևնույն բառի հնչյունական /ձևական/, բառակազմական ու ձևաբանական զուգահեռները: Ժամանակակից հայերենում բառակազմական տարբերակներից ամենագործունը հողակապային տարբերակներն են: Այդ տարբերակների առկայությունը բացատրվում է լեզվի կառուցվածքային հնարավորությունների բազմազանությամբ, համաբանական գործոնի ազդեցությամբ, իմաստային հստակության, արտասանական միասնության հանելու ձգտումով, գեղարվեստական ստեղծագործության, հատկապես չափածո խոսքի պահանջներով /հանգի, վանկաքանակի, բարեհնչյունություն պահպանում/ և այլն:

Հայերենի ամենակենսունակ հողակապը ա ժայնավորն է: Մի շարք բարդությունների մեջ հողակապի դերով հանդես է գալիս ե ժայնավորը, որոշ բարդությունների մեջ հողակապին հարում են և, ու շաղկապները: ե ժայնավորը տարբեր կազմություններում ունի տարբեր ծագում. ա/ մի շարք բարդություններում այն առաջանում է նախորդ բաղադրիչի ի ժայնավորի և ա հողակապի միավորմամբ՝ ի+ա/յա/ե. ալգի+ա+գործ ալգեգործ, բարեկամ, բ/ որոշ կազմություններում այդ ե-ն ածական բաղադրիչի յա կամ ե ածանցն է. դափնե պսակ դափնեպսակ, ոսկեծամ, բրնձագալ, գ/ կրկնավոր



ներում՝ գորարդյան բացառական հոլովի ցուցիչն է. սաղեսաղ, պատեպատ: Տարբերակային ձևերն առաջանում են նշված կազմովյունների համադրանու-  
թյամբ. հմտ. ծաղկեփոշի, հաշվեցետ, բրնձեծուլ, փայտեցուլ, ալցե-  
ցին, ալծեմագ: Նկատվում է նաև հակառակ երևույթը, երբ ե-ով ձևերն  
են ենթարկվում ա-ի համադրանական ազդեցությանը. հմտ. վշապսակ, դավ-  
նատերև, նոժագեղ, փոշապատ և այլն:

Միևնույն բաղադրիչներից բաղկացած հոդակապերով ու անհոդակապ  
տարբերակները որպես կանոն իմաստային տարբերություններ չունեն: Կազ-  
մովյունների գերակշիռ մասում տարբերակումը ձևական է. հմտ. երես-  
պատում // երեսապատում, քարգործ // քարագործ, ջրթափ // ջրաթափ, երկ-  
խոտովյուն // երկախոտովյուն: Իմաստային տարբերակում նկատվում է  
միայն առանձին դեպքերում, օրինակ՝ հողքածին /հիմնարկ/ և հողքածին  
/հողակտոր/, ջրծաղիկ /հիվանդություն/ և ջրածաղիկ /ջրափերին բուսնող  
ծաղիկ/, թռչնորդ /թռչուն որսացող մարդ/ և թռչնաորդ /թռչունի որս/  
և այլն:

Հոդակապի գործածության տատանումներ նկատվում են ինչպես բաղա-  
ծայն, այնպես էլ ձայնավոր հնչյուններից առաջ՝ հիմքերի և հիմքերի ու  
անանցների միջև: Այդ տատանումները համախ կազմում են տարբերակային  
շարքեր. ջրեկտ//ջրեկտ, ջրհամպ//ջրհամպ, ջրաթափ//ջրնափ. քար-  
հանք//քարհանք, քարադոդոշ//քարդոդոշ, երկանիշ//երկնիշ, երկաչետու-  
թյուն//երկչետություն, ջրոսպ//ջրաոսպ, ջրօգտագործում//ջրօգտագոր-  
ծում, կիսեփ//կիսաեփ, կիսաստված//կիսաստված. բազմօղակ//բազմօղակ,  
բազմուղորդ//բազմաուղորդ և այլն:

Հոդակապի գործածության տատանումներ նկատվում են նաև փոխառյալ  
բարդություններում: Դրանք բաժանվում են երկու ենթախմբի: ա/ Կազմու-  
թյուններ, որոնք զրական լեզվում հանդես են գալիս ա-ով /որը կարող է  
լինել հայերենի ա հոդակապը կամ փոխառյալ սկզբնաբաղադրիչի ա վերջնա-  
հնչյունը, հմտ. գազատուրքին, գազացենեղատոր, էլեկտրաներգիչ, էլեկ-  
տրահաշվիչ, էլեկտրաազդեցառ, ավիակոնստրուկտոր, ավիամեխանիկ: Ա հո-  
դակապով միավորվող փոխառյալ այդ բարդությունները ենթարկվում են ի-  
մաստակիր միավորների կապակցման հայերենի օրինաչափությանը: բ/ Կազ-  
մություններ, որոնք բաղադրիչները միավորվում են ո-ով, որը կարող է  
լինել բարդության կազմում փոխառյալ հոդակապը կամ սկզբնաբաղադրիչի  
ձայնավոր վերջնահնչյունը, որ գիծակցվում է որպես հոդակապ. հմտ.  
տեխնոլոգ, միկրոսկոպ, մագնիսոտն, ֆիլմոսկոպ, գինկոգուլ, սեյսմոլոգիա  
լինոգրամյունը և այլն: Ա. ենթախմբի մեջ մտնող կազմություններում  
ո-ով անհանձնարարելի ձևերի առկայությունը /ավիոմոդելիստ, ավիոկոնս-

տրուկատր, էլեկտրոմոբիլ, էլեկտրոցանց, զագոտուրքաքարշ, էներգոմատակարարում և այլն/ բացատրվում է Բ. Ենթախմբի մեջ մտնող բարդությունների համաբանական ազդեցությամբ և նորմայի անբավարար մշակմամբ:

Հայերենի բառակազմական կանոնների համաձայն՝ ծայնավորով սկսվող հիմքերից առաջ հոդակապ չի դրվում: Սակայն այս կանոնը բացարձակ չի գործում: Ներկայումս նկատվում է այդպիսի կազմությունների հոդակապով գործառնության աշխուժացում. ենթաանտառ, համաերկրացի, ինքնաարտահայտում, ինքնատուրացություն, նախամուսնական և այլն, որոնք հանձնարարելի չեն: Մի շարք բարդություններում /առավելապես վերջին շրջանում կազմված/ ծայնավորով սկսվող հիմքերից առաջ հոդակապ է դրվում. Ջրադային, ստամոքսաաղիքային, հաեիկառնդեդեն, բազմախլային, նպատակաուղղում, ռազմաօդային և այլն: Այսպիսի կազմությունները կանոնական են: Ե և ղ տառերով սկսվող հիմքերից առաջ հոդակապի առկայությունը բացատրվում է բառամիջում նույնպես դրանց երկհնչյուն արտասանությունը պահպանելով և իմաստային հստակության հասնելու պահանջով. հմմտ.՝ շաքարառուրո, բազմաոմ, երջաոմ, ակնառոպայակ, գորաերթ, բազմաերթային, կիսաեցընտանիք և այլն:

Ն.Ժ. ՍԱՐԳՍՅԱՆ /Երևան/

#### ԲԱՑՑՈՂՈՒՄՆԵՐԸ ԱՌՕՐՑԱ ԽՈՍՔՈՒՄ

Բացթողումները հաղորդակցության բաղադրության մեջ մտնող, բայց լեզվական դրսևորումներ չստացած երևույթներ են: Դրանք շատ են տարածված նաև գրական հայերենում, բայց այդ տեսակետից հատկապես աչքի է ընկնում առօրյա խոսքը: Դա ընդուն է իրադրության հետ ունեցած կապի սերտությունից:

Հայ լեզվաբանական գրականության մեջ բավականաչափ լավ են ուսուցանասիրված գրական լեզվի սահմաններում գործառող տարածեսակ զեղչումները, իսկ առօրյա խոսքի բացթողումների մասին նույնը չի կարելի ասել:

Բացթողումները սովորաբար կապվում են տնտեսման օրենքի հետ, պայմանավորված են խոսքի և իրադրության փոխադրություններով: Ըստ աղմ էլ իրադրության տարբեր տեսակները /խոսքաշար, զգայական միջավայր, հաղորդակցության նախորդող իրադրության իմացություն և ընդհանուր պատրաստականություն /կարող են ինչպես ընդունվել տարբեր, այնպես էլ նույնատեսակ բացթողումների պատճառ դառնալ: Որոշ բացթողումներ էլ պարզապես կարող են բարդ իրադրությունների արդյունք լինել:

Բացթողումները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ ա/շա-  
րահյունական, բ/իմաստային: Առաջինները կապվում են խոսքի շարահյու-  
սական կառուցվածքի հետ և դրսևորվում են որպես նախադասության այս  
կամ այն անդամի բացակայություն: Բոլոր տեսակի շարահյունական բաց-  
թողումները միավորվում են այն ընդհանուր հատկանիշով, որ կալիելի է  
ենթադրել ոչ միայն դրանց իմաստը, այլև ճերականական ձևավորումը:  
Այդ պատճառով էլ դրանք հնչողությամբ վերականգնվում են:

Իսկ իմաստային բացթողումները ազդանշում են միայն իմաստը,  
բայց թե բառային կամ ճերականական ինչ մասնավոր դրսևորում պիտի ու-  
նենա այն, դժվար է ասել: Այսպիսի դեպքերում վերականգնումը կարող  
է իրագործվել զանազան տարբերակներով: Համախ էլ, եթե իրադրությունն  
անհայտ է, այդ վերականգնումն անհնարին է դառնում:

Առհասարակ բացթողումները լեզվական դրսևորում ստացած միավոր-  
ներում կարող են ունենալ իրենց ցուցիչները, այսինքն, ավյալ արտա-  
հայտության մեջ արդեն գործածված լեզվական միավորները կարող են հու-  
շել, թե ինչ կարգի բացթողումներ են կատարված /օրինակ, ստորոգյալը  
կարող է հանդես գալ որպես ենթակայի կամ ստորոգյալի տարբեր լրացում-  
ների բացթողումն ազդանշող ցուցիչ/: Այդպիսի բացթողումները հատկա-  
պես շատ են երկխոսություններում, հարց ու պատասխանական ուղղիկնե-  
րում, զննատողական արտահայտություններում:

Ս.Ս. ՍԱՐԳՍՅԱՆ /Երևան/

,,ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ,, ԼԵՋՈՒՆԵՐԻ  
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՑՈՒՄ

Յոթնասուական թվականներից սկսած անգլերենի դասավանդման մե-  
թոդիստների ուշադրության կենտրոնում է գտնվում սովորողի անհատակա-  
նությունը:

Այսպես կոչված ,,մարդասիրական մոտեցումը,, ներկայացվում է ե-  
րեք մեթոդներով՝ խմբային /համայնքային/, լուռ և ներշնչական:

Անհատական մոտեցումը ենթադրում է սովորողի անկախություն և  
ինքնուրույնություն: Սովորողը զասնթացից ընտրում և յուրացնում է  
այն, ինչը համապատասխանում է իր գործնական նպատակադրվածությանը,  
ինչը խթանում է նրա ստեղծագործական գործունեությունը: Սովորողներն  
այս կամ այն վարժությունները կատարում և խնդիրները լուծում են՝ կի-  
րառելով իրենց սեփական տարբերակները, յուրովի մեկնաբանելով առաջա-  
դրանքը, որ երբեմն հանց իրենք էլ կազմում են:



Վերոհիշյալ մեթոդների տարբերություններն ուսուցման ընթացքի մեջ են. Որոշ երևույթներ, ինչպես օրինակ սովորողի անկախությունը և ինքնուրույնությունը, հակասական բնույթ են կրում: Այսպես՝ լուռ մեթոդով ուսուցման ժամանակ սովորողն ամբողջությամբ կախման մեջ է զանվում դասավանդողից: Դասընթացի կառուցվածքն առաջադրում է ոչ թե սովորողը, ինչպես դա արվում է խմբային /համայնքային/ մեթոդի դեպքում, որտեղ դասատուն տեղեկություն տվողի, խորհրդատուի դերում է և միայն թարգմանում է այն, ինչ տվյալ պահին ուզում է իմանալ սովորողը, այլ դասավանդողը: Սրանով իսկ խախտվում է ,,մարդասիրական մոտեցման,, հիմնական սկզբունքը՝ դասավանդումը ուսուցմանը ենթարկելու սկզբունքը:

Լեզուների ուսուցման ժամանակակից մեթոդների հոգեդինամիկական մեկնաբանությունը հետևյալն է. Լեզուն մարդկանց միջև գոյություն ունեցող նպատակաուղղված վարքագծի և հարաբերությունների ձևերից մեկն է: Մեծ արդյունքի կարելի է հասնել խաղի բարեկամական մթնոլորտում, որտեղ ընկալողական ուսուցման նախապայմանը փոխադարձ նվիրումն է. ,,շահագործում,, չկա և սովորողներն իրենց բաժինն են ներդնում ուսուցման գործընթացում՝ այն դարձնելով հնարավորին չափ հետաքրքիր:

Ա.Վ. ՍԵՂՈՍՅԱՆ /Երևան/

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՆԳԱՔԱՆԱՆ  
ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Հայերեն քաղաքական տերմինաբանությունը ձևավորվել է դեռևս նախազրային շրջանում: Հետագայում այն շարունակ համալրվել է ու կատարելագործվել, առանձնապես մեծ տեղաշարժեր կրելով հատկապես հայկական պետականության գոյության ժամանակաշրջաններում: Այնուհանդերձ ժամանակակից հայերենի քաղաքական տերմինաբանությունը իր հիմնական մասով վերջին հարյուրամյակի ծնունդ է:

Ժամանակակից հայերենի քաղաքական տերմինաբանության ակունքները քննելով կարելի է առանձնացնել տերմինների հետևյալ խմբերը.

ա. Հայերենի զարգացման նախորդ փուլերից ժառանգորդաբար ստացված տերմիններ, որոնք հիմնականում նույն նշանակությամբ գործածվում են և այսօր /պետություն, տերություն, դաշինք, օրենք, հաշտություն և այլն/:

բ. Հայերենի քաղաքական հիմքի վրա բաղադրված նոր տերմիններ, ընդ որում՝ պատմեցումներ /ռազմաժող, պայմանագիր, պառզամպոր, ազատագրել, աշխարհակալ, վարչակարգ, կայսերապաշտ և այլն/:

գ. իմաստափոխության քաղաքական տերմինների վերածված հայերեն բառեր /ցուցում, բանաձև, որոշում, նախագիծ, դոկւաց, թեքում, շերտավորում, աշխատավոր, կարգ, մառ, դաս, խավ և այլն/:

դ. նորագույն փոխառություններ.

1. Ներքին փոխառություններ, հիմնականում զրաբարից և միջին հայերենից, հազվադեպ՝ բարբառներից /հրովարտակ, ի ցույց, համհարգ, պատվիրան և այլն/:

2. Արտաքին փոխառություններ /սովետ, կոմունիզմ, սոցիալիզմ, միսիստր, խուստա, մաֆիա և այլն/:

Ժամանակակից հայերենի քաղաքական տերմինաբանությունը, կյանքի հարաժուռ պահանջներին համընթաց՝ շարունակում է համալրվել ու կատարելագործվել: Իբրև ամենից կենսունակ ակունք ծառայում է հայերենի բառակազմական հիմքի վրա նոր կազմությունների առաջացումը: Կենսունակ են նաև իմաստափոխության և փոխառության միջոցները, ընդ որում արտաքին փոխառությունները մեծ մասամբ միտում են ունենում ժամանակի ընթացքում փոխարինվելու հայերեն համարժեքներով:

Ս.Լ.ՍԻՄՈՆՅԱՆ, Հ.Վ.ՄԱԴՈՅԱՆ /Երևան/

#### ԲԱՌԻՄԱՍՏՆԵՐԻ ԶԵՎԱԿԱՆ ՆԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Բառային իմաստաբանությունը կարող է ներկայացվել թյակիսի մի համակարգի ձևով, որը կառուցվածքը բնորոշվում է վեցօղակի օրենքով: Սա նշանակում է, որ լեզվի հիմնական բառապաշարի երկու պատահական բառերի միջև գոյություն ունի հինգ միջանկյալ օղակներով իրականացող իմաստային կապ:

Միջանկյալ օղակների թյա քանակը պայմանավորվում է յուրաքանչյուր բառի իմաստը որոշելու համար քավարար իմաստային հատկանիշների թվով. բառերը կարող են կապվել բառարանային իմաստների, բացառություններում առկա ընդհանուր բառերի, գույնագրությունների շղթայի միջոցով:

Բառապաշարի իմաստային համակարգի հիմնական տարրը բառիմաստային դաշտն է: Այն դիտվում է որպես ընդհանուր տարբերակիչ հատկանիշ՝ միջուկային իմաստունյթ ունեցող մենիմաստ բառերի մի խումբ: Միջուկային իմաստունյթը հանդես է գալիս որպես դաշտի անուն և առանձնացվում է բառի բացատրությունը իմաստային բաղադրիչների տրոհելիս:

Քանի որ բառիմաստային դաշտը զաղափարագրական բառարանում համապատասխանում է բառահոլվածին, ապա բառերը թյակիսի բառարանում կա-

րելի է քննորոշել իմաստույթների հավաքածուով. իմաստույթներին մեկը /դաշտի անուկը/ միջուկային է:

Եթե հաշվի չառնվեն հատկանիշների անունները, ապա բառի պատկանելությունը դասին կամ ըզգմունքյանը /կամ, որ նույնն է, բառի , տեղը, , զաղափարագրական բառարանում/ ընդհանրապես որոշվում է ոչ թե հատկանիշներով, այլ դրանց արժեքների ամբողջությամբ: Քանի որ հատկանիշի արժեքը պայմանավորված է նրա իրազեկային արժողությամբ, հատկանիշի արժեքը հակադարձ համեմատական հարաբերության մեջ է նրա համախանության հետ:

Առաջարկվող կառուցվածքով զաղափարագրական բառարանի որոնողական սարքի վերլուծությունը հնարավորություն է տալիս այն կազմելու մեքենայի օգնությամբ: Մեր կողմից առաջարկվում է զաղափարագրական բառարանի որոշակի տվյալների հիմքի վրա ստեղծվող իրազեկիչ-սեղեկատու համակարգ, ուր բառի որոնումը կատարվում է հատկանիշների տարբեր արժեքների սկզբունքով:

Ռ.Հ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ /Երևան/

